

Գ. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ

ՄԱՐՔՍԻԶՄԻ
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

Պ Ե Տ Հ Հ Բ Ս

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1989

ԽՍՀՄ Գ-Ի ՏՈՒՐ-ԹՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԽԱՍՏԻՑՈՒՑ

Գ. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ

ՄԱՐՔՍԻԶՄԻ
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ, 1939

Հենիքիւմ—Սատալինի կուսակցությունը, քննադատորներն ընդհանրացնելով համաշխարհային կուլտուրայի և գոսակարգային պայքարի մեծ փորձը, ընդունում ե հեղափոխական թեորիայի աչքի ընկնող գերը՝ ամենամեծ վարպետությամբ կենսադործելով զիտական կոմունիզմի սկզբունքները:

Հասարակական գիտությունների պատմության մեջ առաջին անդամը բոլչելիների մեծ կուսակցությունն եր, վորհենվելով համաշխարհային գիտության ու կուլտուրայի բոլոր նվաճումների վրա, սահմանեց կոմունիզմի կառուցման կոնկրետ ուղիները, ձևերը, միջոցներն ու պատմական ժամկետները։ Այդ հասարակության մասին, փորտեղ ժողովուրդների բախար փորոշում և նրանց պլանաշափ, գիտակցական գործունեյությամբ, փորաեղ ամբողջ հասարակական հարստությունը գտնվում է ժողովրդի տրամադրության տակ, ուշուագործվում է նրա բարիքի համար, —յերազում ելին մարդկային կուլտուրայի ամենաառաջավոր ներկայացուցիչները այդ կուլտուրայի զարգացման բազմադարյան ակտության ընթացքում։ Այժմ այդ յերազանքներն իրականություն են դարձել, վորհենական գործունեյության մասնակի վրա կենսական գործունեյության մեջ հայրենիքի միջնական աշխատավորները։

Դրա համար ե, վոր ամբողջ պլոտքը եսիլ և առաջալոր մարդկությունը այնքան սեւսակի ուսումնասիրում և բոլ չեիկների կուսակցության՝ հանուն սոցիալիզմի հաղթության մղած իդեալական և քաղաքական պայքարի փորձը։ Դրա համար ե, վոր այնքան մեծ և մարդօսիստական-լենինյան կուսակցության աշխարհայացքի—դիմուլիկտիկական մատերիալիզմի—ձգողական ուժը։

Դիալեկտիկական մատերիալիզմը տալիս է որյեկտիվ
աշխարհի զարդացման և խմացության ընդհանուր որենքների



Г. АЛЕКСАНДРОВ ФИЛОСОФСКИЕ ПРЕДШЕСТВЕННИКИ МАРКСИЗМА

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

միակ հետեւղական, խստորեն դիտական, բարեկազմ, համակողմանի պատկերը:

Միջազգային բանվորական շարժման առաջնորդներ Անդրեյ Ստալինը Համկ(թ)կ զարդացման և պայքարի մեծ փորձով, ԽՍՀՄ-ում սոցիստիստական հասարակության կառուցման և միջազգային կոմունիստական շարժման զիկավարության փորձով ցույց տվին, վոր մարդկությանը ծառայելու կոչված հասարակական զարդացման որննքների իսկական մարզսիստական գիտությունը բանվոր դասակարգի կուսակցությունը հպոր և անպարտելի յե դարձնում:

«Մարզսիստական-լենինյան թեորիայի ուժը կայանում և նրանում, վոր նա կուսակցությանը հնարավորություն և տալիս՝ կողմնորոշվելու իրադրության մեջ, ըմբռնելու շրջապատճ գեղքերի ներքին կապը, նախատեսելու գեղքերի ընթացքը և ճանաչելու վո'չ միայն այն, թե ինչպես և դեպի ուր են զարդանում գեղքերը ներկայումս, այլև այն, թե ինչպես և դեպի ուր են զարդանում գեղքերը ներկայումս, մեծապէս աղաղայում»:

Մարզսիստական-լենինյան թեորիային տիրապետած կուսակցությունը միայն կարող ե վատաշորեն առաջ շարժվել և առաջ տանել բանվոր դասակարգին:

Յեզ, ընդհակառակը, այն կուսակցությանը, վորը չի տիրապետել մարզսիստական-լենինյան թեորիային, ստիպված ե խարխափելով թափառել, կորցնում ե վատաշուած գեղքի իր զործողությունները, անընդունակ ե բանթյունը գեղքի իր զործողությունները, անընդունակ ե վոր դասակարգին առաջ տանելու»:

Այդպիսի թեորիա յե հանդիսանում մարզսիզմ-լենինիզմի թեորիան, վոր կուել են Մարքսն ու Ենդելու, Լենինն ու Ստալինը բանվոր դասակարգի թշնամիների գեմ մղած համառ մարտելում, վոր ստուգված ե թեորիական և գիտական վիթխարի նյութով:

Քննադատաբար, ստեղծագործորեն Հաղթահարելով նախկին գիտափայական և սոցիոլոգիական թեորիաները, Մարքսն ու Ենդելու նոր գիտափայական աշխարհայացքի

մշակումը դիտում եյին վարպետ կարևորագույն ինդիբը անմիջական կուսակցական աշխատանքի ընազավառում, այսպիսի, Հեղափոխական կուսակցություն կառուցելու ընազավառում, վորն ընդունակ լինի բաննոր դասակարգին հաղթության հասցնելու կատվախալզմի դեմ: Բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցություն կազմակերպելու հարցը Մարքսն ու Ենդելու անքակտելիորեն կապում եյին այլ կուսակցության իգեոլոգիայի մշակման հետ:

Պայքարելով բանվոր դասակարգի հետևողական-հեղափոխական կուսակցություն ստեղծելու համար՝ Մարքսն ու Ենդելու, Հենվիլով մարդկության կուսակած ամբողջ գիտության վրա, ընության և մարդկային հասարակության զարդացման նոր ըմբռնում մշակեցին: Մարքսն այդ նոր աշխարհայացքի մասին զլում եր, թե նա ամբողջ առաջավոր մարդկությանը «պայքարի խական լողունդ» ե տալիս: Լենինն ու Ստալինը ըուշենիկների մեծ կուսակցության պատմության փորձով ցույց տվին այդ թեորիայի ճշտությունը, պատմական ճշմարտությունը, մեծագույն ակտիվությունն ու կենսականությունը:

Համկ(թ)կ ԽVIII համագումարը, Հենվիլով մարզսիզմ-լենինիզմի կլասիկների ուսմունքի վրա, սոցիալիզմի մեծ յերեսի ժողովրդին՝ կոչ արեց ամելի ևս տիրապետելու անցած դարերի կուլտուրայի, արդի գիտության ու ներկայի կապական, պրոցեսիվ նվաճումներին՝ այդ նվաճումներին և սպաս զնելով կոմունիզմի հաղթական կառուցմանը:

Բնկ. Մոլոտովը ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարդացման յերրորդ հնդկայա պլանի մասին կուսակցության ԽVIII համագումարում արած զեկուցման մեջ բացահայտեց մարդկության անցյալ կուլտուրական նվաճումների հակայական նշանակությունը կոմունիզմի կառուցման համար. «կոմունիզմը յուրահատուկ ձևով ե վերաբարել այդ ըուրը արժեքներն ու նվաճումները, — բայց վո'չ թե հասարակության վերնախառների ոգտին, այլ ամբողջ ժողովրդի և մարդկության ոգտին: Հարկավոր ե, առանց ուժերը խնայելու, ունությանափերել կուլտուրական ժառանգությունը: Հարկավոր ե այն լրջորեն և խորապես գիտենալ: Հարկավոր ե ոգտագործել այն ամենը, ինչ վոր ամել ե կա-

1 Համկ(թ)կ պատմության համառոտ դասընթաց, Հայ. Հբառ., էջ 477, 1938 թ.:

պիտակիզմը և մարդկության նախորդ պատմությունը, և բազմաթիվ դարերի ընթացքում մարդկանց աշխատանքով ստեղծված ալյուսներից նոր չենք կառուցել, —Հարմար ժողովրդի կյանքի համար, ընդարձակ, լուսով և արևով լի»¹:

Այս յերենի մարդուստական դրույթները՝ անցյալի կուլտուրային տիրելու մասին, ամրողութիւն բղխում են լենինյան ուսմունքից այն մասին, թե հատկապես բանվոր դասակարգն և հանդիսանում այն ամեն լավագույնի որինական ժառանգը, վոր ստեղծվել է զիտության, փիլիսոփայության, կուլտուրայի պատմության մեջ. այն դրույթից, թե մարքսիզմն աճել և վրաբես մարդկության ստեղծած բոլոր առաջավոր իդեաների, մարդկային հասարակության համարհային զարգացման ամրող փորձի ընդհանրացում։ Մարքսիզմը, —դրում եր լենինը, —առաջ և յեկել վո՞չ թե համաշխարհային դիտության և քաղաքակրթության զարգացման մեծ ճանապարհից մեկուսի ընկած, այլ վորպես այդ գիտության ու քաղաքակրթության անմիջական շարունակությունն ու զարգացումը։

Ստեղծելով բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցության աշխարհայացքը՝ Մարքսն ու Ենդելսը քննադատաբար, ստեղծագործականորեն, հեղափոխականորեն ընդհանրացրին ու զարգացրին անդիմական քաղաքատնտեսության, Փրանսական ուստուպիսական, սոցիալիզմի և գերմանական կլասիկ փիլիսոփայության իդեալական նվաճումները։

«Համկ(ր)կ պատմության համառոտ դասընթացի» չորրորդ դիմում ցույց ե տրված, վոր Մարքսը քննադատաբար և ստեղծագործականորեն հաղթահարեց Հեղելի փիլիսոփայությունը՝ վերցնելով նրա դիմակալուկայից լոկ նրա «ուսցիսնալ հատիկը», դեն չպրտելով Հեղելյան իդեալիստական կեղեւ, ավելի ևս զարգացնելով դիմակալուկան, տալով նրան արդիական գիտական կերպարանք։

Ի՞նչն եր, վոր Հեղելի փիլիսոփայությունը դարձնում եր մարքսիզմի իդեալական աղբյուրներից մեկը։ Այն, վոր այդ փիլիսոփայությունը հանդիսանում եր ամրող նախորդող գիտական և փիլիսոփայական զարգացման հոյակապ հանրա-

գումարը, վոր Հեղելյան դիմակալուկան, թեպետև խեղաթյուրված ձեռվ, այնուամենայնիվ ներկայացնում եր «ամենահամակողմանի, բովանդակալից և խոր ուսմունքը զարդացման մասին...»¹, վոր Հեղելը, թեպետև անգիտակցարար, մեզ ցույց ե տալիս այն ուղին, վոր սխտեմների լարիբինթուից տանում ե դեպի աշխարհի իսկական և դրական իմացությունը։ Հենց «Հեղելի փիլիսոփայության այս, հեղափոխական կողմն ըմբռնեց ու զարգացրեց Մարքսը»²։ Յեկ չնայելով Հեղելի՝ Մարքսի վրա ունեցած անվիճելի աղդեցությանը, Մարքսի դիմակալուկան Հեղելի դիմակալուկայի հակադրությունն եր։ Մարքսը մատերիալիստ եր, Հեղելը՝ իդեալիստ։ Մարքսը քննադատաբար, ստեղծագործականորեն հաղթահարեց Հեղելի ուսմունքը և ստեղծեց բանվոր դասակարգի և նրա կուսակցության փիլիսոփայությունը՝ դիմակալուկան մատերիալիզմը։

Պրակտիկ հեղափոխական պայքարը, վոր մղում եյին Մարքսն ու Ենդելսը անցյալ դարի 40-ական թվականների սկզբին, մարքսիզմի հիմնադիրներին դրդեց քննադատելու Հեղելի իդեալիստական դիմակալուկան և քննադատելու հին մետաֆիզիկական մատերալիզմը, մասնավորպես Ֆոյերբախի մատերիալիզմը։

Մարքսն ու Ենդելսը խանդավառությամբ վողջունեցին Ֆոյերբախի մատերիալիստական յերկերի լույս տեսնելը անցյալ դարի 40-ական թվականներին, յերկեր, վորոնք մեծ «աղատագրական աղդեցություն» ունեցան։ Բայց միաժամանակ նրանք քննադատում եյին Փոյերբախյան մատերիալիզմի արտարկտ, հայեցական, մետաֆիզիկական և անհետողական բնույթը և Ֆոյերբախի իդեալիզմը պատմության բնադավառում։

«Համկ(ր)կ պատմության համառոտ դասընթացում» դիմակալուկան մատերիալիզմի, բանվոր դասակարգի ու նրա կուսակցության հեղափոխական, դիմական աշխարհայացքի ծագումը պատմական կապակցության մեջ և դրված Մարքսի ու Ենդելսի նախորդների՝ դերմանական փիլիսոփա-

¹ Լենին, Հատ. XVIII, էջ 10:

² Նույն տեղում, էջ 11:

ներ Հեղելի և Թոյերբախի—վիլխովիայական ուսմունքի դրական, առաջազդիմական կողմերի հետ: Համառոտակէք քննարկենք նրանց հայացքների եյությունը և նրանց ուսմանքների քննադատական ուժապարծման դժույթը մարքուզմբ Շըմնադիրների կողմից:

I. ՀԵԳԵԼԻ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ «ՄԱՅԻՆԱԼ ՀԱՍԻԿԻ» ՄԱՍԻՆ

«Իրենց գիտելելուկական մեթոդը բնորոշելով, Մարքսն ու Ենդելսը սովորաբար վկայակոչում են Հեղելին, վորպես մի վիլխովայի, վորը ձեակերպել և դիալեկտիկայի հիմնական գծերը: Սակայն այդ չի նշանակում, թե Մարքսի ու Ենդելսի դիալեկտիկան նույնական է Հեղելի դիալեկտիկային: Իրականում Մարքսն ու Ենդելսը Հեղելի դիալեկտիկայից վերցրել են նրա միայն «ռացիոնալ հատիկը», դեռ դցելով Հեղելյան իդեալիստական կեղելը և շարունակելով զարգացնել այդ դիալեկտիկան՝ նրան արդիական դիտական տեսք տալու համար»¹:

Վո՞րն եր Հեղելի դիալեկտիկայի այդ «ռացիոնալ հատիկը»:

Գերմանական վիլխովիա Գեորգ-Վիլհելմ-Ֆրիդրիխ Հեղելը (1770—1831 թ.թ.) ավարտի հասցրեց բուրժուական վիլխովիական մտքի զարգացումը: Նա ապրում եր այն ժամանակաշրջանում, յերբ յեփրոպական յերկրների մեծամասնության մեջ արգեն տեղի եյին ունեցել բուրժուական Հեղափոխություններ: Գերմանիան այն ժամանակի հետամուց մի յերկիր եր Ֆրանովայի և Անդլիայի համեմատությամբ, նա մասնաւուած եր վիթխարի քանակությամբ մանր և խանությունների, նրա արդյունաբերությունն ու առեւտրը հետամուց բնույթ եյին կրում: Գերմանական բուրժուագիան անկազմակերպ եր և յերկշուու: Նու համաձայնություն եր վիճակում պրոցական ժխապետության հետ՝ ժողովրդի գեմ պայքարելու համար: Այդ պայմաններում գերմանական բուրժուազիայից և ինտելիցիանցիայից յելած ա-

¹ Համբ(բ)կ պատմության համառուս դասընթաց, եջ 140:

ռաջավոր մարդկիկ յելք եյին վորոնում վո՛չ թե Գերմանիա-
յի իսկական, արագ, վճռական վերափոխության մեջ, այլ
փիլիսոփայական վերացական կառուցումների մեջ, վորոնք
շարունակում եյին, ըստ Մարքսի արտահայտության, գեր-
մանական պատմությունը փիլիսոփայի գանգի ներքո:

Ենդելոն ասում եր, թե «XIX դարի Գերմանիայում փի-
լիսոփայական հեղափոխությունը իրրե ներածություն ծա-
ռայեց քաղաքական խորտակման համար»: Հատկապես փի-
լիսոփամներն եյին, վորոնք, Ենդելոի խոսքերով, բացարձակ
թերթիական պատերազմ եյին մղում խավարածության և
յեկեղեցու դեմ և Հեղելի պեղանտական խոսքերի մեջ, ան-
ձոռնի, տաղտկալի պարբերություններում հեղափոխություն
եր թագնված:

Հեղելի առաջադիմական իդեաների վրա մեծ ազդեցու-
թյուն գործեց 1789 թվի Ֆրանսական բուրժուական հեղա-
փոխությունը: Հեղելի ուսման, ասլա նաև ինքնուրույն
հրապարակախոսական, գիտական և մանկավարժական գոր-
ծունելության ժամանակաշրջանը գուշագիտեց Նոտարիների
ժողովի հետ Ֆրանսիայում, Ազգային ժողովի հրավիրման
հետ: Ֆրանսական հեղափոխությունը վիթխարի ազդեցու-
թյուն գործեց նաև գերմանական փիլիսոփայության, գրա-
կանության և գեղարվեստի վրա:

Այն տարիներին, յերբ Հեղելը սովորում եր Շտուտգար-
տում, Լեսինգը հրատարակում է իր «Եմիլիա Գալուտին»,
իսկ 1779 թվին հրատարակում է «Նաթան Իմաստունը»:
Միենույն ժամանակ մի շաբք յերկերով հանդես է գալիս
Գյոթեն. Շելլերը գրում է «Ավագակները», Կանոք հրատա-
րակում է «Զուտ բանականության քննադատությունը»: Այդ
իսկապես վոր «Փոթորկի ու Գրոհի» դարաշրջան եր թեո-
րիայի և գրականության բնագավառում:

Հեղելը կլասիկական գիմնազիայի դիրեկտոր եր Նյուրն-
բերգում, իսկ 1816 թվին գրավեց փիլիսոփայական ամբիոնը
Հայդելբերգի համալսարանում: Հայդելբերգում նա յերեք
տարի անցկացրեց (1816—1818), պատրաստելով իր գլուխ-
վոր յերկը՝ «Լոգիկայի գիտությունը»: Այդ աշխատությու-
նը լույս տեսավ 1818 թվին, յերբ Հեղելն աշխատանքի ան-
ցալ Բեռլինում: Այնտեղ նա կարդում եր փիլիսոփայու-

թյան պատմության, կը ո՞նի փիլիսոփայության, և թե ի-
կայի, իրավունքի փիլիսոփայության, պատմության փիլի-
սոփայության, լոդիկայի, բնության փիլիսոփայության
դասընթացները:

Թեև պրուսական կառավարությունը կասկածում ել եր,
թե Հեղելն աթեւիստ և և քաղաքական տեսակետից ռադիկա-
լիզմին և հետեւում, նա այնուամենայնիվ, ինչպես ասում ե
Անինը, «արրուսական ինքնակալական պետության յերկրպա-
զու յեր և այդ պետության ծառայության մեջ եր գտնվում
իրրե Բեռլինի համալսարանի պրոֆեսոր...»¹: Նա հաշովում
եր պրուսական միապետության ուսակցիոն քաղաքականու-
թյան հետ: Բայց Լենինը, ինչպես Մարքսն ու Ենդելու,
կարուկ կերպով դասապարտում եր նրանց, ովքեր միակող-
մանիորն ընդդում եյին լոկ Հեղելի հաշությունը պրու-
սական իրականության հետ և գրանում եյին տեսնում նրա
բոլոր փիլիսոփայական վորոնումների իմաստը:

Այդպես, որինակ, զեռ Ենդելը, Վելհելմ Լիբնիկասի
այդ տեսակ մի ծանոթագրության կազմակցությամբ, 1870
թվի մայիսի 8-ին Մարքսին ուղղված մի նամակում գրում է.

«...Իդիոտությունն այն աստիճանի յե հասել, վոր այլ-
ևս ալիկի հանդուրժել ամեննեին չի կարելի: Այդ մարդը Հե-
ղելը բառի մոտ հետեւյալ ծանոթագրությունն է զնորմ.
«Ավելի լայն հասարակությանը հայտնի յե վորպես մի փի-
լիսոփա, վոր հայտնագործել (!) ու մասնակությունը (!) պրու-
սական-արքայական պետական իդեալիստ իդեան: Դրա համար յես
նրան մի լավ դաս տվի և տպագրելու համար մի հայտա-
րարություն ուղարկեցի, վոր գրված եր տվյալ պայմանների
համար մաքսիմալ մեղմ տոնով... այդ տղեաը անամոթու-
թյուն ունի կարծելու, թե Հեղելի նման մի մարդու հետ նա
կարող է հաշիվ մաքրել մի «պրուսացի» բառով, և այդ առ-
թիվ նա գեր լցիրը ություն ունի հասարակությանը ներշնչե-
լու, թե այդ յես եմ ասել... Ավելի լավ և բոլորին բան
չըրել տպագրության համար, քան թե տպագրվել այնպես,
վոր Լիբնիկասի չնորհիվ եշի համբավ վաստակես»²:

¹ Լենին, Հատ. I, էջ 410:

² Մարքս և Ենդել, Հատ. XXIV, էջ 335:

«Յես նրան գրեցի, —պրում ե Սարքուը Ենդելսին, —վոր յեթև նա ընդունակի ե Հեղելի մասին լոկ կը կնքելու Ռոտանեկ- գելերի վաղեմի հիմարությունները, ապա՝ ավելի լավ ե, վոր նա լոի: Այդ նա անվանում ե «Հեղելի հետ հաշիվ տես- նել առանց առանձին ցերեմոնիաների»... Այդ մարդն իրոք չափազանց հիմար ե»¹:

Հեղելն իդեալիստ-փիլիսոփա յե: Քննարկելով իրակա- նությունը զարգացման մեջ՝ նա այդ զարգացման աղբյուր եր համարում վո՞չ թե ընությունը, այլ վոգին, վո՞չ թե նյութը, այլ բացարձակ, որյեկտիվ իդեան: Ի տարբերու- թյուն սուրյեկտիվ իդեալիզմից՝ Հեղելը աշխարհի զարգա- ցումը կախման մեջ չի զնում առանձին մարդու գիտակցու- թյունից, բայց ընդունում է որյեկտիվ իդեալի գոյությու- նը, վոր կախված չե սուրյեկտից: Ի տարբերություն իդեա- լիստ-մետաֆիզիկներից՝ Հեղելն այդ իդեան դիտում ե զար- գացման մեջ, հակասությունների պայքարում: Բայտ Հեղե- լի՝ ընության պատմությունը, իմացության պատմությունը հանդիսանում է պատմականորեն զարգացող իդեալի միաս- նությունը: Ի հակադրություն մտտերիալիզմի՝ Հեղելը գտնում է, վոր ամբողջ պատմական կյանքի զվիսալոր բո- վանդակությունը հանդիսանում և անընդհատ զարդացող և հարստացող իդեան: Այդ իդեան, Հեղելի կարծիքով, անկախ ե ընությունից և մարզուց, վորի համար և կրում և որ- յիկալի, բացարձակ անունը: Միմիայն նա, այդ բացարձակ, որյեկտիվ իդեան և ապրում, զարդանում: ոեալ աշխարհը— բնությունն ու հասարակությունը, աշխարհի ամբողջ հա- րստությունը—լոկ իդեալի արտացոլումն ե, նրա ակախու- թյան արդյունքը:

«Բացարձակ իդեան» իր շարժման ժամանակ յերեք հիմ- նական առողջական ե անցնում: Նախ, իդեան կուտակում ու առաջացնում ե իր սեփական հարստությունը: Այդ պրոցե- սը Հեղելը քննարկում եր «Լոգիկայի գիտությունը» յերկի մեջ: Յերկրորդ, իդեան անցնում ե իր հակադրությանը՝ գրսեկորելով իրեն նյութական աշխարհի մասները իրենցում ու հասարակությունը, աշխարհի ամբողջ հա- րստությունը—լոկ իդեալի արտացոլումն ե, նրա ակախու- թյան արդյունքը:

մեջ: Վերջապես, յերրորդ, իդեայի զարգացումն արվար- վում ե «Համաշխարհային բանականության» լիտկատար համընկնումով իր սուեղծած բնության և հասարակության հետ, իդեայի և աշխարհի նույնացմամբ, ըստ Հեղելի տեր- մինուղիայի՝ «բացարձակ գիտությամբ»: Իդեայի զարգա- ցման յերրորդ առողջականը Հեղելը ցույց է տվել «Վողու փի- լիստիկայության» մեջ: Բայտ Հեղելի՝ փիլիսոփայության խնդիրը հենց այն ե, վարպեսզի բացահայտի «բացարձակ բանականության» ինքնաշարժման պատմական ուղին իրեն միակ ակտով, սեալ կերպով գոյություն ունեցող ուժի: Այդպիսի «բանականության» յուրաքանչյուր կողմը—յուրա- տեսակ, բացարձակ ճշմարտություն ե, վորը և պիտք ե ըո- շափիվ, յերեան բերմի ու ծավալվի պատմական պրոցեսի ընթացքում:

Այսպես ուրեմն, Հեղելը յերեք դիմավոր աստիճան ե մատնանշում «Համաշխարհային» կամ «բացարձակ» իդեայի ինքնաշարժման մեջ: Բայց իր պատմական զարգացման մեջ այդ «բացարձակ իդեան», բայտ Հեղելի, անցնում է բաղմա- թիվ, ամելի մասնավոր ստուճաններ, և նրանցից յուրա- քանչյուրի մեջ «Համաշխարհային վոգին» դրսեորդում ե իր եյության այս կամ այն գծով: «Փերմանական իդեալուգիայի» նախարանում Մարքսն ու Ենդելսը գրում ելին: «Հեղելն ավարտի հասցեց դրական իդեալիզմը: Նրա մոտ վո՞չ մի- այն ամբողջ նյութական աշխարհն և մտքերի աշխարհի փո- խարկվել, այլև ամբողջ պատմությունը զարձել և մտքերի պատմություն: Նա չի բավականանում նրանով, վոր գրան- ցում և մտավոր իրերը, նա փորձում է նաև պատկերել նրանց արտադրման գործողությունը»¹:

Ենդելսն իր «Անտի-Դյուրինգ» կլասիկ աշխատության մեջ, վարտեղ ներգաշնակորեն և սիստեմատիկ կերպով շա- րադրված են պրոլետարիատի փիլիսոփայական աշխարհա- յացքի հիմունքները, աշխարհի իդեալիստական բացարձա- թյան առթիվ գրութերը.

«Այն հայացքը, վորի համաձայն՝ մարդկանց իդեանե- րով ու պատկանածությունը են ստեղծված նրանց կյանքի

¹ Մարքս և Ենդելս, Համ. IV, Էջ 4:

¹ Կույշ տեղում, Էջ 336:

պայմանները, և վոչ թե ընդհակառակը, հերքվում է ամբողջ պատմությամբ, վորի մեջ մինչև այժմ միշտ ինչ-վոր մի ուրիշ բան է ձեռք բերվել, քան այն, ինչ վոր ցանկացել են, իսկ հետագա ընթացքում մեծ մասամբ նույնիսկ հակադիր բան»¹:

Լենինն ու Ստալինը զարդացրին Հեղելի իդեալիզմի այս կլասիկ քննադատությունը: Լենինը գրում եր, վոր վո՛չ թե բնությունը պետք է յեզրակացնել հոգու պատմությունից, այլ ընդհակառակը, «Լոգիկան և իմացության թհորիսան պետք է յեզրակացվեն «բնության և հոգու ամբողջ կյանքի զարդացումից»²:

Էնկեր Ստալինը, յենելով Մարքսի, Ենգելսի, Լենինի աշխատություններից, ընդհանրացումներ անելով ամբողջ համաշխարհային գիտության տվյալներից, գրում եր.

«Սխալ ե այն միտքը, թե իրը իդեան կամ ընդհանրապես հոգեկան կողմը իր զարդացման մեջ նախորդում է բնությանը...»³:

Բայց չնայած աշխարհի իդեալիստական իր բացատրության ամբողջ սիմալականությանը՝ Հեղելը հոկայական ծառայություններ և մատուցել գիտությանը: Նա կարողացավ ընդգրկել գիտությունների ավելի լայն բնագավառ, քան թե վորոնե նախորդ փիլիսոփայական սիստեմ: Յեկ իրոք, հետազոտելով մարդկային մտքի ծագումն ու զարդացումը («Վոգու Փենոմենոլոգիան» աշխատության մեջ)՝ Հեղելն, Ենգելսի ասելով, այն յեզրակացության յեկավ, վոր մարդու անհատական գիտակցության զարդացումը հասարակական և գիտական կյանքի զանազան աստիճաններում կարելի յե գիտել վորպես մարդկային մտքի պատմականորեն անցուաստիճանների կրծատված վերարտադրում: Ուսումնասիրելով լոգիկան, բնության փիլիսոփայությունը, վորու փիլիսոփայությունը, պատմության փիլիսոփայությունը, եսթետիկան, իրավունքի փիլիսոփայությունը, կրոնի փիլիսոփա-

յությունը, փիլիսոփայության պատմությունը՝ Հեղելը ջանում եր այդ բնագավառներից յուրաքանչյուրի մեջ «գտնել և մատնանշել նրա միջով անցնող զարդացման թելը: Բայց վորովհետև նու վո՛չ միայն ստեղծագործական հանձար եր, այլև համակողմանի դիտության տեր, ապա նրա յերեան գալն ամենուրեք դարաշրջան եր կաղմում»⁴:

Էմբռնելով մարդկային մտքի ամբողջ պատմությունները գիտեկտիկորեն զարդացող միասնական պրոցես, Հեղելը իդեաների զարդացման մեջ կուահեց իրերի զարդացումը, հասկացողությունների զարդացման և յերեան գալու մեջ—իրական կյանքը: Բայց իրը որյեկտիվ իդեալիստ՝ Հեղելը ամբողջ համաշխարհային պատմությունը միստիկորեն բացատրում եր ինչ-վոր մի բացարձակ բանականությամբ, այդ պատմությունը կախման մեջ եր գնում իդեաների պատմության հետ և չկարողացավ, ինչպես այդ նէց Լենինը, մտածողության պատմության մեջ հասնել բնության և հասարակական կյանքի պատմության գիտակցական արտահայտմանը:

Մարքսը, Ենգելսը, Լենինն ու Ստալինը, տալով հեղելյան փիլիսոփայության իդեալիզմի քննադատությունը, գնահատեցին այն պատմականորեն: Հեղելի առավելությունը մինչև ինքը հանդես յեկած մյուս փիլիսոփաների և գիտականների համեմատությամբ՝ Ենգելսը տեսնում եր Հեղելի հոկայական պատմական հուսառության մեջ: Նրա փիլիսոփայական սիստեմը չափազանց արսուրակու և իդեալիստական եր, բայց Հեղելի մոտ մտքերի ընթացքը միշտ պատմության ընթացքին զուգահեռ եր ծավալվում:

Ենգելսը գրում եր. «Նրա Փենոմենոլոգիայում, եսթետիկայի մեջ, պատմության մեջ, փիլիսոփայության մեջ—ամենուրեք կարմիր թելի նման անցնում ե այդ վսեմ ըմբռումը, ամենուրեք հարցերը քննարկվում են պատմականորեն, պատմական իրականության հետ ունեցած վորու, թե պետև արսուրակու կերպով խեղաթյուրված, կապակցության մեջ»⁵:

¹ Ենգելս, Անտի-Դյուրիխը, Եջ 299, 1938 թ.:

² Լենին, Փիլիսոփայական տեսրակներ, Եջ 90:

³ Քաղված ե ըստ Լ. Բերիայի «Անդրկովկասի որշենիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» գրքի, Եջ 118, 1938 թ.:

⁴ Ենգելս, Լուդվիգ Ֆոյերբախ, Եջ 10—11, 1938 թ.:

⁵ Մարքս, Քաղաքանախեսության քննադատության շուրջը, Եջ 11,

Սակայն իրականության զարգացման այսպիսի կռահութը չի վաչչացնում Հեղելյան փիլիսոփայության վերացականությունն ու իդեալիստական ընությը:

Բայց Հեղելի՝ «բացարձակ իդեալի» զարգացման եյությունն այն է, վոր նա կարծես թե վաչչացնում և առարկայական աշխարհը և նրա ամբողջ բովանդակությունը վուխանցում և գիտակցության վալորտը:

Հենինը հիմնալի է իրապով բացահայտեց իդեաներով ու չափացողություններով բնությունը: Նա անողոք կերպով ձաղրեց Հեղելի այդպիսի յեզրակացությունների հակադիտական եյությունը. «Բնությունը—հասկացողության խորառությունն արաւաքինի մեջ» (Հա՛-Հա՛)՝:

Վարքան ել Հեղելի աշխատում եր ապացուցել, թե բնությունը կախված է իդեալից, նա այդպիսի ապացուցյաներ չգտավ: Մարքսը գրում եր, վոր աշխարհը ունաբե մարդուց անկախ մնաց, թեև Հեղելը վազուց եր արդեն աշխարհը լուծել գիտակցության մեջ: Այսպիս ուրիշն, իդեալիստական փիլիսոփայության նույնիսկ ամենաականալոր ներկայացուցիչը, փորձելով «ապացուցել» նյութի կախումը գիտակցության զարգացումից, սահպամ եր սուր հակառակության մեջ մտնել գիտության հետ:

Միմիայն դիալեկտիկական մատերիալիզմը տվեց իդեալիստական պատկերացումների ջախջախիչ քննադատությունը, պատկերացումներ, վորոնց համաձայն՝ իդեաները կախված չեն բնությունից և հասարակական զարգացումից:

«Ի հակադրություն իդեալիզմին, վոր աշխարհը համարում է «արտուրուտ իդեալի», «համաշխարհային վողու», «գիտակցության» մարմնացում,—Մարքսի փիլիսոփայական մատերիալիզմը յեխում է այն բանից, վոր աշխարհն իր բնությամբ նյութական է, վոր աշխարհում բաղմակերպ յերկույթները շարժվող մատերիալի զանազան տեսակներն են, վոր յերկույթների փոխադարձ կապն ու փոխադարձ պայմանավորվածությունը, վոր դիալեկտիկական մեթոդն և սահմանում, շաբթվազ մատերիալի զարգացման որինաչա-

¹ Լենին, Փիլիսոփայական տեսրակներ, էջ 180:


փություններն են, վոր աշխարհը զարգանում և մատերիալի շարժման որենքների համաձայն և վոչ մի «համաշխարհային վողություն» կարիք չունի»¹:

Բայց խորապես սխալվելով իդեաների և բնության հարաբերության հարցում՝ Հեղելն այնուամենայնիվ կարողացավ մանրամասնորեն մշակել դիալեկտիկական մտածողության ձևերը, լուրջ հարված հասցնել մտածողության Փորմալ-տրամաբառական յեղանակին:

Հեղելը կարուկ կերպով քննադատում եր Փորմալ, անրովանդակ մետաֆիզիկական լոգիկան: Կանդնելով այդ լոգիկայի տեսակետի վրա, մատնանշում է նա, գիտնականը պետք ե սահմանափակվեր արստրակա կերպով կրկնելով՝ առարկան հավասար է ինքն իրեն, Ա=Ա, մարդը մարդ է, բույսը բույս է: Յեթե գիտությունը սահմանափակվեր բոլոր հարցերն այդ իմաստով լուծելով, նա յերբեք վոչ մի նոր գյուտ չեր անի, այլ կղովզովիք միենույն տեղում: Ըստ Հեղելի՝ գիտությունը զարգանում և չնորհիվ այն հաճակաբերությունների զարգացումը, ամեն ինչ գիտում ե ձագմանքի, վոր հասկացողությունների մեջ դրսնորում և հակաբերությունների զարգացումը, ամեն ինչ գիտում ե պարզացման և վոչնչացման մեջ: Խոկ Փորմալ լոգիկան, թեև վորձում է շարժման պատճառը գտնել, բայց այն տեսնում է վո՛չ թե առարկայի իրեն կամ հասկացողության մեջ, այլ նրանց սահմաններից դուրս: Որինակ, XVII—XVIII դարերի գիտնականների տեսակետով՝ ուժը մի՛ բան է, նյութը բոլորովին ուրիշ բան, ուժը շարժման աղբյուրն է, նյութը պասսիվ սկզբունք է, վորի մեջ դրսից և շարժում մտցվում: Աշխարհը կարծես յերկատվում և ակախի կողմի, վոր նյութից դուրս և գտնվում, և պասսիվ կողմի, այսինքն՝ նյութի:

Ինը բով այս որինակը՝ Հեղելը միանդամայն իրավացիորեն XVII—XVIII դարերի գիտության մեջ իշխող «իսելքի այսպիսի թագավորությունն» անվանում և «դժբախտ գիտակցություն», վորը բոլորովին սիալ կերպով յերկատվում և աշխարհը: Ահա թե ինչու Հեղելը միակողմանի յեր համա-

¹ Համեմատելու պատճության համառոտ դասընթաց, էջ 149 (Հայերեն):



բում «խելային», կամ Փորմալ-տրամաբանական, հայացքը:

Միմիայն այստեղ, վորտեղ հակասությունները դիտվում են վո՛չ թե վորպես արտաքին, միմյանց ոտար բաներ, վորտեղ «ուժը» հանդես ե գալիս վո՛չ թե վորպես առարկայի համար, բնության համար կողմնակի բան, այլ, ընդհակառակը, գտնվում ե նրա ներսում, նրա սեփական բովանդակությունն ե կազմում, —միմիայն այստեղ, ըստ Հեղելի, «խելքի թագավորությունը» փոխարինվում ե «բանականության թագավորությամբ»: Ըստ Հեղելի՝ բանականության ամբողջ գործունեյությունը, ի հակադրություն «խելքի» գործունեյության, կառուցված ե դիալեկտիկական հիմունքների վրա: Բանականությունն արդեն չի խուսափում հակասություններից, այլ, ընդհակառակը, փնտում ե բաց և անում դրանք: Բանականությունը հակադիր կողմերն ու աենդենցները չի յերկատում և ինքնուրույն հանդես յեկող յերեւյթներ չի դարձնում, այլ նրանց միացնում ե բարձրագույն միասնության մեջ: Բանականությունը վերցնում է վո՛չ թե վերջնային, միմյանցից անջատված իրերը, ինչպիս այդ անում ե «խելք», այլ վերցնում ե զարդացման արդյունքը, այսինքն՝ իդեայի ամբողջական և ներդաշնակորեն զարդացած հարստությունը: Այս իմաստով բանականությունն, ի հակադրություն «խելքի» գործունեյության, չի կարող սիսալիք: Վորչափով բանականության մեջ արդեն բովանդակված ե ամբողջ իրականությունը, գոյության ամբողջ լրիվությունը, ապա ճանաչելով իրերը՝ բանականությունը հենց դրանով ճանաչում ե իրեն: Ահա թե ինչու բանականության գոլորտում իմացությունն, ըստ Հեղելի ուսմունքի, հավասար ե ինքնագիտակցության:

Հապա ի՞նչ կերպով ե որյեկտիվ, մեր գիտակցությունից անկախ, առարկայական աշխարհը իր հակադրությանն անցնում ե, ըստ Հեղելի թեորիայի, դառնում բանականության բովանդակություն: Այդ անցումն իրականացնելու միջոցները Հեղելը տեսնում ե իդեական գործունեյության, գիտակցության ակախլության մեջ:

Զգտելով բարձրացնել մարդկային բանականությունը, նրան ընդունակություն վերադրել՝ բացահայտելու իդեաների շարժման և բնության զարդացման մեջ յեղած հակասու-

թյունները, Հեղելը, սակայն, այստեղ ել սխալ յեղբակացությունների, միատիկայի հասավ:

Այն պայծառ փաստաթուղթը, վորտեղ տրված ե Հեղելի դիալեկտիկայի կարևոր յեղբակացությունների խորը շարադրանքը, հանդիսանում ե «Ստրուկ և տեր» վերնագիրը կրող զլուխը Հեղելի «Վոգու Փնտոմնուղղիքայից»—մի յերկ, վորը, Մարքսի առելով, հանդիսանում ե Հեղելյան փիլիսոփայության ակունքը և գաղտնիքը:

Այդ գլխի բովանդակությունը համառոտակի հետեւյալն ե՝ սկզբում թվում ե, թե բնության առարկան տիրապետում է—նա տեր ե: Գիտակցությունը միայն հետեւում ե նրան, յենթարկվում ե նրան—նա կատարում ե ստրկի դերը: Սակայն առարկան, թեև նա տեր ե, կարող ե իրեն ճանաչել միմիայն գիտակցությանը գիմելով: Իսկ գիտակցությունը սորում ե: Ուրիշ խոսքերով՝ տերը ճանաչում ե իրեն ստրկի—գիտակցության միջոցով, իսկ ստրուկին, իր հերթին, ճանաչում ե իրեն իրեն ստրկի, դիմելով ստարկային, տիրողը: Առկա յե փոխադարձ կապակցություն և հակադրությունների հարաբերություն—գիտակցության և ստարկայի, ստրկի և տիրոջ: Այդ հակադրության զարգացման գիտակտիկան այնպիսին ե, զոր տիրոջ գիտակցությունը ստրկական և գուրս գալիս: Այս բացատրվում ե նրանով, վոր առարկան—տերը—իրեն գտնում, տեսնում ե գիտակցության մեջ, վորը հանդես ե գալիս վորպիս յենթակա, ստրկական: Այսուհետև, գիմելով տիրոջ եյության բնութագրմանը, Հեղելը սահմանում ե, վոր տերը իրերի հետ գործ ունի այն չափով միայն, վորչափով սրանք նրան հածույթը, բավականություն են պահճառում: Բայց իրերի մեջ յեղած այդ կողմն ել տերը հայտնագործում ե ստրկի գործունեյության միջոցով: Ստրուկը հանդես ե զալիս իրեր միջնորդ առարկայական, իրային աշխարհի և տիրոջ միջև: Հետեւանքն այն ե վնում, վոր տերը կտրվում ե իրերից, ազատվում ե նրանցից: Ստրուկը (գիտակցությունը) կապված ե մնում իրերի հետ և ամբաղնդում ե այդ կապը: Այդ կապը պահպանվում ե խորացվում և աշխատանքի միջոցով: Ստրուկը փոփոխում, ձևավորում ե իրերը: Մրանք նրա գործունեյության արդյունքն են: Իրերը դիմադրում են

ստրկին։ Նա հաղթահարում և այդ գիմադրությունը և Հենց դրանով իրերի տերը դառնում։ Աւրեմն՝ ի՞նչ տեղի ունեցավ ստրկի այս գործունեյության և տիրոջ անգործունեյության հետևանքով։ Տեղի ունեցավ մի զարժանալի փոխակերպում։ այն, ինչ վոր, ըստ Հեղելի, ստրկին ստրուկ եր դարձնում, —աշխատանքն այժմ ազատադրում և նրան։ Ստրուկը տեր և դառնում իրերի վերաբերմամբ, իսկ տերը դառնում և ստրկից, նրա գործունեյությունից կախված, այսինքն՝ ստրուկ և դառնում։ Ստրուկն ու տերը փոխում են իրենց տեղերը։ Իսկ յեթե նկատի ունենանք այն իմաստը, վոր Հեղելը գնում և տիրոջ և ստրկի հարաբերության մեջ, ապա ստացվում և այն, վոր գիտակցության ակտիվության շնորհիվ առարկան ու գիտակցությունը փոխում են իրենց տեղերը։ Գիտակցությունը դառնում և տեր, իսկ առարկան՝ ստրուկ։

Ակտիվության սկզբունքը, վորի համար այնքան ջերմորեն պայքարում եր Հեղելը, նա զեռ խիստ սահմանափակ եր հասկանում։ Դործոնությունը, ակտիվությունը, գործունեյությունը, ըստ Հեղելի ուսմունքի, դուրս չեցին դալիս զուտ թեսրիայի բնագավառից և, նրա կարծիքով, ինսագործվում եյին միմիայն մտագոր աշխատանքի ողնությամբ։

Այս որինակը համոզիչ կերպով ցույց և տալիս, վոր Հեղելը, թեև հետազոտեց հակասական, դիալեկտիկական զարգացումը, հակադրությունների անցումը մեկը մյուսին, բայց այդ հետազոտությունն ամբարտում եր սխալ յեզրակացություններով, փորձելով ապացուցել գիտակցության պրիմատը, առաջնությունը բնության հանդեպ։ Հեղելի դիալեկտիկայի միտիցիզմն այսակ ել շատ պայծառ կերպով և հանդես գալիս։ Ահա թե ինչու հարկավոր և վճռականապես ընդգծել, վոր մենչեւիոդ իդեալիստները, վորոնք ձգտում եյին «Վոգու Փենոմենոլոգիայի» հենց նոր վերլուծված դլուխը հրամցնել իրեն դրեթե դիալեկտիկական-մատերիալիստական յերկասիրություն, աղավաղում, կեղծում և յին իրերի իսկական դրությունը։

Զնայած Հեղելի յելույթների մաքողը կրքոտությանը, չնայած «Վոգու Փենոմենոլոգիայի» բոլոր կրակոտ կոչերին

դեպի գործողություն, դեպի ակտիվություն, իրականությունը, վոր Հեղելն ուկում եր փոխել, մնաց անփոփոխ, նախկինը։

Սրգեն սրանում արտահայտություն և գտնում Հեղելի փելիսոփայական սիստեմի բացահայտ իդեալիստական բնույթը։ Թեև զարգացման խղեան նրա մոտ դիալեկտիկական բնույթը և կրում, սակայն, այդ զարգացումը կենսագործվում և զուտ մտքի վոլորտում, թեորիայի վոլորտում։ «Վոգու փիլիսոփայության» մեջ Հեղելն ինքը բացատրում է «ակտիվության» իմաստն իր փիլիսոփայության մեջ։ Նա դրում է. «Սուրբեկտիվ տարրը պետք և որյեկտիվ նշանակություն ստանա։ Յեզ ընդհակալուակը, առարկան պետք և իմ առարկան դառնա վո՛չ միայն այն պատճառով, վոր այն ստեղծված և վերացական մտքի կողմից, այլ այն պատճառով, վոր նրա ամբողջ բովանդակությունը մտքի արդյունք ե»¹։ Հետեաբար, խոսքը վերաբերում և վո՛չ թե պրակտիկ գործունեյությանը, այլ մտքի գործունեյությանը. ըստ Հեղելի՝ առարկան մտքի և նրա բովանդակության զարգացման արդյունքն ե։ Առարկան փոխվում և այն հանգամանքի շնորհիվ, վոր մարդու միաքն և փոխվում նրա մասին։

Մակայն առարկան փոխելու համար միանդամայն անբավարար և փոխել այն մտավորապես։ Դեռ «Սրբազն ընտանիքում» Մարքու գրում եր. «...բարձրանալու համար բավական չե բարձրանալ մամերով և իրական, զգայական գլխի վրա կախված թողնել իրական, զգայական լուծը, վորը հեռու քշել չես կարող իդեաների ողնությամբ կատարման և վոչ մի կախարդությամբ»²։

Այսուհետեւ Մարքու գրում ե. «Եղեաները յերբեք չեն կարող դուրս բերել հին հասարակակարգի սահմաններից. նրանք միշտ միմիայն դուրս են բերում հին հասարակակարգի իդեաների սահմաններից։ Իդեաներն ընդհանրապես վոչինչ չեն կարող կատարել։ Իդեաների կատարման համար պահանջվում են մարդիկ, վորոնք պետք և պրակտիկ ուժ գործադրեն»³։

1 Հեղել, Վոգու փիլիսոփայությունը, էջ 203։

2 Մարքու և Սնգելս, Հոտ. III, էջ 106։

3 Կույն տեղում, էջ 147։

Հեղելի մոտ իրականությունն ստեղծվում է դիտակցության կողմից: Վոդին ինքն իր խորքերից ծնում և առարկայական աշխարհը նրա համար, վորապեսդի մի վորոշամանակ անց անողոքաբար հաշիվ տեսնի իր սեփական առեղծագործության հետ: «Դիտակցության» այս զարդացման ամբողջ միստիցիզմը ինամքով բաց և արել լենինը Հեղելի «Լոգիկայի դիտությունը» գրքի իր կոնսպիկում: Հատկապես հենց Հեղելի փիլիսոփիայական կոնցեպցիայի միստիկականությունն եր, վոր նրան հասցրեց XIX դարի առաջին յերրորդի պրուսական սիստության պաշտպանությանն ու արդարացմանը: Քանի վոր իրականությունն իդեալ, և այն ել նրա կատարյալ ձևով, նշանակում ե՝ այդ իդեան պետք ե պաշտպանել:

Լիովին հասկանալի յէ, վոր Հեղելի դիալեկտիկայի վերևում մատնանշված այդ միստիկական գիծը չեր, վոր դեպի ինքն եր գրավում առաջավոր գիտնականների և հեղափոխականների սկեռուն ուշադրությունը: Սրանց գրավում եր նրա ուսմունքը զարգացման մասին, հակադրությունների պայքարի մասին իրեն զարգացման աղբյուրի:

«Լոգիկայի դիտության» մեջ Հեղելը մանրամասն շարադրել է իր ուսմունքը հակասության մասին: Հակադրություններն ու հակասությունները բացառություն չեն կանոնից, պատահական բանչեն մարդկային մտքի զարգացման և բնության զարգացման մեջ, այլ իսկական «բանականության թագավորություն»: Վորովհետև միմիայն հակասության միջոցով և բացահայտվում առարկայի ելությունը: Ամեն մի դիտության նպատակն ե՝ հակադրությունների շարժման իմացությունը:

Հեղելի հանճարեղ ուսմունքը զարգացման մասին, նրա այն միտքը, թի իմացությունը հակադրությունների պայքարի իմացությունն ե և թի հակասությունը ամեն տեսակ շարժման, ամեն մի կյանքի զարգացման աղբյուրն ե, հանդիսանում է նրա հսկայական պատմական ծառայությունը: Սրա մեջ է նրա դիալեկտիկայի «ռացիոնալ հատիկի» ելությունը:

Բայց Հեղելը, հակասություններն ընդունելով ընդհանրական, նրանք վերագրում եր միայն դիտակցության բնա-

դավառին. Ըստ Հեղելի՝ հակասությունները տեղ չունեն պրակտիկ գործունեյության մեջ, և հակասությունների պայքարը վո՞չ միայն չի տարածվում ամբողջ աշխարհի վրա, այլ չի տարածվում նույնիսկ գիտակցության շարժման բոլոր ստադիանների վրա ել:

Լենինը, խոսելով այն մասին, թի «Հեղելը հանճարեղ կերպով կռահեց իրերի (յերկույթների, աշխարհի, քննության) դիալեկտիկան հասկացողությունների դիալեկտիկայի մեջ», նկատում ե՝ «Հենց միայն կռահեց, վոչ այլելի»¹:

Լենինը գրում եր, թի Հեղելն «այնպիսի լողիկա յի պահանջում, վորի մեջ ձևերը բովանդակալից ձևեր լինելին, կենդանի, ռեալ բովանդակության ձևեր, վորոնք անքակտելիորեն կապված են բովանդակության հետ»²: Հեղելի պահանջը մտածողության ձևերի բովանդակալիցության մասին՝ հանդիսանում և դիալեկտիկայի հանճարեղ պահանջը: Մակայն մտածողության ձևերի բովանդակալիցության պահանջը Հեղելի համար չեր նշանակում, թի մտածողությունը պետք ե արտացոլի ոբյեկտիվ աշխարհը: Նա պահանջում էր, վորպեսզի մտածողությունը բովանդակալից լինի, այսինքն՝ վորպեսզի մտածողությունը դատարկ և մեռած սիստեմների չհանդեցվի: Միմիայն դիալեկտիկական մատերիալիզմն ե ուսուցանում, վոր մարդու մտքերը, հասկացողությունները, իդեաները պետք ե իրենց բովանդակությամբ արտացոլեն այն հարստագույն փորձը, վոր մարդիկ կուտակել են բնության դեմ պայքար մղելիս, հասարակական կյանքի զարգացման մեջ: Միմիայն այս պայմանի դեպքում մարդկային մտածողության, լոգիկայի ձևերը չեն լինի դատարկ, արստրակատ, մեռած, այլ կլինեն կենդանի, բովանդակալից: Հեղելի մոտ արգեն հանդիսում ենք կոտահումների մտածողության ձևերը հենց կյանքի զարգացման հետ ըմբականության ձևերը հենց կյանքի զարգացման մեջ:

¹ Լենին, Փիլիսոփայական տետրակներ, եջ 189:

² Խույն տեղաւում, եջ 93:

ցավ հետեղականորեն-դիտականորեն զարգացնել մտածո-
ղության բովանդակալից ձևերը:

Հեղելի լոգիկայի մեջ բացարձակ իդեայի կյանքի առա-
ջին աստիճանը տրված է համառոտակի: Նրա խմատը կա-
րելի յե այսպիսի դրույթներով շարադրել. համատենապես
դոյտվյուն ունեցող բացարձակ իդեան իր տարրական ձևով
ներկայացնում է կեցության հասկացողությունը: Այսպես
կոչված «զուտ կեցությունը» լոգիկայի սկիզբն ե, նա չի
կարող հետագա սահմանումներ ունենալ, և, վորպես միան-
դամայն անորոշ, բացարձակապես-բացասական և անտարբե-
րելի իր մեջ, նա հայտաբում է վոչնչի: Կեցության և
վոչնչի հասկացողությունները վորպես հակադրություններ
հանդիսանում են լոգիկայի սկիզբը, իդեայի հետագա շարժ-
ման սկիզբը: Անցնելով մեկը մյուսին շնորհիվ իր ներքուստ
հակասական բնության, այսինքն՝ գտնվելով դոյացման
պրոցեսում, այդ հասկացողությունները ձեռք են բերում
ավելի վորոշ բնույթ և փոխարկվում են վորակի իրրե յու-
րահատուկ «կեցության վորոշակիություն», իսկ գիտվելով
նույնության անսակետից այդ բոլոր «վոչնչները»—կեցու-
թյան յուրահատուկ ներկայացուցիչները—հանդես են գալիս
քանակական կողմից: Վորակը կեցության ներքին վորոշա-
կիությունն ե, քանակը նրա արտաքին վորոշակիությունն
ե: Զնայած քանակության փոփոխություններին՝ վորակը
մինչև վորոշ մոմենտ պահպանում է իր առանձնահատկու-
թյունը: Կեցության և վոչնչի հակադրությունը իր ներկը
զիջել ե մի ուրիշ հակադրության՝ միասնության մեջ
գտնվող վորակին և քանակին: Նրանց այդ միասնությունը
Հեղելն անվանում է չափ: Այդ միասնությունը խախտվում
է քանակի փոխվելով: Վորակի փոխվելը, վոր վրա յե գա-
լիս թոփչքի ձևով, տանում է զեպի անցումն անչափի մեջ:
Դրանով ավարտվում է վորակի և քանակի զարդացումը և
իրագործվում է անցումը զեպի եյությունը, վորտեղ առան-
ձին պայծառությամբ դրամորվում են կեցության արտաքին
և ներքին հակասությունները: Հիմունքը վորպես կեցու-
թյան վորոշ ամբողջականություն, գոյությունը վորպես
նրա արտաքին արտահայտություն, տեսանելիությունը վոր-
պես կողմերից մեկը, եյության արտահայտումներից մեկը

և յերեսույթը վորպես կեցության մի վորոշ լրություն,—այս
բոլոր կատեղորիաները ամբողջությամբ առաջ իրենց շարժ-
ման մեջ հասցնում են իրականության հասկացողությանը:
Հատկապես հենց նրա մեջ և Հեղելը ճանաչում իր լոգիկայի
բոլոր հիմնական կատեղորիաները—պատահականությունն և
անհրաժեշտություն, պատճառականությունն և փոխազդեցու-
թյուն, աղատություն և անհրաժեշտություն, հնարավորու-
թյուն և իրականություն: Միմիայն եյության լիմիատար
բացահայտումն իր բոլոր սահմանումներով նախադրյալ և
ստեղծում հասկացողության ծագման համար վորպես կե-
ցության ճշմարտության: Հասկացողության զարդացումը,
այնպես, ինչպես նաև եյության զարդացումը, հնարավոր և
դառնում չնորմիլ մտքերի մեջ պարունակվող ներքին հա-
կադրությունների: Հատկապես հենց այդ հակասություննե-
.րով և ննունդ առնում հասկացողությունների ինքնազարդա-
ցումը: Վերջինները, իրենց շարժումով վորոշելով որյեկ-
տիվ պատմական իրականության գոյությունն ու զարդա-
ցումը, հանդես են գալիս վորպես աշխարհի արարիչ: Ինե-
լով գիտելիստիկ՝ Հեղելը փորձում է հասկացողության մեջ
գրանուրել ընդհանուրի, առանձնահատուկի և յեզակիի հա-
կասությունները, ցույց տալ հասկացողության կոնկրետու-
թյունը: Հասկացողությունների ամբողջ զարդացումը լոգի-
կայում ավարտվում է իդեայի մեջ:

Այսպես և, համառոտակի, Հեղելի գատողությունների
ընթացքը նրա «Լոգիկայի գիտության» մեջ:

Լենինը բարձր եր գնահատում հասկացողությունների
շարժման Հեղելյան վերլուծությունը: Դիալեկտիկական լո-
գիկայի ինտիմն այն ե, վորպեսզի գիտական հասկացողու-
թյունների, իղեանների շարժման մեջ արտահայտի որյեկտիոն
աշխարհի շարժումը: Այդ պատճառով՝ Հեղելի պայքարը,
թեպետե սիսալ դիրքերից, հասկացողությունների ճկունու-
թյան համար մեծ նշանակություն եր ձեռք բերում: Լենինը
Հեղելի «Լոգիկայի» այդ կողմի մասին գրում եր.

«Այն հասկացողությունները, վորոնք սովորաբար մե-
ռած են թվում, Հեղելը վերլուծում է և ցույց է տալիս,
վոր նրանց մեջ շարժում կա: Վերջնակա՞ն: Նշանակում ե՝

զեպի վերջը շարժվող։ Մի բա՞ն—նշանակում է վոչոյն։ ինչ մյուսն է։ Կեցություն ընդհանրապե՞ս—նշանակում է՝ այնպիսի անորոշություն, վոր կեցությունը—վոչ-կեցությանը։ Հասկացողությունների համակողմանի, ունիմերսալ ճկունություն, մինչև հարկասությունների նույնականությունը հասնող ձկունություն, —ահա թե վորն է եյությունը¹։

Զնայած ընդհանուր հասկացողությունների գիտելիտիկական վերլուծության ամբողջ խորությանը Հեղելի «Առդիկայի գիտությունը» գրում, նրա լոգիկան վերացական, մտահայցական բնույթ և կրում և լի յև միտիկական բովանդակությամբ։ Այդ պատճառով ել մարքսիզմ-լենինիզմի կլասիկները, քննադատորեն հաղթահարելով Հեղելի իդեալիստական դիալեկտիկան, ստեղծեցին իրենց հետեղական գիտական մատերիալիստական դիալեկտիկան։ Մարքսը «կապիտալի» 1 հատորի գերմաներեն յերկրորդ հրատարակության վերջաբանում զրում էր իր մեթոդի մասին, վոր այն վո՞չ միայն տարբեր և Հեղելի մեթոդից էր հիմքում, այլ ուղղակի հակադիր և նրան։ Հեղելի համար, գրում էր Մարքսը, մտածողության պրօցեսը ամբողջ իրականի արարիչն է, «ինձ համար, ընդհակառակը, իդեալականը վոչ այլ ինչ է, յեթև վոչ մարդկային գլուխ մեջ փոխադրված և վերամշակված նյութականը»²։

Ենդելը հիանալի գնահատական տվեց Հեղելի ստեղծած փիլիսոփայական գիտության սիստեմին։ «Առելիիդ Ֆոյերախի» մեջ ենդելը գրում էր, վոր Հեղելն ուղում եր ակարտուն փիլիսոփայական սիստեմ ստեղծել։ Այդ «սիստեմը» պետք է մարդկությանը պարզեցնի, Հեղելի կարծիքով, բացարձակ, վերջնական ճշմարտությունը, վոր այլևս վոչ մի հետագա զարդացման յենթակա չե։ Հեղելը, վոր իր «Առդիկայի» մեջ փորձում էր և շացուցել, թե «ճշմարտությունը» զարգանում է, ավելի ու ավելի հարստանում, պետք է դիտվի իրեն պրոցես, —հենց ինքն էլ վերջ է դնում այդ հայցըին ճշմարտության վերաբերմամբ։ Նա բացարձակ,

վերջնական, անփոփոխ ճշմարտություն հռչակեց իր գիլիսոփայական սիստեմի ամբողջ բովանդակությունը և հենց դրանով հակասության մեջ ընկալվ իր սեփական «ղիալեկտիկական մեթոդի հետ, վոր խորտակում էր ամեն մի դոդմատիկ բան։ Այդ նշանակում էր հեղափոխական կողմը խեղդել անչափ աճած պահպանողական կողմի ճնշման տակ»¹։

Ենդելը ցույց տվեց, վոր իդեալիստ-ղիալեկտիկ Հեղելը անհետեղականութեն և կիրառել ընդհանուր զարդացման միտքը։ Հեղելը հարկադրված էր սահման դնել բնության և գիտակցության զարդացման համար։ Բնության զարդացումը կարող էր առաջնայուղ արդեն անցած ուղիով։ Զարդացումը կենսադործվում է փակիված ըլլրջանի մեջ։ Հեղելի սիստեմը թաղեց նրա մեթոդը։ Այդ կետում ամենախոր հակասություն է պարունակվում Հեղելի մեթոդի պահանջի միջև՝ բացահայտել բնության և գիտակցության զարդացման որյեկտիվ դիալեկտիկան—և նրա սիստեմի պահանջի միջև՝ զարդացումն ավարտել «բացարձակ իմացության» հայտնադործմամբ։

Հեղելի փիլիսոփայության մեջ կա նաև հեղափոխական կողմ, և այդ պատճառով ել Մարքսը Հեղելին մի այնպիսի մարդ էր համարում, վորը իր հուժկու ձայնով բազմաթիվ տառնամյակներ էր թնդացնում կուլտուրայի պատմության մեջ։ բայց կա նաև պահպանողական կողմ, վորի չնորսիվ փիլիսոփան հաճախ հաշտվում էր պրուստիկան իրականության հետ։ Հատվորում հասկանալի յե, վոր Հեղելի մեթոդի և սիստեմի միջև յեղած այս հակասությունը չպիտք է պարզցրած ձևով հասկանալ—մի արկղիկի մեջ՝ հեղափոխական մեթոդը, մյուսի մեջ՝ պահպանողական սիստեմը։ Հեղելի մոտ դիալեկտիկան և իդեալիզմը սերտածած են։ Հեղելի դիալեկտիկան իդեալիստական դիալեկտիկայի մեջ։ Հեղելի գիլիսոփայության սիստեմի և մեթոդի միջև յեղած այս հակասությունը վերջին հաշվով կապված էր այն ժամանակված գրմանիայի պայմանների հակասականության հետ, այն

1 Լեմիթ, Փիլիսոփայական տետրակներ, եջ 110։

2 Մարքս, Կապիտալ, հատ. I, եջ XXIII, 1935 թ.։

1 Խեղելս, Լուդվիգ Ֆոյերախ, եջ 9։

գարաջըշանի գերմանական բուրժուադիայի դրության հակասականության հետ:

Հենց այս յերկդիմությամբ ել բացատրվում է, թե ինչու Հեղելը տարբեր կերպով եր ազգեցություն գործում հետապա դեպքերի վրա վիճակայության և դիտության բնագույնառում և ինչու նրա ժամանակակիցները նույնպես տարբեր վերաբերմունք ունեցին դեպի նա: Մտածողներից վոմանք, ինչպես Ֆոյերբախը, սուր կերպով և արդարացք քննադատում եյին Հեղելին իրեալիզմի համար, բայց չեյին հասկանում նրա ծառայությունները՝ աշխարհի վերաբերմամբ դիալիտիկական հայացք ստեղծելու գործում: Աւրիշները Հեղելին քամահրում եյին իրքեւ սաստկած շան»: Յեկմիմիայն մարքսիզմ-լենինիզմի կասիկները տվին Հեղելի վիճակայության և մասնավորապես նրա դիալիտիկայի նշանակության խսկական պատմական դիտական գնահատությունը, կարողացան քննադատորեն նրանից վերցնել «ուացիոնալ հատիկը» և գեն չպրոել իրեալիստական կեղեւ:

Ժամանակակից բուրժուական ուսակցիոն վիճակայուն միլիսովանները, լենինի խոսքերով առած՝ այդ «ուրյագնիկները փիլիսոփայական ամբողների վրա», վճռականորեն և անվերապահ կերպով գեն նետելով Հեղելի գիտականիկան, մինույն ժամանակ դեմ չեն հին վիճակայի հետ խաղ սկսելու: Նրանք մինչև անդամ կոչ են անում՝ «Հետ դեպի Հեղելը»: Նրանք ամեն առի հավաքում են «Հեղելունդի» («Հեղելյան միության») կոնգրեսներ, վորտեղ բազմաթիվ զեկուցումներ են կարգում հեղելյան ուսմունքի տարբեր հարցերի շուրջը: Ի՞նչ են փորձում Հեղելից փոխ առնել արդի խավարամունքները: Պատասխանը միայն մեկ կարգ և լինել. նրանք փոխ են առնում Հեղելի միտուիցիզմը, ամեն կերպ ուղղում են նրա ուսմունքը բացարձակ լուհայի մասին, կեղծում են նրա ուսմունքը պետության մասին, ձգտելով նրա «իրավունքի վիճակայության» ողնությամբ արդարացնել ֆաշիստական կառավարիչների ուսակցիան:

Ժաշխստական բանակի խավարամունքները Հեղելի միտուիցիզմը նոր-հեղելյականության մի առանձին սխատեմ են դարձել, վոր հանդիսանում են մարտնչող խավարամության և ուսակցիայի վիճակայություն:

Իսկական մարքսիստները պիտք և մերկացնեն ամենաշնչին շեղումները դիալիտիկական մատերիալիզմից: Մենշենիկող իդեալիզմը, Փաշիզմի և տրոցկիզմի այդ իդեալուսիական սքուլումը, զուր չեր, վոր փորձում եր Մարքսի ու Լենինի վիճակայական մատերիալիզմը փոխարինել բացարձակ հեղելյականությամբ: Մեր կուսակցությունը մերկացրեց մենշենիկող իդեալիզմն իրքեւ մի ուսակցիոն, լինինիզմին թշնամի հոսանքը: Կուսակցությունը նույնպես մերկացրեց նաև կուլտուրայի պատմության մեխանիստական ուսկեղիան:

Մենք պիտք և ուսումնասիրներ մարքսիզմ-լենինիզմի կլասիկների վերաբերմունքը դեպի Հեղելը, կլասիկներ, վորնք ցույց տվին Հեղելի խսկական դերը համաշխարհային կուրտարայի պատմության մեջ: Ենդեւսը, գնահատելով Հեղելի վիճակայության նշանակությունը, վրում եր.

«...Հեղելյան վիճակայության խսկական նշանակությունն ու հեղափոխական բնույթը հենց այն եր... վոր նա միանդամ ընդմիշտ վերջ տվեց մարդկային մտածողության ու գործողության արդյունքների վերջնական բնույթի մասին յեզած ամեն մի ժողիք: Այն ճշմարտությունը, վոր պետք և ճանաչեր վիճակայությունը, Հեղելին պատկերանում եր արգեն վոչ իրքեւ պատրաստի դոկմատիկական զրույթների մի հավաքածու, վորոնք մնում ե միայն անդիր անել, քանի վոր արգեն գտնված են. ճշմարտությունն այժմ պարունակվում եր հենց իմացության պրոցեսի մեջ, զիտության յերկարատև պատմական զարգացման մեջ, վոր զիտության ստորին աստիճաններից բարձրանում և զեկի ամենի բարձր աստիճանները, բայց յերբեք չի համարում այնպիսի կետի, վորից նա — այսպես կոչված բացարձակ ճշմարտությունը գտնելով, — այլևս այն կողմը զնալ չկարողանար և վորուկ նրան այլիս ուրիշ վոչինչ չեր մնա անելու, յեթե վոչ ձեռքերը ծալած՝ հիացմունքով դիտել այդ ձեռք բերված բացարձակ ճշմարտությունը»¹:

Լենինն ամենի ևս զարդարեց Հեղելի վիճակայության

¹ Ենգելս, Լուդվիգ Ֆոյերբախ, եջ 7:

այս կլասիկ գնահատությունը։ Նա ապացուցեց, վոր Հեղեղի դիակեկտիկան ուսմունքը հեղափոխական եր։

«Հեղեղի հավատը մարդկային բանականության և նրա իրավունքի վերաբերմաբ և հեղելյան փիլիսոփայության հիմնական դրույթը, թե աշխարհում փոփոխության ու զարգացման մշտական պրոցես և աեղի ունենում, ինպիսի փիլիսոփայի այն աշակերտներին, վորոնք չեյին ուզում հաշտվել իրականության հետ, բերեց այն մտքին, թե իրականության դեմ մղվող պայքարի, գոյություն ունեցող անձմաբության և իշխող չարիքի դեմ մղվող պայքարի արժանության ել գտնվում և հայիստենական զարգացման համաշխարհային որենքի մեջ։ Յեթե ամեն ինչ զարգանում է, յեթե մի հիմնարկությունները փոխարինվում են ուրիշ հիմնարկություններով, ել ինչո՞ւ պետք և հավիտենապես շարունակվի պրուսական թաղավորի կամ ոռոսական ցարի ինքնակալությունը, չնչին փոքրամասնության հարստացումն ի հաշիվ հսկայական մեծամասնության, բուրժուազիայի տիրապետությունը ժողովրդի վրա»¹։

Ենինն ու Ստալինը սովորեցնում են կուսակցությանը, թե հարկավոր և դիտությանը բոլշևիկորեն մոտենալ, այսինքն՝ տվյալ գեպօւմ Հեղելից կարողանալ վերցնել այն, ինչ վոր պետք և մեզ, բոլշևիկներիս, հանուն կոմունիզմի, հանուն մարդկության յերջանկության պայքարելու համար։ Հեղեղի ուսմունքի հեղափոխական կորմը, վոր քննադատար, ստեղծագործականորեն վերամշակեցին մարքսիզմ-լենինիզմի կլասիկները, հեղելյան դիակեկտիկայի «ուացիոնալ հատիկն» եր։ Հեղեղի իդեաներն աշխարհի դիակեկտիկական փոփոխության մասին ներքին հակասությունների միջոցով, այսինքն՝ նրա զարգացման ուսմունքը, նրա պայքարը սեակցիայի դեմ փիլիսոփայության մեջ, մինչև այժմ ել գրավում են պրոգրեսիվ և առաջավոր գիտության ներկայացուցիչների սեեռուն ուշադրությունը։

Անհրաժեշտ եր Հեղեղի հիմնական իդեան—զարգացման իդեան—ազատել իդեալիստական կեղեկից, վերամշակել հե-

գելյան դիակեկտիկան։ Այդ առթիվ Մարքսը գրում եր կուգելմանին։

«Նա (Դյուրինդը—Ա.) շատ լավ դիտե, վոր հետազոտության իմ մեթոդն այն չեն, ինչ վոր Հեղելինը, վորովհետեւ յես մատերիալիստ եմ, իսկ Հեղելն՝ իդեալիստ։ Հեղելյան դիակեկտիկան հանդիսանում և ամեն մի դիակեկտիկայի հիմնական ձեւը, բայց միմիայն այն նրա միստիկական ձեւից մաքրելուց հետո, իսկ հենց այս և, վոր իմ մեթոդը տարերում և նրանից»²։

«Համեկ(թ)կ պատմության համառոտ դասընթացն» առում եւ.

«...Մարքսն ու Ենդելսը Հեղեղի դիակեկտիկայից վերցրել են նրա միայն «ուացիոնալ հատիկը», դեն գցելով հեղելյան իդեալիստական կեղեկը և շարունակելով զարգացնել այդ դիակեկտիկան՝ նրան արդիական գիտական տեսություն համար»²։

Հեղեղի իդեալիստական փիլիսոփայության քննադատության, ինչպես նաև Մարքսի ու Ենդելսի իդեական զարգացման մեջ մեծ դեր խաղաց նրանց մերձավորագույն նախորդը, գերմանական հայտնի փիլիսոփա-մատերիալիստ Լուդվիգ Ֆոյերբախը։

¹ Մարքս և Սնգելս, Նամակներ, հջ 230։

² Համեկ(թ)կ պատմության համառոտ դասընթաց, հջ 140 (Հայեկներ)։

II. ՀԱԽԴՎԻԳ ՅՈՅԵՐԲԱԽԻ «ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՏԻԿԻ» ՄԱՐՔԻ

Հեղելի մահվանից հետո Գերմանիայում սկսվեց սուր իդեոլոգիական պայքարի ժամանակաշրջանը։ Հեղելի հետեւ վորդներից վոմանք զարդացնում ելին նրա ամենից ավելի ուսակցիոն համոզունքներն իրավունքի, քաղաքականության, պարունակառության բնականառություն։ Ժյուսները, այսպէս կոչված «ձախ հեղելականները», վորոնց հարում ելին Բրունո Բաուերը, Եղդար Բաուերը, Շաբրները, և ուրիշները, փորձում ելին արժատական յեղակացություններ անել Հեղելի փիլիսոփայական ուսմունքից, քննադատության յեղագական կրոնը և փիլիսոփայությունը նույնիսկ կատար քաղաքանության հետ։ «Ձախ հեղելականներին» հարած բողաքականության հետ։ Հեղելականներին հաշվի չառնենք Մարքի ու Ենդոր փիլիսոփաներից, յեթե հաշվի չառնենք Մարքի ու Ենդոր փիլիսոփաներից, վարսելու գաղտացության տարիներին մասնակցում ելին «ձախ հեղելականների» խմբակների աշխատանքին, ամենից ավելի պրոդրեսիվ համոզմունքներ արտահայտեց և շարադրեց հայտնի գերմանական գիտնական, փիլիսոփա-մատերիալիստ Լուդվիգ Ֆոյյերախը։

Պրակտիկ հեղափոխական պայքարը, վոր մզում ելին Մարքսն ու Ենդելու անցյալ դարի 40-ական թվականների սկզբին, սուր կերպով չոշափեց նաև թեորիայի, ժամանակորակես փիլիսոփայության վոլորտը։ Մարքսն ու Ենդելու հոկայական ուշադրությամբ հետեւում ելին այն ժամանակավագայությունը չի ամենամեծ խորությամբ բացահայտեց մարքսիզմի հիմքը՝ ամենամեծ խորությամբ բացահայտեց մարքսիզմի հիմքը։ «Համեկ(բ)կ պատմության համառոտ դասընթացությունը»։ «Համեկ(բ)կ պատմության համառոտ դասընթացությունը»։

«Փրենց մատերիալիզմը բնորոշելով, Մարքսն ու Ենդելու սովորաբար վկայակոչում են Ֆոյյերախին, փորպես մի փիլիսոփայի, վորը վերականգնել է մատերիալիզմն իր իրավունքների մեջ։ Սակայն այդ չի նշանակում, թե Մարքսի և Ենդելու մատերիալիզմը նույնական է Ֆոյյերախի մատերիալիզմին։ Իրոք Մարքսն ու Ենդելու Ֆոյյերախի մատերիալիզմից վերցրեն նրա «Հիմնական հատիկը», շարունակելով զարգացնել և դարձնելով այն մատերիալիզմի գիտական-փիլիսոփայական թեորիա և գեն դցելով նրա իդեալիստական ու կրոնական-եթեկական արտաքին շերտերը»¹։

Իսկ վո՞րն ե Ֆոյյերախի փիլիսոփայության բովանդակությունը։ Ի՞նչն ե նրա մատերիալիզմի «Հիմնական հատիկը»։

Լուդվիգ Ֆոյյերախը ծնվել է Գերմանիայում 1804 թվին, Լանգուհուա ավանում։ Նա դերմանական հայտնի իրավաբան և պետական գործիչ Անսելմ Ֆոյյերախի վորդին է։ Այն ընտանիքը, վորի մեջ գաստիարակվում եր Ֆոյյերախը, չափազանց բազմակողմանի շահերով եր ապրում։ Նրա յեղացրներից մեկն աչքի ընկնող նկարիչ եր, մյուսը՝ հրապուրվում եր բնական դիտություններով, յերրորդը՝ գնալով հոր շավլով՝ քաղաքական գործունեցությամբ եր դրադվում։

Լուդվիգ Ֆոյյերախը, լինելով սկզբում Երլանգենի, իսկ հետո Բեռլինի համալսարանի ուսանող, ուսումնասիրում եր աստվածաբանություն և կրոնի ու փիլիսոփայության պատմություն, հրապուրվում եր Հեղելի փիլիսոփայությամբ։ Յերիտասարդ ուրիշներին Ֆոյյերախը Հեղելի մոլի հետեւ վորդ եր։ Նրա առաջին յերկը, վոր նա հրատարակեց «Մտքեր մահվան և անմահության մասին» վերնագրով, կասկած առաջացրեց գերմանական վոստիկանության մեջ և ստեղծեց ուսակցիոններների այն անհանդուրժամբ վերաբերմանքը զեպի փիլիսոփան, վոր շարունակվեց մինչև 1872 թ., այսինքն՝ մինչև Ֆոյյերախի մահը։

Առանձին ատելություն ելին տածում դեպի Ֆոյյերախը

¹ Համեկ(բ)կ պատմության համառոտ դասընթաց, էջ 141 (Հայերին)։

միտոիկները, տերտերները, կրոնամոլները, քաղաքական ռեակցիոներները: Ֆոյերբախը նշանց մասին արտահայտվում եր իբրև իր ամենաանհաջող թշնամիների մասին: Այդուհետ, պահպանվել են Ֆոյերբախի նամակները, վորոնցից մեկի մեջ նա իր հակառակորդների մասին հայտարարում եր, թե «յեթե տերտերները խելամփո են, ապա նրանք չար են, անազնիվ, կեղծավոր: Խոկ յեթե նրանք ազնիվ են ու բարի, ապա նրանք հիմար են»:

Ֆոյերբախը՝ լինելով համարձակ, բնությամբ չափազանց վճռական՝ չեր հանդուրժում քաղաքական ճնշումներ, առանձնապես գիտական ստեղծագործության բնագավառում: Այնելով գերմանական ուսղիկալորեն տրամադրված բուրժուազիայի պայծառ իդեոլոգը, պայքար մղելով բուրժուական-դեմոկրատական հիմնարկությունների համար, Ֆոյերբախը նպաստում եր առաջազրո ուղղղիցիոն տրամադրությունների աճմանը պրուսական ուսակցիոն արտողութիզմի վերաբերմամբ Գերմանիայում:

Իր կյանքի վերաբեր մասը Ֆոյերբախն անց կացրեց քաղաքական պայքարից գուրս, բուռն ցնցումներից մեկուսի, վորոնցով այնքան հարուստ եր XIX դարի կեսերի գերմանական պատմությունը: «Գերմանական Սպինոզան», ինչպես նրան անվանում եյին այն ժամանակ, չեր կարողանում մասնավորապես նույնիսկ լայն գիտական ասպարեզը գուրս գալ, վարովհետեւ ամբողջ կյանքի ընթացքում չկարողացավ փիլիսոփայական ամբոխոն ստանալ դերմանական համալսարաններից և վոչ մեկում: Պրուսական կառավարությունը վախենում և հալածում եր այդ պրոդեստրվ, դեմոկրատականութեն տրամադրված, համարձակ և վճռական մատերիալիստամածողին: Զնայած ինչնպունքներին՝ Ֆոյերբախին հաջողվեց հեղափոխական ժամանակաշրջանում, 1848 և 1849 թվերին, դասախոսությունների մի ցիկլ կարդալ Հայելիբերգում՝ ուսանողների, ինտելիգենցիայի, բանվորների, արհեստավորների և առհասարակ դեպի սրբուսական արտողութիզմը ուղղվիցիոն կերպով տրամադրված մարդկանց համար: Բայց նույնիսկ այսեղ ել նա արգելքների հանդիպեց: Ենք Ֆոյերբախի դասախոսությունների կուրսը կազմակեր-

պողները դիմեցին Հայելիբերգի համալսարանի շենքը դասախոսությունների ունկնդիրների հպմար տրամադրելու խընդուռք, համալսարանի վարչությունն այդ ինդիրը մերեց: Ֆոյերբախն ստիպված եր դասախոսությունները՝ կարդալ քաղաքային խորհրդի շենքում:

Ֆոյերբախն իր կյանքն ավարտեց ծայրահեղ աղքատության մեջ: Կարծես վորպես ծաղր փիլիսոփայի վերաբերմամբ՝ այն տունը Բրուկբերդում, վորզեղ ապրում եր Ֆոյերբախը, նրա մահից հետո ձեռք բնից բավարական կառավարությունը, նրա մեջ բնականեղ սարքելով հանցագործների համար և այդ յուրահատուկ հիմնարկության գլուխ նշանակելով մի տերտերի, այսինքն՝ Ֆոյերբախի ամենակատաղի հակառակորդին:

Իր գիտակցական կյանքի առաջին տարինները, մոտավորապես մինչև 1839 թվականը, Ֆոյերբախը Հեղելի հետեւորդ եր: Այդ ժամանակաշրջանին և վերաբերում նրա յերեկի աշխատությունը՝ «Մտքեր մահվան և անմահության մասին», նրա պատմա-փիլիսոփայական լերկերը, մասնավորապես նրա գրվածքը հոլլանդական փիլիսոփա-մատերիալիստ Սպինոզայի մասին: Այդ աշխատություններում նա փորձում և մարդկային մտքի զարգացման պատմությունը հետաքննել իրին բանականության զարգացում, իսկ առանձին փիլիսոփայական սիստեմները՝ հետազոտել իրին այդ բանականության պատմական կյանքի և զարգացման յուրահատուկ դրսեւորում և արտահայտություն: Բայց արդեն 1839 թվին Ֆոյերբախը համոզվեց, վոր Հեղելի ուսմունքի տեսակետից չի կարելի խոր գիտական յեղրակացություններ անել բնության և մարդու կյանքի մասին: Հեղելին իր ընթերցողներին և ունկնդիրներին կոչ եր անում, ինչպես առում եր Ֆոյերբախը, ուսումնասիրելու «յերկնային վոլորտները»: Այդ բանը չեր բավարարում Ֆոյերբախին: 1839 թվին նա գրեց «Հեղելի փիլիսոփայության քննադատությունը» վերնագրով հայտնի աշխատությունը, վորի մեջ և տվեց Հեղելի իդեալիստական փիլիսոփայությունը բովանդակալից և քննադատական վերլուծությունը: Այդ նույն փաստարկները Հեղելի դեմ հետո

գարդացվեցին 1841 թվին Ֆոյերբախի ամենից ավելի կարե-
վոր աշխատության—«Քրիստոնեյության եյության» մեջ։
Հիմնական միտքը, վոր Ֆոյերբախը ձևակերպում եր Հեղեղի
գեմ, այն եր, թէ փիլիսոփայությունը չի կարող իր իսկա-
կան արդյունքներին հասնել, քանի նա փակվում ե զուտ
մտքի ըրջանակների մեջ։ Բայ Ֆոյերբախի՝ փիլիսոփայու-
թյունն ինքը, սեփական ուժերով, չի կարող կյանք ստեղ-
ծել։ Փիլիսոփայությունն ինքն իրենից չի ծնում իր իդեա-
ների ամբողջ հարստությունը։ Միմիայն բնությունն ու-
սումնասիրելով ե փիլիսոփան գիտություն ձեռք բերում։
Այդ պատճառով ել՝ փիլիսոփայի իսկական խնդիրն, ըստ
Ֆոյերբախի, այն չե, վոր նա ներփակվի առանձին մարդու
մտածողության սահմաններում, այլ այն ե, վոր նա իր հա-
յացքները գարձնի ղեպի բնությունը։

Ֆոյերբախը հոչակեց մատերիալիզմի հաղթանակը։ Նա
առացուցեց, վոր հեգելյան փոեալիզմը վոչ այլ ինչ ե, յեթե
վոչ փիլիսոփայորեն ներկած աստվածաբանություն, աշ-
խարհի և նրա ծագման մասին յեղած տերտերական տեսա-
կետի փիլիսոփայական արտահայտությունը։

Հեղեղի «Բացարձակ վողին», տում եր Ֆոյերբախը,
սպուրական մարդկային դիտակցությունն ե, բայց մարդուց
կտրված դիտակցությունը։

Ի հակագրություն դրան՝ Ֆոյերբախը պնդում եր, վոր
դիտակցությունը նյութի ծնունդն ե։ Փիլիսոփայության
հիմնական հարցի այս մատերիալիստական լուծման, հեղե-
լյան իդեալիզմին այս վճռական հարվածը հասցնելու մեջ ե
Ֆոյերբախի պատմական ծառայությունը։

Ենգելսն իր «Լուդվիգ Ֆոյերբախ» կլասիկ աշխատու-
թյան մեջ նկատել ե, վոր յերբ լույս տեսավ Ֆոյերբախի
«Քրիստոնեյության եյությունը» յերկը, ապա մեկ հարվա-
ծով նա ցրեց իդեալիստական սիստեմներում կուտակված
կաղեմի հակասությունները, հոչակելով մատերիալիզմի
հաղթանակը։ Ենգելսը գրում ե, վոր Ֆոյերբախի իդեաների
եյությունը կարելի կլիներ հետեւալ դրույթներին հանդեց-
նել։

«Բնությունը գոյություն ունի անկախ վորեն փիլիսո-
փայությունից։ Նա այն հիմքն ե, վորի վրա աճում ենք

մենք, մարդիկ, նրա արտադրանքները։ Բնությունից և
մարդուց դուրս վոչինչ չկա։ Մեր կրօնական յերեակայու-
թյան ստեղծած բարձրագույն եյակները—միմիայն մեր սե-
փական եյության ֆանտաստիկ արտացոլումներն են։ Նզով-
քը վերցված եր, «սխանմը» ջախջախված եր և մի կողմ
շղրսպած . . .»։

Յեզ այնուհետև Ենգելսը նկատում ե.

«Ու չի ապրել այդ կրքի պատարար ազդեցությունը,
նա չի ել կարող պատկերացնել այն։ Մենք բոլորս հրձվան-
քի մեջ եյինք, և մենք բոլորս առժամանակ Ֆոյերբախի հե-
տեւրողներ զարձանք։ Թէ ինչպիսի վոգերությամբ վողջու-
նեց Մարքսը նրա հայացքը և ինչպիսի մեծ ազդեցություն
գործեց այն նրա վրա, — չնայած նրա բոլոր քննադատական
վերապահումներն եւ կարելի յի տեսնել նրա «Սրբազն ըն-
տանիքը» գրքեց»¹։

«Քրիստոնեյության եյությունը», Մարքսի ու Ենգելսի
արտահայտությունը, «Հրաժարակցուցեց Հեղեղի համաշխար-
հային վոգուն»։ «Սրբազն ընտանիքը» մեջ նրանք այսպիս-
են գնահատում Ֆոյերբախի պատմական ծառայությունը։

«Ո՞վ վոչնչացրեց հասկացողությունների դիակեկտի-
կան—աստվածների պատերազմը, վոր ծանոթ ե միայն փի-
լիսոփաններին։ Ֆոյերբախը։ Ո՞վ մաշված հնոտիների տեղը,
«անսահման ինքնազիտակցության» տեղը դրեց վո՞չ թէ
«մարդու նշանակությունը» (կարծես մարդը ելի ինչ—վոր մի
ուրիշ նշանակություն ունի, քան այն, վոր նա մա՞րդ ե),
այլ հենց մարդուն իրեն։ Ֆոյերբախը և միմիայն Ֆոյեր-
բախը»²։

Յեզ իրոք, Ֆոյերբախի ամրող ուշադրությունը նրա
Հեղեղով տարվելուց հետո ուղղված եր իդեալիզմի դեմ։
Բարձր գնահատելով Ֆոյերբախի մատերիալիստական փիլի-
սոփայությունը՝ Մարքսը Ֆոյերբախին հրավիրում եր մաս-
նակցություն ունենալու քրանուական տարեգրե-
րում։ Դուք, գրում եր Մարքսը, բուն իսկ պատմության
կողմից կոչված եք հանդեռ գալու Շելլինդի և Հեղեղի դեմ։

¹ Մարքս և Ենգելս, Համ. XIV, Էջ 642։

² Մարքս և Ենգելս, Համ. III, Էջ 117։

Դուք շուտ աված Շելլինդն եք: Վարչափով Շելլինդը մատերիալիզմի ծաղրանկարն է, նույնչափով բնադիրը, այսինքն՝ Ֆոյերբախին ինքը, հենց միայն իր յերեսն զարով պետք է խորտակի իդեալիզմի այդ ուրիշականը, վոր հանդես ե գալիս հանձնու Հեղելի և Շելլինդի:

Միևնույն ժամանակ Մարքսն ու Ենդելսը, այդպես բարձր գնահատությով Ֆոյերբախի ծառայությունները, հենց սկզբից ենթատեսնում եյին նրա մատերիալիզմի սահմանափակիչածությունը:

Ֆոյերբախը, քննադատելով Հեղելի փիլիսոփայությունը, դեն եր նետում նաև այն դրականը, ինչ վոր իր հետ բերեց գերմանական կլասիկ իդեալիզմը, մի կողմ նետեց Հեղելի դիալեկտիկան: Նա յերբեք չեր հասկանում հեղելյան գիտեկտիկայի նշանակությունը, Հեղելի փիլիսոփայությունն անվանելով թեորիդիայի, աստվածաբանության, կրոնի վերջին ապաստարանը:

Անկասկածելի յե, վոր իդեալիզմի այդպիսի քննադատությունը Ֆոյերբախի կողմից առաջ եր յեկել այն ժամանակ կազմավորված հետամնաց հասարակական հարաբերությունների չորհիմ:

Բայց կենինի խոսքերի՝ Ֆոյերբախը չհասկացավ քաղաքականության տեղը մարդու կյանքում: Այդպես, որինակ, նա հրաժարվեց իր թեկնածությունը դնելու ֆրանկուրտի ազգային ժողովի համար: Իր նամակներից մեկում Մարքսը գրում եր, վոր Ֆոյերբախի մոտ չափազանց շատ բնություն և չպիտի քիչ քաղաքականություն կա: Այստեղից ել հենց, իսկապես, բղխում ե Ֆոյերբախի սահմանափակիչածությունը: Նա բուրժուատական-դիմոկրատական յերազանքների շրջանակներից այն կողմը չանցավ:

Հասարակական կյանքի վերաբերմամբ ունեցած իր հայցքներում Ֆոյերբախը մնաց իդեալիզմի հողի վրա: Մարքսն ու Ենդելսը, վերջնականապես հաղթահարելով Փոյերբախյան մատերիալիզմի սահմանափակությունը, զրում եյին «Գերմանական իդեալոգիայում»:

«Վորչափով Ֆոյերբախը մատերիալիստ է, նա պատճությամբ չի զբաղվում, իսկ վորչափով նա քննարկում է պատ-

մությունը, նա բնակվ մատերիալիստ չե»¹: Հասարակության վերաբերյալ ուսմունքի միջ փիլիսոփան ձգտում եր սեփականության այնպիսի բաշխման, վորպեսզի վոչնչացվի չափազանց հարստությունն ու աղքատությունը, ձեռք բերվի սեփականության հավասարաչափ բաշխում ունիվորմների, այլ վոչ թե հեղափոխության միջոցով: Ծնորհիվ այդ հանգամանքի, Ֆոյերբախի կարծիքով, կանհետանա պառւպերիզմը, աղքատությունը, կամայականությունը, իսկ իդեոլոգիայի բնագագում՝ խալարամոլությունը, ունակցիան: Մարդը ներգաշնակորեն զարդացած եյակ կլասնա, նա, Ֆոյերբախի կարծիքով, կհետաքրքրվի «Ճշմարիտ կրօնով» և փիլիսոփայությամբ: Զնայած այսպիսի յերազանքներին ապադա ներզաշնակորեն զարդացած մարդու մասին և հասարակության մասին, վորտեղ չի լինի կամայականություն, ունակցիա, չի լինի հարստության չափազանց մեծ կենտրոնացում մի բերվելում և աղքատության՝ մյուս թեեռում, Ֆոյերբախն ընդունում եր, վոր հասարակությունն իր բարձրագույն իդեալները կենսագործում և մարդկանց կրօնական ձգտումների միջոցով, սերո կրօնի միջոցով, մարդկանց ճշմարիտ մարդկային հարաբերությունների միջոցով միմյանց վերաբերմամբ: Յեկ նույնիսկ մարդկային հասարակության պատճությունը Ֆոյերբախը ժամանակաշրջանների յե բաժանում՝ կախված այն բանից, թե ինչպիսի կրօնական սիստեմներ են տիրապետող յեղել այս կամ այն ժամանակաշրջանում: Այս ամենը վկայում է այն մասին, վոր հասարակական հայացքների բնադագառում Ֆոյերբախը իդեալիզմի սահմաններից զուրս չի յեկել: Ֆոյերբախի մատերիալիզմի այլպիսի սահմանափակության հիմնական պատճառն այն եր, վոր նա չեր հասկանում հասարակական մարդու պրակտիկ գործուներության դերը, չեր հասկանում զարդացման իդեան-դիալիզմ, վոր տվել եր Հեղելը, թեպետև իդեալիստական կերպարանքով:

Ֆոյերբախի մատերիալիզմը պայծառորեն յերեսում ե, յերբ նա վճռում է հիմնական փիլիսոփայական հարցը:

Ֆոյերբախն իր «Նախնական թեզիններ փիլիսոփայու-

¹ Մարքս և Ենդելս, Համ. IV, էջ 36:

թյան ուժորմի շուրջը» գրվածքում գրում ե, թե մտածողությունն, ինքն ըստ ինքան վերցրած, արարակատ կերպով, բնության կապակցությունից գուրս, վոչ մի դրական գիտություն չի տալիս, վոր զբական գիտությունն առաջ ե գտիտ իրեւ մարդու շիման արդյունք բնության հետ կամ, ինչպես գրում ե Ֆոյերախը, «յեսի» և «լոչ-յեսի» շիման արդյունք: Բնությունը բոլոր զիանիքների ազրյուրն ե. բնությունից ե սկսվում ճշմարիտ փիլիսոփայությունը, իսկ փիլիսոփայությունը հանդես ե գալիս իրեւ մնացած դիտությունների նախահայր: Բնությունը բոլոր զիտությունների մայրն ե: Գիտության և գիլիսոփայության ընդհանուրն այն ե, վոր նրանք ծագում են բնությունից, իրենց սկիզբն են առնում փաստերի մեջ, նրանց ընդհանուր հիմքը նյութական աշխարհն է: Իր «Նախնական թեզիներ փիլիսոփայության ուժորմի շուրջը» և «Փիլիսոփայության սկզբնավորության մասին» վերնագրով աշխատություններում Ֆոյերախն այն հարցն ե զնում, թե փիլիսոփայությունն իր յեղակացություններում հենվում ե բնության փաստերի վրա: Բայց ի՞նչպես ե անում նա այդ բանը: Ի հակադրություն Հեղելի՝ Ֆոյերախը գտնում էր, վոր փիլիսոփայությունը գո՛չ միայն վերջիվերջո յև հանդում սեալությանը, բնությանը, այլ, ընդհակասակը, նա ամինի շուտ սկսում ե սեալությունից, բնությունից: «Վոդին և գալիս զդացմունքից հետո, և վոչ թե զդացմունքը վոզուց հետո», — գրում ե Ֆոյերախը: Մարդու միտքը — դա իրերի վերջն ե, և վոչ թե սկիզբը: Անցումը գեպի բնություն մաքից, զիտակցությունից — «զուտ հավատի քմահանույթն» ե: Մի այլ տեղում նա մատնանշում ե, վոր յեթե մարդն սկսում ե սեալության, բնության ուսումնասիրությունից և մնում ե նրամեջ, ապա փիլիսոփայությունը մարդու համար մշտական պահանջմունք և հանդիսանում: Իսկ յեթե մարդը փիլիսոփայությական սիստեմ ե կառուցում, չդիմելով բնության ուսումնասիրությանը, ապա այդ սիստեմը կինի դատարկ ե անբովանդակ, նա կինի տերտերականություն:

Արդեն փիլիսոփայության սկզբնավորության ըմբռնումն իսկ Ֆոյերախի կողմից՝ ուղղված ե հեղելյան ուսմունքը

գեմ փիլիսոփայության խնդիրների և առարկայի մասին: Հեղելի մոտ ձշմարիտ փիլիսոփայությունը միանաւմ է կրոնի հետ: Ֆոյերախի մոտ ձշմարիտ փիլիսոփայությունն իր սկիզբն ե տառում այսուղ, վորսեղ նա իրեն սահմանագատում է կրոնից: Հեղելի մոտ մարդը դարձագումը կապարվում է «բացարձակ իդեալի» հասուել ակտիվության ընորհիվ: Ֆոյերախի մոտ՝ ուշադրության կենտրոնում ե բնության իրեն կյանքը: Բնությունն ակտիվ ե և միանգամայն ինքնուրույն: Այսուղ առկա յեն տարբեր յելակետային դրույթներ, փիլիսոփայության առարկայի և բովանդակության հակադիր հիմնային բում:

Յեթե փիլիսոփայության ամբողջ բովանդակությունն ու ամբողջ բնույթը, Ֆոյերախի ուսմունքի համաձայն, կազմակորում ե մարդու և բնության փոխարարերությունից, ապա ի՞նչ ե ներկայացնում իրենից Ֆոյերախի մարդը: Ֆոյերախը մարդուն դիտում է իրեւ բնության մի մասը: Սուրյեկտը, «յեսը», մարդը միաժամանակ հանդիսանում է նաև որյեկտ, բնության մաս, վոր յենթարկվում է բնության որենքներին: Այդ պատճառով ել, ըստ Ֆոյերախի, «յեսի» հարաբերությունը գեպի «լոչ-յեսը», սուրյեկտինը՝ գեպի որյեկտը, մարդունը՝ դեպի բնությունը կտուցված ե այն հիմունքով, վոր մարդը, սուրյեկտը, միաժամանակ հանդիսանում է նաև որյեկտ և այս իմաստով միանություն և յերեան բերում որյեկտի հետ, բնության հետ:

Ճիշտ ե, Ֆոյերախի մարդը մի վերացական եյություն ե, վոր կապված չե վո՛չ վորոշ կուսակցության, զառակարգի, զատի հետ, վո՛չ վորոշ քաղաքական շահերի հետ, վո՛չ ել հասարակականորեն-պատմական վորոշ միջավայրի հետ: Այդ մարդը բնության մասն ե, և միմիայն այդքան: Արդախի մարդը միայն կենսարանական եյություն ե: Այդ իմաստով Ֆոյերախի մարդը կես վերացական ե, պատիվ, նա կրավորական, հայեցական երակ ե: Ակտիվ կողմը գտնում է որյեկտի, բնության մեջ: Բայց Ֆոյերախի ուս-

մունքի՝ միմիայն բնությունն և ներգործում մարդու վրա, իսկ մարդը մնում է պասիվ:

Թեև ըստ Ֆոյերբախի մարդը ներկայացնում է արտաքին աշխարհի, բնության և սուրյեկտիվ աշխարհի միասնությունը և այդ իմաստով նա հանդիսանում է փիլիսոփայության բարձրագույն առարկան, սակայն Ֆոյերբախն ի վիճակի չեր նշել անցումը մարդուց դեպի միջավայրը, դեպի բնությունը: Այդ չի ել կարելի անել այնպիսի փիլիսոփայական դիրքերից, ըստ վորոնց մարդը անդործոն, պասսիվ եյակ է: Նշել անցումը մարդուց դեպի բնությունը հնարավոր և միմիայն այն դեպքում, յեթե ուսումնասիրենք մարդու գործունեյությունը բնությունը փոփոխելու գործում, յեթե ուսումնասիրենք մարդկանց դասակարգային պայքար:

Յերբ լենինը խոսում էր գերմանական մատերիալիստի փիլիսոփայական սիստեմի թերությունների մասին, նա ամենից առաջ մատնանշում էր Ֆոյերբախի այսպես կոչված անտրոպոլոգիզմը, վոր Ֆոյերբախի փիլիսոփայությունը հայեցական և գարձնում, իսկ փիլիսոփայության առարկան—մարդուն—վերացական եյակ:

Իսկ ի՞նչ և ներկայացնում Ֆոյերբախի փիլիսոփայական ուսմունքի այլ անտրոպոլոգիզմը: «Անտրոպոլոգիա» բառը ծագում է հունարեն յերկու բառերից: «անτρոպո»—մարդ, «լոգոս»—ուսմունք, բան (խոսք)՝ միտք: Անտրոպոլոգիա—ուսմունք, գիտություն մարդու մասին, մարդաբանություն: Ֆոյերբախը փորձ արեց՝ հենվելով մարդու վերաբերյալ ուսմունքի վրա՝ մի ամրող փիլիսոփայական սիստեմ կառուցել:

Առաջին տպավորությունն այս և յեթե Ֆոյերբախի մարդը միանական և բնության հետ, յեթե նա ինքը բնության մի մասն և, ապա նա, այլ մարդը, ուեալ է, կոնկրետ է: Սակայն այս միայն առաջին տպավորությունն է: Բայց կան և բնության առնել, թե ինչպես են դրսեղիում բնության առանձնահատկությունները մարդու մեջ և ինչով և առրերգում մարդը կենդանական աշխարհից, վոր բացահայտվի Ֆոյերբախի ուսմունքի թուլությունը: Ենդեւն իր

«Լաւգվիդ Ֆոյերբախ» գրքում նկատել ե, վոր թեև Ֆոյերբախի մարդը ուեալ է, սակայն նա մի վերացական, աշխարհից դուրս գտնվող եյակ է:

«...Նա յելակեած է վերցնում մարդուն: Բայց նա վոչ մի բառով անգամ չի հիշատակում մարդուն շրջապատղ աշխարհի մասին, և այդ պատճառով ել նրա մարդը նույն վերացական մարդն է մնում, վոր հանդես է գալիս կրոնի մեջ»¹:

Ենդեւսի այս վերլուծությունը բաց է անում մետաֆիզիկական մատերիալիզմի սիստեմի կարևորագույն արատներից մեկը, մատերիալիզմ, վորի վորպես ներկայացուցիչ հանդես եր գալիս նաև Ֆոյերբախը: Այդ արատը նրա փիլիսոփայության հայեցականությունն է:

Յեթե գիալեկտիկական մատերիալիզմի ուսմունքով՝ մարդու և բնության բարձրագույն միանությունը յերեան և գալիս մարդու պրակարիկ գործունեյության մեջ, արդյունաբերության մեջ, ապա, Ֆոյերբախի ուսմունքով, գործի գործյունը բոլորովին այլ է: Նրա մոտ մարդը տրված և միանգամ ընդմիշտ: Նրա հատկություններն անփոփոխ են: Նա կենսաբանական եյակ է: Ֆոյերբախը չկարողացավ բաց անել մարդու պրակարիկ—քննադատական, չեղափնխական քաղաքական գործունեյությունը: Նա մարդուն դիտում էր նրան շրջապատղ հասարակական միջավայրից դուրս: Հենց այս և նրա փիլիսոփայական ուսմունքի այսպես կոչված անտրոպոլոգիզմի եյությունը: Իզուր չէ, վոր Մարքսի առաջին թեզին Ֆոյերբախի մասին ասում է, վոր Ֆոյերբախի մատերիալիզմը հայեցական էր, վոր Ֆոյերբախը չեր հասկանում հասարակական մարդու չեղափոխական, պրակարիկ—քննադատական և արտադրական գործունեյության գերը:

Չնայած Ֆոյերբախի՝ մարդու վերաբերմամբ ունեցած հայացքի ամբողջ սրամտությանն ու խորությանը, նրա թեսորին սահմանափակ եր, անբավարար: Զե՞լ վոր ինչքան ել մարդիկ Փիզիոլոգիայի և բիոլոգիայի տեսակետից ուսումնասիրեյին, ասենք, մարդկային ձեռքի կառուցվածքը,

¹ Մարքս և Նեգել, Համ. XIV, էջ 057—058:

նրանք յերբեք չեյին կարող այն հսկայական պատմական գործի խմացությանը համեմ, վոր կատարվել և ձեռքի ողոնությամբ: Վորպեսզի բացահայտենք մարդկային ձեռքի նշանակությունը, գերը հասարակության պատմության մեջ, պահանջվում և դիմել մարդու արտադրական գործունեյությանը, վորտեղ մարդկային գիտակցության և մարդկային ձեռքի ընդունակությունը յերեան են գալիս պրակտիկ կերպով—գործուն ձեռվ:

Յոլոր վերեւում ասվածներով բացարդվում և, թե ինչու Ֆոյերբախը արսարակու մատերիալիստ մնաց նաև իր խմացաբանության մեջ: Նա իր բոլոր հասուն յերկերի մեջ հայտաբռում եր այն մասին, վոր զգայականությունը վճռականն և, ուրիշից անարտածելին, առաջնը փիլիսոփայության մեջ: Նա մատունանշում եր, վոր զգայության որդաններն են: Ֆոյերբախի մոտ զգայականությունը գիտվում և վորպէս ընության պասիվ ընկալում մարդու կողմից: «Փիլիսոփայության ունֆորմի անհրաժեշտությունը» վերնազբով փոքրիկ տրակտատում Ֆոյերբախը 29-րդ թեզիսում գրում եր. «Սուրյեկտիվ սկըլորունքն ու փիլիսոփայության գարգացումը հանդիսանում են նաև նրա զարգացման որյեկտիվ սկզբունքը: Նախքան վորակը մտածելը՝ զու այն զգում ես: Մատածողությանը նախորդում և պասիվ վիճակից: Մարդկային գիտակցության պասիվ վիճակը, վոր Ֆոյերբախի մոտ նույն և, ինչ վոր զգայականությունն ընդհանրապէս, չենց ամեն մի գիտության առաջին աստիճանն է: Այսպիսով, Ֆոյերբախի մոտ կաօւելի յի գործունեյությունը գտնել լոկ սահմանափակ փորբուռմ, վորպէս զգացողությունների գործունեյություն: Բայց նրա մոտ չկա զործնականութենչ զգայական գործունեյություն: Իսկ հենց սրա մեջ և դիալեկտիկան մատերիալիզմի հյական արքերություններից մեկը մետափիլիկական մատերիալիզմից: Յերբ Ֆոյերբախը խոսում եր զգայությունների գործունեյության մասին, նա խոսում եր գիտակցության գործունեյության մասին: Յերբ զգայական գործունեյության մասին խոսում և գիտեկտիկ-մատերիալիստը, նա նկատի ունի գործնականորեն-հեղափո-

խական զգայական գործունեյությունը, այդ թվում նաև քաղաքական գործունեյությունը: Տարբերությունն այստեղ սկզբունքային է:

Ֆոյերբախը մնաց հայեցական մատերիալիստ: Նա խմացության պրոցեսը բաժանեց յերկու աստիճանի, վորոնցով անցնելիս մարդը զրանորում և իրեն իրեմ պատսիվ, կրագորական ևյակ: Խմացության առաջին աստիճանը նա անվանում էր «սրտի» գործունեյություն, յերկրորդը—«պլիի» գործունեյություն: Բայտ Ֆոյերբախի՝ սիրոն ավելի հեղափոխական և, քան իսելքը սիրութիւնը յե զգայական եներգիան յով: Գրուխն ուշադրությունը կենազոնացնում և այն բանի վրա, ինչ վոր միասնական և բնության մեջ: Այդ միասնականը գլուխն արձանագրում և իրեմ արսարակցիա: Յերբ մարդը սրտի գործունեյությունը մի կողմ և նետում և չափազանց հրապարակում և գլուխ գործունեյությամբ, բնությունը թառամում և իր հարստության մեջ: Գրուխն ընդունակ է յերեմն առաջ վագելու, բայց գլուխ չափազանց համար ժամանակով տեղագործում և հինը: Այս խմաստով գլուխը պահպանողական և, և միայն սիրութիւնը վիտական զարգացման համար ուղի յե ցույց տալիս: «Փիլիսոփայության ունֆորմի անհրաժեշտության մասին» վերնագրով յերկում Ֆոյերբախն այսպիս և վճռում իր փիլիսոփայության համար կարևոր այդ հարցը. «Փիլիսոփայության ևյական գործիքը, որդանը հանդիսանում և գլուխը, հողսի, մետափիլիկական սահմանափակության, իգետմիզմի աղբյուրը, և սիրութիւնը տանջանքի աղբյուրը... Հայեցական «յեսը» վորոշում և առարկան, մատածողության մեջ յիս հանդիսանում եմ յես, իսկ հայեցության մեջ՝ վոչ-յես»:

Ֆոյերբախը խմացության սկիզբն ընդունում և բնության արտացոլումը մարդու զգացողությունների մեջ: Բայց նա նույնքան բարձր և զնահատում նաև բանականության դերն իմացության մեջ: Նա գտնում է, վոր մարդը, ձգտելով թափանցել ընության զալտնիքների մեջ, չի կարող յոլա զնալ առանց բանականության: Բնության փաստերի ամբողջ ընդհանրացումը տեղի յե ունենում բանականության առաջա-

բած իդեաների ոգնությամբ։ Ֆոյերբախի կարծիքով՝ բոլոր պէտելիքների հշմարիտ լինելու չափանիշը մարդկանց համակարծեք լինելու է։ Յեթև իդեաները ընդհանուրի կողմից ընդունված են հասարակության մեջ, հետեւարար՝ նրանք հշմարիտ են։ Յեթև վորեն թեորիայի կամ գաղափարի վերաբերմամբ տարածայնություն կա, տարբեր կարծիքներ գոյություն ունեն, նշանակում են այդ իդեաները դեռ ավարտուն ձև չեն ստուցել, այսինքն՝ ըստ Ֆոյերբախի՝ փիլիսոփայական և գիտական թեորիաների հշմարտության ու կեղծության չափանիշն ընկած և գիտակցության սահմաններում։ Բայց դա մարդկային գիտելիքների հշմարտության կամ կեղծության իդեալիստական չափանիշն է։ Զե՞ վոր չեկարելի թեորիայի հշմարտությունը կամ կեղծությունը գնահատել՝ մնալով գիտակցության սահմաններում, հենցիով միմիայն իդեաների տարածվածության վրա հասարակության մեջ։ Թեորիայի հշմարտության որյեկտիվ չափանիշը գտնելու համար հարկավոր և զուրս գալ թեորիայի սահմաններից, այսինքն՝ դիմել հենց իրականության իրեն զարդացմանը, մարդու պրակտիկ գործունեյությանը։ Ֆոյերբախն այսեղ անհետակողականորեն եր կիրառում իր մատերիալիզմը, թեև հայտարարում եր, վոր բնությունն և հանդիսանում վորու, մտքի բազինը։

Ֆոյերբախը փիլիսոփայական մտքի պատմության մեջ հայտնի յե վո՛չ միայն իբրև մատերիալիստ, այլև իբրև կրոնի աչքի ընկնող ըննադատ։ Լենինը հսկայական նշանակություն եր վերաբրում Ֆոյերբախի «Դասախոսություններ կրոնի եյության մասին» վերնազրով պրֆեն—կրոնի ըննադատության վերաբերյալ այդ կլասիկ աշխատությանը։ Լենինը կոնսպիկտ և կազմել այդ չարագրությունից և նշել ե զբքի ամենից ամիելի փայլուն հասպածները, մեկնարանել և այս բոլոր մտքերը, վորոնք իբրև դրական նվաճումներ մտել են ասավածաշնչի, քրիստոնեյության և իդեալիզմի քննադատության մեջ։

Այդ պրօւմ Ֆոյերբախը հարցն այս կերպով և զնում ամբողջ նախկին փիլիսոփայությունը անհամար ամուսնություն և կնքել կրոնի հետ, վոր այժմ պետք և լուծվի։ Իբրև կրոնի քննադատության հետեւանք՝ «հազարի տեղ

հանդես և դավիս անհավատությունը, աստվածաշնչի տեղ՝ բանականությունը, կրոնի տեղ՝ յեկեղեցին, յերկնքի տեղ՝ յերկիքը... դժոխքի տեղ՝ նյութական կարիքը, իսկ քրիստոնուի տեղ՝ մարդը»։ Ֆոյերբախի կարծիքով՝ այս պետք է լինի մարդկանց հայացքների կրոնական թմբիրից ազատվելու արդյունքը։

Սակայն Ֆոյերբախը չեր ընում գիտությունը կրոնից լիովին ազատագրելու հարցը։ Նո հնարավոր և անհրաժեշտ եր համարում կրոնի իբր թե ունեցած «առավելությունները» փիլիսոփայության հանդեպ ներառել բուն իսկ փիլիսոփայության մեջ, կրոնը դարձնելով փիլիսոփայական, իսկ փիլիսոփայությունը՝ կրոնական։ Ֆոյերբախի մոտ զարմանալի կերպով միահյուսվում են աթելովն ու կրոնի քննադատությունը կրոնը փիլիսոփայության հետ միացնելու անհրաժեշտությունն ընդունելու հետ։

Ֆոյերբախը կրոնը սահմանում եր վորպես զոյսություն չունեցողի, վոչ-ունեալի ֆանտաստիկ պատկերների միակըցված ամբողջություն։ Կրոնը աղիտության զավակն է։ Կրոնը, Ֆոյերբախի կարծիքով, վոչ այլ ինչ և, յեթե վոչ մարդու հատկությունների փոխանցումը բնությանը, բնության աստվածացումը։ Կրոնական հայացքների համաձայն՝ քնությունը ձեռք և բերում մարդուն ներհատուկ ընդունակություններ, ուժեր, շահապրզություններ, բնույթ, և այդ սպատճառով ել աստվածացում և։ Բավկան և միայն, վոր մարդիկ այդ բնության մեջ հայտնագործեն խոկական բնությունը, իսկ մարդուն մեջ՝ խոկական մարդուն, և այդ կրոնական թաղանթն ինքն իբրև զեն կընկնի։ Ֆոյերբախն իր «Դասախոսություններ կրոնի եյության մասին» վերնազրով գրքում ապացուցում է, վոր մարդը աշբեր ժամանակներում տարբեր կրոնական պատկերացումներ և ստեղծել։ Այստեղից նո այն յեզրակացությունն և անում, վոր մարդն ինքն և ըստ իր նմանության իբրև համար աստված ստեղծում, այլ վոչ թե աստված և ստեղծում մարդուն։

Ֆոյերբախին չհաջողվկց բաց անել այն սոցիալական, դասակարգային հիմքերը, վորոնք կրոն են առաջացնում։ Նո զեր չփառեր, վոր կրոնը դարձանում է սոցիալական հակառակությունների հետեւանքով։

Յեթէ քննարկենք այն միջոցները, վորոնք Ֆոյերբախն առաջարկում ե կրոնի դեմ պայքարելու համար, ապա նրանց մեջ չկա վոչ մեկը, վորը դուրս գար զուտ բարոյական, Եթիկական շարժառիթների ու նորմերի սահմաններից: Լուսավորության մակարդակին բարձրացրած մորալը կրոնի դեմ մղջող պայքարի գլխավոր միջոցն է: Յեթէ կրոնը աղիսության զավակն է, ապա կրոնի դեմ պայքարելու զենքը լուսավորությունն է:

Ֆոյերբախի պայքարը կրոնի դեմ միմիայն լուսավորության ողնությամբ Լենինն անվանում է կրոնի տրադիցիոն բնութուական քննադատություն: Մի այլ տեղում Լենինը խոսում է Ֆոյերբախի տրադիցիոն պահերազմի մասին կրոնի դեմ: Ենդեւը մատնանշում եր նույնապես, վոր Ֆոյերբախն ընդհանրապես չի ուզում վերացնել կրոնը, վոր նա ուզում է միայն լրացնել այն:

Ֆոյերբախի կողմից կրոնը քննադատելու ժամանակ պետք է նաև ուշադրություն դարձնել գիտական պրոդրեսը կամ կանոնադրությունը գանապան կրոնների դերի ուժեղացրած և միանգամայն արդարացի ընդգծման վրա: Այդպես, որինակ, Ֆոյերբախը, մանրամասն հետապոտելով այն Հարցը, թե քրիստոնեաւթյունը ծագում է «հարարակական» կյանքի ապականագագածության և անկման դարաշընում, գրում եր, վոր «յեթէ մարդիկ ձգտում են ճշմարտության, յերկնային կյանքի, այդ նշանակում է, վոր յերկրավոր կյանքը սուս և և խարեցությունն»: Յեկ Ֆոյերբախը կրոնի այդ քննադատությունը յեզրափակում է այն մատնանշումով, թե աստված վոչ այլ ինչ ե ներկայացնում, բայց յեթէ մարդու միտրիկորեն ըմբռնված եյությունն իր բոլոր առրիբուտներով: Ամեն մի կրոնի մեջ մարդը բարձրանում է մինչև աստված, դառնալով տեր, մարդկային կյանքի ու ընության կառավարիչ, — մատնանշում է Ֆոյերբախը: Այդ պատճառով ել ով հետևում է աստծու վերաբերյալ ուսմունքին, թեուլոգիային, աստվածաբանությանը, նա հետևում է աղիսությանը, և, ընդհակառակը, աթեեկմը գիտությանը կենսությունն, ուժ, ընդունակություն և առլիս բեղմնավոր արդյունքների հասնելու:

Կրոնի իր քննադատության մեջ Ֆոյերբախի արտահայ-

տած դրական մտքերը կոմպլոմիսային բնույթ եյին կրում: Այդ բանը դրսեռորդում ե առղեն նրանում, վոր Ֆոյերբախը հին կրոնի փոխարեն փորձում եր նորն ստեղծել: Նոր կրոն, միտր կրոն ստեղծելու իր ձգտման մեջ նա յելնում եր հասարակության ըմբռնումից վորպես մարդկանց բնականատոհմական կապի: Սահմանելով հասարակությունը վորպես տոհմական կապակցություն, նա մարզու յերջանկությունն ել սահմանում եր վորպես ձգտում դեպի բարոյական կատարելությունը, գեղի բարոյական ինքնարավարումը: Այս իմաստով մարդը, հասնելով յերջանկության, պետք ե զոհի իրեն, չպետք ե պրակտիկ շահեր հետապնդի, վորովհետեւ նրա շահերը դժուվում են բարոյականության բնագավառում: Այստեղ պայծառորդեն դրսեռորդում են միտրիկական մոմենտները կրոնի սահմանման և հասարակության հետ նրա ունեցած կապի վորոշման մեջ: Փիլիսոփայի հայցքների այս կողմը առանձնապես պարզ կլինի, յեթէ նկատի ունենանք Ֆոյերբախի այն յեզրակացությունը, վորի համաձայն՝ հասարակության մեջ մարդը մարդու համար աստված և և վոչ թե գաղան, ինչպես այդ մտածում եր ԽVII դ. անդիմական փիլիսոփա Թոմաս Հոբսը: Այսպիսով, Ֆոյերբախը սերը դիտում է վորպես կրոն, իսկ աստվածավորպես սիրը բարձրագույն արտահայտություն կամ նվաճում: Սերը նա դիտում է վորպես մարդու զգայականության յուրահատուկ վիճակ, իսկ զգայականությունն իր բարձրագույն արտահայտությամբ հալաւսարեցվում է աստծուն: Վորչափով զգայականությունն աստվածացվում է և սիրը յությունը զգայականությունն է, իսկ հենց այդ զգայականությունն ել ամենից ամենից պայծառորդեն արտահայտվում է սրտի գործունեյության մեջ, ապա սիրոն ել ընդունվում է վորպես կրոնի եյությունը: Հստ Ֆոյերբախի առանց կրոնի չկա բարոյականություն, չկա առաքինություն: Այդ պատճառով ել՝ փիլիսոփայությունը, վոր իր մեջ պարունակում է մարդու բարոյական կրթության խընդիրները, պետք ե համընկնի այդպիսի կրոնի հետ: Այստեղ Ֆոյերբախն ամենից ամենից պայծառ կերպով ե դրսեռորդել իր անհետևողականությունը: Մարդու և ընության հատկությունների միակցված ամբողջականությունը նրա մոտ հան-

գես և գալիս իրեւ մի առանձին աստվածիկ, վոր գտնվում է մարդու մեջ: Մինչև իսկ կարելի յե ասել, վոր Թոյերբախի աստվածը—մարդու եյությունն և և մարդու եյությունն աստված ե: Այդ պատճառով ել մարդը չափատք և ձգտի աշխարհի պատկերն ստեղծել իրեւ աստծու, վոր կառավարում և այդ աշխարհը: Բայ Թոյերբախի՝ մարդը չպետք և աստծուն պատկերացնի աշխարհից վերև կանդնած, այլ պետք և նրան հայտնազործի իր մեջ, վորպես իր բարձրագույն ներքին դրդումները, վորոնք արտահայտվում են, մասնավորապես, սիրո մեջ: Սեռական սերը, տղամարդու և կնոջ հարաբերությունը, Թոյերբախի կրոնի կորիգն և կազմում: Սրա վրա յե Հիմնված նրա հայացքը՝ կրոնը փելիսովայության մեջ ներառելու մասին: Վորչափով մարդն իր բոլոր կրքերով, բարոյական դրդումներով, զգայական եղուղմով պետք և փիլիսոփայության առարկա դառնա, այդ-չափով մարդու զգայականությունն ել, վոր արտահայտվում և նրա սիրո մեջ, նույնպես փիլիսոփայության առարկա յե գառնում:

Թեև Թոյերբախը լրիվ չաղատվեց ել գերմանական իդեալիզմի և գերմանական բուրժուազիայի կրոնական յերազանքների ազդեցությունից, սակայն նրա կրոնի քննադատությունն այնուամենայնիվ պրոգրեսիվ և դրական բնույթ եր կրում:

Յեթե, նկատի ունենալով այս ամենը, յեղրակացություն անենք Թոյերբախի տեղի մասին գերմանական փիլիսոփայության պատմության մեջ և կուլտուրայի պատմության մեջ, նրա փիլիսոփայության դրական «Հատիկի» մասին, ապա կարելի կլիներ այդ յեղրակացությունը ձևակերպել վորպես մի քանի Հիմնական դրույթներ: Ամենից առաջ պետք և նկատի ունենալ, վոր չնայած նրա մատերիալիզմի հայեցական բնույթին՝ չնայած պատմական պրոցեսի իդեալիստական բացառությանը, նրա փիլիսոփայության մեջ պատմականությանը, աթեկզմի զուգորդմանը սիրո հետատափիկականությանը, աթեկզմի զուգորդմանը սիրո հայտնական բացառությանը և գիտական մտքի զարդարմանը բարձր աստիճան եր, քանի ԽVII—XVIII դարերի մատվելի բարձր աստիճան եր,

առերիալիզմը: XVIII դ. Փրանսական մատերիալիստների գործունեյությունից հետո՝ Ֆոյերբախին առաջին անգամ գերմանական հողի վրա վերականգնեց մատերիալիզմը, կանոն չառնելով այն մակարդակի վրա, վորին հասել եր XVIII դ. մատերիալիզմը, այլ առաջ տանելով նրա նվաճումները: Թոյերբախի փիլիսոփայական ուսմունքը մեծ ազդեցություն գործեց Սարքսի ու Ենգելիսի փիլիսոփայական հայացքների ձևավորման վրա, ովնաց նրանց հեղելյան իդեալիզմի վճռական քննադատությունը տալու: Ինչպես հայտնի յե, Թոյերբախն եր, վոր առաջին անգամ հանդես յեկավամենից ավելի «խելացի իդեալիզմի»—հեղելյան իդեալիզմի քննադատությամբ: Թոյերբախը մանրամասնորեն, մատերիալիստականորեն մշակեց փիլիսոփայության Հիմնական հարցը. նա ապացուցեց, վոր փիլիսոփայությունն ինքը յերկրորդային և, վոր սուբյեկտը կախված և ոբյեկտից և նրա հետ խոր միասնություն և կազմում: Թոյերբախը մշակեց այն հարցը, թե ինչպես և ընությունը ծնում մարդուն և ինչպես մարդը, միանալիան լինելով բնության հետ, ճանաչում և այն: Հենվելով Սպինոզայի աշխատությունների վրա, նրա «Աստվածաբանական-քաղաքական տրակտատի» վրա, XVIII դ. Փրանսական մատերիալիստ Հոլբախի յերկերի վրա, Թոյերբախը յերեկելի փորձ արեց՝ տալու կրոնի պատմական քննադատությունը: Նա ապացուցեց, վոր հենց մարդն ինքն և ստեղծել այն բոլոր պատկերացումներն աստծու մասին, վորոնցով գործառում են ատրբեր հերձվածները քրիստոնեյության ներսում: Յեթե աստծուն հաօկանանք այնպես, ինչպես նրան հասկանում են քրիստոնյաները, ապա այդպիսի աստված չկա: Աստված վեր չի կանդնած վո՛չ բնությունից, վո՛չ ել մարդուց: Այս յեղրակացությունը Թոյերբախի պատմական ծառայությունն և Հանդիսանում կրոնի քննադատության բնագավառում: Յեկ, վերջապես, զնահատելով Թոյերբախի դերը փիլիսոփայության ու հասարակական մտքի պատմության մեջ, չի կարելի Թոյերբախի դեմոկրատական իդեալների կողքից անցնել: Պատահական չէ, վոր Փաշիստական խավարամոլները Գերմանիայում այլում են Թոյերբախի յերկերը՝ Ռոմեն Ռոլլանի, Մաքսիմ Գորկու, Այնշտայնի և կուլտուրայի, գիտության մյուս

ականալոր վարպետների յերկերի հետ։ Ֆաշիզմը— խավա-
րամոլության և մարդասեցության իդեոլոգիան—դեմ և ֆո-
յերբախին։ Յեղ այդ պատահական չե վո՛չ միայն այն պատ-
ճառով, վոր Ֆոյերբախը միտտիկայի և ամեն տեսակի խա-
վարամոլության աչքի ընկնող հակառակորդ եր, այլև այն
պատճառով, վոր Ֆոյերբախը պայքարում եր հանուն դե-
մոկրատիայի, ընդդեմ ռեալիզմայի և կամայականության
XIX դ. Գերմանիայում։ Նա խորապես ատում եր քաղաքա-
կան ռեալիզմիներին, գիտության տերաբներին, փիլի-
սոփայական ամբոնի ուրբաղնիկներին։ Այս ամենով բա-
ցարկում ե, թե ինչու Ֆոյերբախը հանդիսանում է մարք-
սիսմի փելիսոփայական նախորդներից մեկը։ Այս ամենի հա-
մար մեր յերկը հեղափոխական ժողովուրդը բարձր և գնա-
հառում Ֆոյերբախի դերը համաշխարհային կուլտուրայի
պատմության մեջ։

III. ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԸ ՄԱՐՔ-
ՍԻՍԱԿԱՆ-ԼԵՆԻՆՑԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՐՀԱՅԱՅՔՆ Ե

Մինչև Մարքսն ու Ենդելսը ստեղծված փիլիսոփայական
թեորիաները, թեև յերբեմն մեծ հայտնագործումներ ելին
պարունակում, բայց, այնուամենայնիվ, մինչև վերջը հե-
տեղական, լիովին գիտական, իրենց բոլոր յեղբակացու-
թյուններում աներկյուղ, իրենց եյությամբ հետեղողական-
հեղափոխական չելին։ Այս վերաբերում ե ինչպես Հեղեղի
գիտական ուսմունքին, այնպես ել Ֆոյերբախի մա-
տերիալիստական թեորիային։ Միանգամայն հասկանալի յե,
թե ինչու 1830—1840 թվականների շուրջը մի շարք յելբո-
պական յերկրներում կազմավորված բանվոր դասակարգը
չեր կարող պարզապես փոխ առնել իրենց ժամանակի հա-
մար առաջադիմական այդ ուսմունքները։ Նա պետք ե կոեր
իր սեփական թեորիական զենքը, հետեղողական-հեղափոխա-
կան և գործուն, աշխատավորների թշնամիներին համարձա-
կորեն հարվածող զենքը։

Մարքսի ու Ենդելսի փիլիսոփայական համոզունքները
Հեղեղի գիտական իդեաների և Ֆոյերբախի մատե-
րիալիստական ուսմունքի «սինթեզը» չելին։ Բայց, ինչպես
այդ մասին գրում ելին Մարքսն ու Ենդելսը, Ֆոյերբախը
նբանց վրա խոշոր «ազատագրական ազդեցություն» գործեց։
Այն ժամանակվա հողվածներից մեկում Մարքսն այսպես և
գնահատում գերմանական ականավոր մատերիալիստի փիլի-
սոփայությունը։

«Իսկ ձեղ, սպեկուլատիվ աստվածաբաններ և փիլիսո-
փաներ, յես խորհուրդ եմ տալիս, աղատագրվեցեք նախկին
սպեկուլատիվ փիլիսոփայության հասկացողություններից
և նախապաշտմունքներից, յեթե ուզում եք հասնել իրերին

այնպես, ինչպես նրանք կան իրականության մեջ, այսինքն՝
հասնել հշմարտությանը: Յեվ դեպի հշմարտությունն ու
աղատությունը ձեզ համար ուրիշ ճանապարհ չկա, բայց յե-
թե ճանապարհը Փոյերբախի միջով—այդ «Հրեղեն հեղեղը»,
...վորը հանդիսանում է մեր ժամանակի քափարանը¹: Փո-
յերբախին բարձր գնահատական տալու հետ միաժամանակ
Մարքոն սկսեց նրա հայցքների սահմանափակության
քննադրատությունը: «Թեղիսներ Փոյերբախի մասին» Մարքոն
վերջացնում ե այսպես: «Փիլիսոփաները միմիայն տարբեր
ձևով բացառում ենին աշխարհը, բայց բանն այդ աշխար-
հը փոխեն ե»²:

Այս արլեն նոր հասարակական դասակարգը՝ պիտու-
տարիատի՝ նոր աշխարհայացքի շարադրանքն եր:

բանվորներին հանել հատուն փոստարգար պայման՝
ուղին—այսպիսի խնդիր դրին իրենց առաջ Մարքոն ու Են-
դիլսը՝ մշակելով բանվոր դասակարգի ազատազրության վե-
րաբերյալ հանձնարեղ ուսմունքը:

Սարքսն արգեն իր վաղ աշխատանքներում, զորութէ վերաբերում են 1844—1846 թ.թ., քննադատության յինթարկեց Բառերի գլխավորած գրական ուղղությունը, վորը մերժում եր հեղափոխական ժողովրդի ստեղծագործական դերը հասարակական զարգացման մեջ։ Բառերն ու նրա կողմանակեցները մի թերթիա եյին քարոզում, վորի համաձայն՝ պատմական պրոցեսի բոլոր թերությունները վերադրվում եյին մասսաների գործողությունների հաշվին, իսկ այլ պրոցեսի բոլոր պրոդրեսիվ գծերը—առանձին գործիչների հոգեոր ստեղծագործության հաշվին։ Մարքսն այն ժամանակ առաջին անգամ ձեւակերպում է պատմական մատերիալիզմի այն հիմնական դրույթը, վորի համաձայն՝ պատմությունը կերտում է ինքը ժողովրդը և նրա պայմանական կախված պատմական զարգացման ուղղությունը։ Մարքսը գրում եր «Սրբազն ընտանիքում»։ «Եկթե սոցիալիստ գրողները այդ համաշխարհային-պատմական դերը վերադրում են պրոլետարիատին, ապա այդ վոչ մի ձևով նրա-

¹ Wunfu & hūqílu, 4mm. I, b2 120

2 Մանես և Անգլիա, համ. IV, էջ 589 և 591:

նից չի առաջ գալիս, վոր նրանք պրոլետարներին աստված-ներ են համարում, ինչպես հավատացնում ե քննադատական քննադատությունը»¹:

«Ավելի շուտ ընդհակառակը, — գրում եր Մարքսը: Վո-
րովհետեւ վերացումն ամեն մարդկայինից, նույնիսկ մարդ-
կայինի արտաքին յերևությից իր գործնականապես կատա-
րյալ արտահայտությունը գտավ նոր ձեւավորված պրոլետա-
րիատի մեջ. վորովհետեւ պրոլետարիատի կենսապայմաննեւ-
րում արդիական հասարակության բոլոր կենսապայմանները
անմարդկայնության գաղաթթնակետին հասան. վորովհետեւ
պրոլետարիատի մեջ մարդը կորցրեց ինքն իրեն, բայց դժա-
նեա մեկանու վո՞չ միայն ձեռք բերեց այդ կորստի թեորիա-
կան գիտակցությունը, այլ արդեն անմիջականորեն հար-
կադրված և ըմբռուտանալու այդ անմարդկայնության դեմ՝
վոչնչով զգեղաղարդված, անողոք, բացարձակապես տիրա-
յան կարիքի, անիրածեցության այդ պրակտիկ արտահայ-
տության թելաղբանքով, — ուստի պրոլետարիատը կարող է
և պետք է իրեն ազատագրի: Բայց նա չի կարող ազատա-
գրել իրեն, չլիրացնելով արդիական հասարակության բոլոր
անմարդկային կենսապայմանները, վորոնք կենտրոնացել են
նրա սեփական դրության մեջ: Նա իզուր չի անցնում աշ-
խատանի դաժան, կոփող դպրոցը²;

Մարքսը վերին աստիճանի յերևելի յեզրակացություն են անում այն մասին, վոր պատմության ամբողջ տեսողության ընթացքում մարդկության հոգեսր զարգացումն այն ձևով ընթացել, վոր այն կատարվել է ի վեհաս մարդկության նվաճանուր մասսայի: Բայց հասարակական այն կառուց-լածքի ժամանակ, վոր կստեղծի բանվոր դասակարգը, բարդկանց իրենական կատարելազործումը տեղի կունենա շխատավորների նյութական բարեկեցության ընդհանուր լերելը հետ միաժամանակ:

Այդ մտքի հիմնալի հաստատումն և հանդիսանում
ՍՀՄ-ի մեծ փորձը։ Ընկեր Ստալինը ստախանովականների
որբհրդակցության արտասանած իր ճառում ցույց տվեց

¹ Մարփս և Եղիզելս, համ. III, էջ 56:

2 Նույն տեղում:

մեր հեղափոխության այն առանձնահատկությունները, վորոնց հետեանքով ամբողջ ժողովրդի կուլտուրական վերելքը անհրաժեշտ աստիճան է հանդիսանում կոմունիզմին անցնելու և մտավոր ու Փիդիկական աշխատանքների միջև յեղածհակադրությունը վոչչացնելու համար. նա ցույց տվեց, վոր միմիայն Հոկտեմբերյան Սոցիալխատական մեծ հեղափոխությունն ապահովեց նյութական պայմանները՝ մեր ժողովրդի բոլոր ուժերի խական ծաղկման համար:

Բայց յեթե հասարակության ամբողջ պատմության հիմքը ժողովուրդների գործունեյությունն է, յեթե այն ամենը, ինչ վոր պատմության մեջ անմահ է և դրական, կախված է նրանից, թե ինչպես եր պայքարում և ստեղծագործում ժողովուրդը, ապա լիովին հասկանալի յէ, վոր Մարքսն ու Ենդելսն իրենց խնդիրն ամենից առաջ այն բանում եյին տեսնում, վորպեսզի կազմակերպեն ժողովրդին և նրա գործունեյությունն ել ամելի բեղմնավոր դարձնեն պատմական պրոդրեսի համար:

Մարքսն ու Ենդելսը քայլ առ քայլ մերկացնում են ժողովրդի այն այսպես կոչված «պաշտպանությունը», վորին ընդունակ են լիբերալ բուրժուազիայի ներկայացուցիչները: Ժողովուրդը պետք է ինքն իրեն ազատագրի—այս և Մարքսի ու Ենդելսի յեղակացությունը:

Հասարակության զարգացման մեջ ժողովրդի ունեցած դերի ուսմունքի հետ անմիջական կապակցության մեջ է գտնվում Մարքսի ու Ենդելսի յերելի ուսմունքը իրականացնելու փոփոխելու մասին վորպես հեղափոխական թերթիայի և պրակտիկայի խնդիր: Մարքսն ապացուցում է, վոր իդեաները յերբեք հասարակությանը հին հասարակակարգի սահմաններից այն կողմը չեն անցկացրել, վոր նրանք հանել են միմիայն հին հասարակակարգի իդեաների սահմաններից, իսկ այդ անցումն իրոք կենսագործելու համար հարկավոր և պրակտիկ ուժ գործադրել: Իրական լծից ազատագրվելու համար հարկավոր կամակալոր են նաև պայքարի իրական միջոցներ: Իսկ այդ վերջինները բավականաչափ կարող են լինել այն ժամանակ, յերբ պայքարի մեջ և ներգրավվում ժողովրդի մեծամասնությունը:

Այս պայմանի դեպքում «պատմական գործության

հիմնավորության հետ մեկտեղ կամի, հետեարար, նաև այն մասսայի ծավալը, վորի դործն ե հանդիսանում նա»¹:

Ժողովուրդը, նրա գործունեյությունը, նրա կազմակերպությունը, նրա քաղաքական ազատություններ նվաճելու ընդունակությունը, նրա անսպառ յեռանդը, վոր ընդունակ և ավել-սրբելու բոլոր հին, պահպանողական քաղաքական հիմնարկությունները և բոլոր հին, իրենց կենսաժամանակն անցկացրած դոկտրինաները,—ահա այն աշխարհը փոխակերպող պատմական մեծ ուժը, վորի մասին գրում եր Մարքսը:

Մարքսի ու Ենդելսի գործի մեծ շարունակողները—լենինին ու Ստալինը հսկայական նշանակություն են վերագրում Մարքսի այդ իդեաներին: Լենինը կտրուկ կերպով քննադատում եր մասսաների գործունեյության անտեսումը նարովնիկների կողմից: Նա ապացուցեց, վոր միմիայն պրոլետարական հեղափոխությունից հետո, «սոցիալիզմից կուսի արագ, իսկական, իրոք մասսայական, բնակչության մեծամասնության, իսկ ապա ամբողջ բնակչության մասնակցությամբ կատարվող առաջընթաց շարժում հասարակական և անձնական կյանքի բոլոր բնադրավառներում»²:

Ընկեր Ստալինը, զարդացնելով այս յերկելի իդեան, վոր առաջին անդամ արտահայտել են Մարքսն ու Ենդելսը: «Մըրբազն ընտանիքում», նույնպես ցույց ե տալիս, վոր ժողովուրդների և պետությունների բախար վճռում են աշխատավորների միլիոնավոր մասսաները, վոր միմիայն սոցիալիզմն է վճռում ամբողջ ժողովրդի գիտակցական դործունեյության հարցը հենց ժողովրդի իրեն շահերի ոգտին:

Աշխատավորները պատմական պրոցեսի իսկական ստեղծագործիչները:

Յերր մենք դիմում ենք ընկեր Ստալինի՝ մետաղաղործական և ածխային արդյունաբերության աշխատողների ընդունելության ժամանակ ասած խոսքերին ժողովրդի անմահության մասին, այն ժամանակ Մարքսի ու Ենդելսի իդեաները ժողովրդի գործունեյության դերի մասին ել

¹ Մարքս և Ենդելս, Հատ. III, Էջ 105:

² Լենին, Հատ. XXI, Էջ 439:

ավելի պայծառ, ե՛լ ավելի խոր նշանակություն են ստանում:

Մարքսը դանում եր, վոր իրականության փոփոխությունը հասրավոր և միմիայն այդ իրականությունը գիտենալու պայմաններում: Իրական, պրակտիկ պատմությունը պետք և հիմք դառնա փիլիսոփայության համար: Այս հոգի վրա Մարքսը սուր քննադատության և յենթարկում ուսուպիտական սոցիալիզմի այն իդեաները, վորոնք խանգարում եյին բանվոր դասակարգի ինքնագիտակցության հետագա զարդացմանը:

Մարքսն ու Ենդելսը հանդես եյին դալիս վո՞չ թե պարզապես հոգութ իրականության փոփոխության, այլ հոգութ այդ փոփոխության վորոշ բնույթի, վորի արդյունքը պետք և լինի կոմունիստական հասարակությունը:

Մարքսը կոմունիզմի մեջ տեսնում եր այն հասարակությունը, վորտեղ չի լինի մասնավոր սեփականություն և շահագործում, վորտեղ պատմությունը կերտվում և դիտակցորեն, վորտեղ մարդն առաջին անդամ հասարակության պատմության մեջ ներդաշնակ, համակողմանի զարդացման հնարավորություն և ստանում:

Մարքսի ու Ենդելսի իդեաները կոմունիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի մասին, վոր նրանք զարդացրել են ամբողջ մի շարք յերկերում, այդ թվում «կոմունիստական կուսակցության մանիֆեստում» (1848 թ.), ցույց ավելի բոլոր ժողովուրդների ապագան, բանվոր դասակարգի հաղթության անխուսափելիությունը:

Նրանք անխորտակելի տրամաբանությամբ ամբողջ առաջավոր և պրոգրեսիվ մարդկությանը հռչակեցին բանվոր դասակարգի համաշխարհային-պատմական դերի մասին, կոմունիստական հեղափոխության և աշխատավորների կողմից քաղաքական իշխանությունը նվաճելու անխուսափելիության մասին: Վորպես ճնշվածների աղատագրման պայքարի հուժկու կոչ եյին ճնշում Մարքսի համար, բանվոր դասակարգի հաղթության խոր հավատով լի խոսքերը. «Մի ուրվական և շրջում Յեկապայում, կոմունիզմի ուրվականը»:

Մարքսն ու Ենդելսը «կոմունիստական կուսակցության

մանիֆեստում» ցույց տվին, վոր արտադրության ու հաղորդակցության հզոր միջոցներ ստեղծած բուրժուական հասարակությունը նման և այն կախարդին, վորն ի վիճակի չե իր կանչած ուժերի հախիցը դալու: Դասակարգերի ավելի ու ավելի սրվող պայքարը և պրոլետարիատի կազմակերպվածության աճումը կապիտալիզմի մոտեցող վախճանի և սոցիալիստական հեղափոխության անխուսափելիության վկայականն է:

Համաշխարհային զարդացման ամբողջ հետագա փորձը փայլուն կերպով հաստատեց մարքսիզմի հիմնադիրների հանձարեղ պրոդուկտը:

Մարքսիզմի մեծ հիմնադիրների ամբողջ հետագա կյանքը պայծառ ու հետեղական պայքար եր հանուն այն նոր հասարակարգի—կոմունիզմի հաղթության, վորի ծագման պատմական անխուսափելիությունը Մարքսն ու Ենդելսը դուչակել եյին դեռ անցյալ դարի 40-ական թվականներին:

* *

Պրոլետարիատի հեղափոխական մասնայական շարժման աճման ու ծավալման հետ միասին ստեղծվում և սրվում եր նրա աշխարհայացքը, նրա հեղափոխական թեորիան, վորը, Լենինի առելով, կաղմակորվում և միմիայն իրոք մասսայական և իրոք հեղափոխական շարժման պրակտիկայի հետ ունեցած սերտ կապակցությամբ: Ահա թե ինչու մարքսիստական «թեորիան բոլոր յերկրների բանվորական շարժման փորձն և, իր ընդհանուր ձևով վերցրած» (Ստալին):

Մարքսի ու Ենդելսի ստեղծած թեորիան, վոր նոր, բարձրագույն աստիճանի հասցեից լենինի ու Ստալինի կողմից, առաջին քայլերից կարգած եր պրոլետարիատի հեղափոխական շարժման հետ, նրա կուսակցության պայքարի հետ: Հենց այն հանգամանքի չնորհիվ, վոր բանվոր դասակարգի կուսակցությունն այնպիսի հզոր զենք ուներ, ինչպիսին է հետեղական-դիտական, մարքսիստական-լենինյան թեորիան, նա կարող եր աշխատավորներին ուղի ցույց տալ զեպի նրանց աղատագրումը և դիտականորեն բացահայտել հին աշխարհի գեմ պայքարելու իրական միջոցները: Մարք-

սիզմը պրոլետարիատի մեջ գտավ իր նյութական գենքը : Պրոլետարիատը հեղափոխական թեորիայի մեջ գտավ իդեական գենքը — իր խնդիրների ըմբռնումը, հասարակության զարգացման և դասակարգերի սպայքարի որենքները, իր վերջնական նպատակներն իրականացնելու ուղիները : Լենինը գրում եր, վոր առանց հեղափոխական թեորիայի չի կարող նաև հեղափոխական շարժում լինել, վոր բոլոր յերկըրների հետևողական հեղափոխականներին դեպի մարդուստական թեորիան հրապուրող անհաղթարելի ուժն այն է, վոր մարդուկանը իր մեջ միացնում են ներքուստ և անխղելիութեն խիստ ու բարձրագույն գիտականությունը հետևողական հեղափոխականության հետ :

Դեռ իր վաղ աշխատություններում «ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» և «ի՞նչ անել» — լենինը խնամքով պարզեց հեղափոխական ժողովրդի և նրա առաջավոր դասակարգի պրոլետարիատի — հաղթության պայմանների հարցը ցարդիմի և բուրժուալիայի վերաբերմամբ : Այդ կարուրագույն պայմանը լենինը համարում եր բանվորների և դյուլացիների մասսայական հեղափոխական շարժման միացումը գիտական սոցիալիզմի հետ, վոր տրամաբանութեն, անհրաժեշտարար բղխում եր, ընկեր Ստալինի խոսքերով, դիալիկտիկական մատերիալիզմից :

Լենինն ու Ստալինն ուսուցանում են, վոր տարերային շարժման և տրեղ-յունիստական գիտակցության աստիճանի վրա մնալով՝ բանվոր դասակարգը չի կարող հաղթել : Բանվոր դասակարգի կուսակցությունը, վորի ստեղծման վրա աշխատում ելին Մարքսն ու Ենդելը, վորը խոչըրագույն հեղափոխական մարտերում կռիցին, կոլիցին, դատարակեցին լենինն ու Ստալինը, իրագործում ե գիտակցական, հետևողական-հեղափոխական պայքարը : Հատկապես հենց բոլեիկան կուսակցությունն եր, վոր կարողացավ մասսայական բանվորական շարժումը միացնել գիտական սոցիալիզմի հետ, հատկապես հենց նա յեր, վոր դեկալար-վելով դիալիկտիկական-մատերիալիստական աշխարհայացքով, համաշխարհային բանվորական շարժումը բարձրացրեց ավելի բարձր աստիճանի, ցարական Ռուսաստանի բարի գործը» դրբե, եջ 115, 1930 թ. :

դասակարգը քաղաքական իշխանությունը գրավելուն հասցրեց, ինչպես համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթությունների :

Բանվոր դասակարգի ուսուցիչներն ու առաջնորդները — Մարքսը, Ենդելը, Լենինը, Ստալինը համաշխարհային պատմության բոլոր նվաճումներն ի սպաս դրին հասարակության հեղափոխական փոխակերպման և խկական դետության ծաղկման : Պրոլետարիատի դասակարգային պայքարի գործացմանը զուղընթաց պատմական անհրաժեշտություն ծագեց՝ սահմանել այդ պայքարի և պատմության մեջ միակ հետևողական-հեղափոխական դասակարգի — պրոլետարիատի աշխարհայացքի սկզբունքները : Գիտության առանձին բնագավառների զարգացման և վիթխարի փաստական նյութ կուտակվելու չորսհինչ հնարավորություն առաջ յեկալի խստորեն գիտական, խորապես հեղափոխական փիլիսոփայական թեորիա ստեղծելու վորպես գիտություն «իր զարգացման ամբողջ ծավալով»¹ : Հենց այդպիսի թեորիա ել ստեղծեցին Մարքսն ու Ենդելը և զարգացրին լենինն ու Ստալինը՝ վորպես բանվոր դասակարգի հետևողական-հեղափոխական կուսակցության աշխարհայացք :

«Մարքսիզմը միմիայն սոցիալիզմի թեորիան չե, — դրում եր ընկեր Ստալինը, — այդ մի ամբողջական աշխարհայացք ե, փիլիսոփայական սխատեմ, վորից արամարանորեն բղխում և Մարքսի պրոլետարական սոցիալիզմը : Այդ փիլիսոփայական սխատեմը կոչում ե դիալիկտիկական մատերիալիզմը»² :

Մարքսի, Ենդելի, Լենինի և Ստալինի ստեղծած մասերիալիստական դիալիկտիկան, վորպես բանվոր դասակարգի և նրա կուսակցության փիլիսոփայություն, հանդես յեկալի իրեւ պրոլետարիատի դասակարգային խնդիրների և պայքարի փորձի դիտակցված արտահայտություն և այն ամեն դրականի, կենսականի, առաջադիմականի հանճարեղ ընդհանրացում, վոր կուսակել և մարդկությունը հասարակական և գիտական զարգացման հաղարավոր տարիների ընթացքում :

¹ Լենին, Փիլիսոփայական տետրակներ, եջ 103 :

² Քաղաքական-մատերիալիստական հարցի չուրջը» դրբե, եջ 115, 1930 թ. :

Ի տարբերություն բոլոր անցյալ, մետաֆիզիկական թեորիաներից՝ Լենինի—Ստալինի կուսակցությունը բնության և հասարակության ամբողջ կյանքը դիտում է իրեն հակառակությունների գարզացման հետևանք, այսինքն՝ դիտելելտիկականորեն չարժվող ու փոփոխվող բան: Դիալիկուրկան վորպես մեթոդ, ուղղակի հակադիր մետաֆիզիկային, նրանով է բնորոշվում, վոր «բնությունը դիտում է վո՛չ թե վորպես միմյանցից կտրված, միմյանցից մեկուսացած և միմյանցից կախում չունեցող առարկաների, յերևույթների պատահական կուտակում, այլ վորպես կապակցված, միասնական ամբողջություն, վորտեղ առարկաները, յերևույթներն որպանապես կապված են միմյանց հետ, կախում ունեն միմյանցից և պայմանավորում են միմյանց»¹:

Դիալիկտիկական մեթոդը հակադիր է մետաֆիզիկային, վոր բնության առարկաները, իրերը դիտում է վերացականորեն, միմյանցից մեկուսացած, նրանց կյանքից ու պատմական զարդացումից դուրս: Դիալիկտիկան յուրաքանչյուր յերևույթ դիտում է կոնկրետ կերպով, բոլոր շրջապատու պայմանների հետ կապակցված: Այդ պատճառով եւ դիտելելիկական իմացությունը ճշմարիտ է, հարուստ, բազմակողմանի:

Յել վո՛չ միայն բնությունը, այլ նաև հասարակական մարդու ամբողջ իմացությունը, նրա բոլոր իդեաներն ու հասկացողությունները դիալիկտիկական մեթոդը դիտում են զարդացման, փոփոխության մեջ: Մարդկային մտածողության մեջ, այնպես, ինչպես նաև բնության մեջ, վոչ մի բացարձակ անփոփոխ, մի անդամ ընդմիշտ տրված բան չկա:

Ոբյեկտիվ կերպով գործադրված հասկացողությունների դիալիկտիկական ճկունության կլասիկ որինակ է արող և ծառայիլ Լենինի ուսմունքը՝ բուրժուական-գեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու մասին, մասնավորապես նրա «Նամակներ տակտիկայի մասին» գլուխածքը: Մատնանշելով, վոր քաղաքականության ամեն մի

դիտական հիմնավորում պետք է բղխի «դաստիարակերի հարաբերակցության և յուրաքանչյուր պատմական մոմենտի կոնկրետ առանձնահատկությունների ամենաճշգրիտ, որ յեկտիվորեն ստուգելի հաշվառումնեց»², Լենինը մշակեց բարեկաղմ, պատմականորեն կոնկրետ մի ուսմունք՝ բուժուական-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության դավաճանների, մատնիչների—Տրոցկու, Կամենևի, Զինովյենի, Ռիկովի, Բուխարինի և բուրժուազիայի մյուս ծառայությունների հակածեղափոխական «թեորիան», վորոնք դարձել եյին լըրտենների, դիվերսանտների, վնասարարների և տեսորդիստների բանդա: Հեղափոխության այդ դավաճանները պայքարում եյին սոցիալիստական հեղափոխության դեմ: Դավաճաններով բանվոր դասակարգի գործին՝ նրանք փորձում եյին հեղափոխության դարձացումը հետ շուրջ տալ, վոչնչացնել բանվոր դասակարգի կողմից իշխանությունը նվաճելու բուն իսկ փորձը, «անիմաստ կերպով կրկնելով «սերտած» Փորմուլան, փոխանակ ուսումնասիրելու նոր, կենդանի իրականության յուրահատկությունը»: Լենինը մերկացրեց Կամենեվի—Զինովյեվի դավաճանական, պրոլետարիատի նկատմամբ թշնամական դիրքի եյությունը:

«Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան»,—մատնանշում եր Լենինը 1917 թ. ապրիլին,—արդեն իրագործվել եր, թեև խորհուրդների ու ժամանակավոր կառավարության յերկիշխանության ծայրահեղորեն յուրահատուկ ձևով: Հերթի յեղինակած սոցիալիստական հեղափոխությունն ու պայքարը բանվոր դասակարգի դիկտատուրայի համար: Կյանքը հանեց հասկացողությունները «Փորմուլաների թագավորությունից իրականության թագավորությունը, մարմին ու արյուն հագցրեց նրան, կոնկրետացրեց և հենց դրանով ձևափոխեց»²: Այս ե լենինյան հարցադրումը դիտելիկտիկական իմացության կոնկրետության և ճկունության մասին:

¹ Լենին, Համ. XX, եջ 100:

² Նույն տեղում, եջ 101:

Այս կապակցության մեջ հարկավոր և առանձնապես ընդգծել սոցիալիստական պետության մասին յեղած մարք-սիստական-լենինյան ուսմունքի հետագա զարգացումը ընկեր Ստալինի կողմից իրեւ մի մեծ, ստեղծագործական, փոխակերպիչ ուժի մասին, վոր ապահովում և անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու հաջող ավարտումը և աստիճանական անցումը սոցիալիզմից գեպի կոմունիզմ։ Ի՞նչ նոր բան և մտցնում պետության ուսմունքի մեջ Ստալինյան զեկուցումը կուսակցության ԽVIII համագումարում։ Ընկեր Ստալինն ապացուցեց, վոր մեր յերկրի զարգացման ամբողջ փորձը և հասարակական կյանքի ամերողջ արդի իրադրությունը եյապես տարբերվում են հասարակության զարգացումից այն դարաշրջանում, յերբ ապրում եյին Մարքսն ու Ենդեկսը։ Այն դարաշրջանի համար, անցյալ դարի կեսի համար միանգամայն իրավացի յեց այն հայացքը, վորի համաձայն սոցիալիստական հասարակության հաղթությունը հնարավոր և միմիայն միաժամանակ բռնը յերկըրներում կամ խոչըրագույն կապիտալիստական յերկըրների մեծամասնության մեջ։ Բայց իմպերիալիզմի դարաշրջանում, յերբ զեռ ալիք ուժին և դրսեօրվում կապիտալիզմի անհամաշխափ զարգացման որենքը, յերբ ամբացել ու զարգացել և բանվոր դասակարգը, յերբ աճել են բանվոր դասակարգի՝ քաղաքական պայքարի յերկարատև փորձի մեջ կոփված կոմունիստական կուսակցությունները, վորոնք ընդունակ են նրան դեպի հաղթություն տանել և այդ հաղթությունն ամրապնդել, — հնարավոր և անհրաժեշտ և դառնում սոցիալիզմի հաղթությունը սկզբնապես սակալաթիվ կամ մեկ, առանձին վեցցրած յերկրում և անհնարին և սոցիալիզմի հաղթությունը միաժամանակ բռնը յերկըրներում։

Իսկ այս ամենը նշանակում է, վոր պատմական իրադրության արմատական փոփոխություն և տեղի ունեցել Մարքսի ու Ենդեկսի կյանքի ժամանակամիջոցի համեմատությամբ։ Մարքսն ու Ենդեկսն իրենց հայացքներում յելնում եյին կապիտալիզմի մինչմոնոպոլիստական զարգացման պայմաններից, յերբ սոցիալիզմի հաղթության ու պարագանում էր,

ունիթոր կար քաղաքակրթված յերկրների մեծամասնության մեջ միաժամանակ, և յենթաղբվում եր, վոր պետությունն այն յերկրում, վորաեղ հաստատվել և պրոլետարիատի դիկտատորան, շրջապատված լինելով հարեան, սոցիալիստական պետություններով, կարող եր կոմունիզմին անցնելու ժամանակ՝ կոմունիստական հասարակության բարձրադրույն փուլն իրականացնելու զուգընթաց՝ բոլորովին մռանել։

Բայց պատմական իրադրությունը խմբերիալիզմի դարչորջանում արմատականորեն փոխվեց։ ԽՍՀՄ-ում սոցիալիզմի շնարարության կոնկրետ պատմական պայմաններն ակնբախորեն հաստատեցին կենինի և Ստալինի նոր ուսմունքը սոցիալիզմի կառուցման մասին մեկ յերկրում և կասլիտական պետությունների շրջապատման մեջ։ Ընկեր Ստալինը, ընդհանրացնելով ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցելու մեծ փորձը, ապացուցեց, վոր սոցիալիստական պետությունը նոր պատմական պայմաններում, քանի նա զեռ կապիտալիստական ողակման մեջ։ և գտնվում, վո՛չ թե պետք և մահանա կոմունիզմին անցնելիս, այլ ամրապնդվի։ Պետությունը մնում և նաև կոմունիզմի ժամանակ, յեթե մեկ յերկրում կառուցված կոմունիստական հասարակությունը կապիտալիստական ըրջապատման մեջ գտնվի։

Այս հրապարակին պետության դարգացման յերկու փուլերի վերաբերյալ հարցի մշակումն ընկեր Ստալինի կողմից, սոցիալիստական պետության փունիցիաների փոփոխության ուսմունքը՝ սոցիալիստական շնարարության խնդիրների և կոնկրետ պայմանների փոփոխության հետ միասին՝ հանդիսանում և լինինյան ուսմունքի փայլուն զարգացումը սոցիալիստական պետության գերի մասին սոցիալիզմի ժամանակաշրջանում։

Ի տարբերություն մետաֆիզիկայից, «դիալեկտիկան ընթեթյունը դիտում և վո՛չ թե վորպես հանդպատի ու անշարժության, լճացման ու անփոփոխության կացություն, այլ վորպես անընդհատ շարժման ու փոփոխության, անընդհատ նորոգման ու զարգացման կացություն, վորտեղ միշտ վորեւ բան ծագում ու զարգանում է, վորեւ բան

կործանվում եւ և իր դարն անցնում»¹: Դիալեկտիկումն մաս-
սկիալիզմը վորպես հետևողական-հեղափոխական թեորիա
դիտականորեն բաց և անում ամեն մի շարժման հեռանկա-
րը, ապագան և ցույց և տալիս, թե ինչը պետք է հաղթի և
ինչը պետք և կործանի այդ զարգացման մեջ: Հենց դրա-
նով դիալեկտիկան մարքսիստական-լենինյան կուսակցու-
թյան ձեռքում հանդիսանում և մարտական և գործուն, դե-
կավար թեորիական զենք հանուն պրոդեսիվի, կենսակա-
նի, դրականի հաղթության, հանուն ուսակցիոնի, իր ժամա-
նակն անցկացրածի, հնի վոչչացման: «Համեկ(ր)կ պատմու-
թյան համառոտ դասընթացը» լենինյան-ստալինյան իմաս-
տությամբ ցույց տվեց, վոր մեր կուսակցության համար
ամենից սուաջ կարեռն այն չե, ինչ, վոր հաստատուն և
թվում ավյալ մոմենտում, բայց արդեն սկսում և մահանալ,
այլ կարեռ և այն, ինչ վոր ծագում ու զարգանում և, ին-
չին պատկանում և ապագան: Դիալեկտիկական մատերիա-
լիզմի հատկապես այդ դրույթից և բջիռում զեկավար դի-
րեկտիվը յուրաքանչյուր մարքսիստ-լենինյանի համար՝ կո-
մունիստական հաստարակություն կառուցելու համար մզած
նրա սպայքարում: «Նշանակում ե, քաղաքականության մեջ
չխսալվելու համար հարկավոր և նայել զեպի սուաջ և վոչ
թե զեպի հետ»²:

Նույնպիսի վերին աստիճանի կարեռը յեղարկացու-
թյուններ ամբողջ առաջավոր, պրոգրեսիվ մարդկության
համար հետեւում են դիալեկտիկայի այն գծից, վորի համա-
ձայն ամբողջ զարգացումը դիտվում է վորպես անցում ան-
հան և թագուն քանակական փոփոխություններից դեպի
բացահայտ, արմատական, վորակական, հանկարծական,
թուչքածե փոփոխությունները: Մարքսիստական դիալեկ-
տիկայի այս գծի համաձայն՝ բոլոր անցումները «մեկ կա-
ցությունից ուրիշ կացության թուչքածե անցնելու ձեռք,
վրա յեն համառում վո՛չ թե պատահարար, այլ որինաչափու-

¹ Համեկ(ր)կ պատմության համառոտ դասընթաց, եջ 142 (Հայե-
քեն):

² Նույն տեղում, եջ 148:

թեն, վրա յեն համառում վորպես աննկատելի ու առտիճանա-
կան քանակական փոփոխությունների կուտակման ար-
դյունք»¹: Բնության, հասարակական կյանքի և մարդկային
խմացության զարգացումը հին կացություններից նորերին
անցնելու պրոցեսում ընթանում և վո՛չ թե փակված շրջա-
պծով և «վո՛չ թե վորպես անցածի պարզ կրկնություն, այլ
վորպես առաջնաթաց շարժում, վորպես վերընթաց դժով
կատարվող շարժում, վորպես անցում հին վորակական կա-
ցություններ զեպի նոր վորակական կացությունը, վորպես
զարգացում պարզից զեպի բարդը, ստորինից զեպի բարձ-
րագույնը»²:

Մարքսիստական դիալեկտիկայի «նորհիմ» մարդկային
հասարակության ամբողջ պատմությունը ձեռք և բերում
միակ ճիշտ գիտական բացառությունը: Աշխատավորներն
անփոխարինելի զենք ունեն իրենց աղատադրման համար
մզած պայքարում:

Դիալեկտիկական մատերիալիզմը հանդիսանում է
մարքուիլմ-լենինիզմի հիմնաղերների այն յերևելի ուսմուն-
քի դիտական գիրնալուրումը, վո՞րի համաձայն՝ բանվոր դա-
տակարդի աղատադրումը կապիտալիստական ճնշումից հնա-
րավոր և միմիայն հեղափոխության միջոցով, և վոչ թե
կապիտալիզմի դանդաղ քանակական փոփոխությունների
միջոցով: Հատկապես հենց այստեղից և բղիսում յերեկելի
յեղակացությունը: «Եշանակում ե, քաղաքականության
մեջ չօխալվելու համար հարկավոր և լինել հեղափոխական,
և վոչ թե ուժորմիստ»³:

«Համեկ(ր)կ պատմության համառոտ դասընթացի» IV
շնորհ մենք կարդում ենք.

«Ի հակադրություն մետաֆիզիկային, դիալեկտիկան
մեկնում և այն բանից, վոր բնության առարկաներին, բնու-
թյան յերեւոյններին հատուկ են ներքին հակասություն-
ներ, վորովհետև նրանք բոլորն ել ունեն իրենց բացառական
և դրական կողմը, իրենց անցյալը և ապագան, իրենց մա-
հացողն ու զարգացողը, վոր այդ հակադրությունների պայ-

¹ Համեկ(ր)կ պատմության համառոտ դասընթաց, եջ 143:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, եջ 148:

քարը, հնի և նորի, մահացողի և ծնվողի, իր գալրն անց-
նողի և զարգացողի միջև մղվող պայքարը կազմում և զար-
գացման պրոցեսի ներքին բովանդակությունը, քանակական
փոփոխությունների՝ վորակականների վերածվելու ներքին
բովանդակությունը»¹:

Դիալէկտական մատերիալիզմը հնարավորություն և
տալիս թափանցելու բնության ու հասարակության զար-
գացման պատմական որինաչափության իմաստի մեջ և հա-
նաչած որենքներն ի սպաս դնելու բանվոր դասակարգի և
նրա կուսակցության հեղափոխական գործողության: Դիա-
լէկտիկական մատերիալիզմը դրսեորում և բնության և հա-
սարակության մեջ իշխող հակասությունները, ուղի յե-
ցույց տալիս՝ նրանց հեղափոխական լուծման համար: Ամ-
բողջ որյեկտիվ աշխարհում և մտածողության պատմության
մեջ նկատվող հակադրությունների պայքարն ընդհանրական
բնույթ և կրում: Դիալէկտիկական մատերիալիզմի այդ կող-
մի մասին լենինը գրում եր.

«Միասնականի յերկատումը և նրա հակասական մատերի
ձանաչողությունը... դիալէկտիկայի եյությունն և (կամ
«եյություններից») մելլ, հիմնական առանձնահատկություն-
ներից կամ գծերից մեկը, յեթե վոչ հիմնականը»²: Որյեկ-
տիվ աշխարհի և իմացության բոլոր կողմերը զարգանում են
այդ պայքարի միջոցով: Այդ պատճառով ել՝ բնության և
հասարակության բոլոր պրոցեսներում, դիտական զարգաց-
ման բոլոր բնադրավայերում «միմյանց փախադարձարար
քացառող, Հակադիր տեսնենցներ»³ հայտնագործելը վճռա-
կան պայմանն և «աշխարհի բոլոր պրոցեսները նրանց «ինք-
նաշարժման», նրանց սպոնտան զարգացման, նրանց կեն-
դանի կյանքի մեջ ճանաչելու համար...»⁴: Արդեն բնու-
թյան ու մտածողության ամենապարզ, ամենասարրական
կապակցությունների և յերեսութների մեջ դիալէկտիկական
մատերիալիզմը բացահայտում և ինչպես տարբերություն-
ները, այնպես նաև հակասությունները, հակադրություն-

¹ Համեկ(բ)կ պատմության համառատ գասընթաց, եջ 145—146:

² Լենին, Համ. XIII, եջ 301:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

ների փոխադարձ կապը: Նույնիսկ հասարակ մեխանիկական
շարժումն արդեն խոր հակասություն և հանդիսանում և
միենույն ժամանակ այդ հակասության անընդհատ վերանո-
րոգումն ու լուծումը:

Բնության ավելի բարդ և բազմակողմանի յերևույթնե-
րին անցնելիս՝ նրանց հակասական զարգացումն ալելի հա-
սում և գտննում: Կենդանի կյանքի արտացոլումը, հակա-
սությունները գտնելը և պայքարի կազմակերպումը նրանց
հեղափոխական պրակտիկ լուծման համար—այս և դիալէկ-
տիկական մեթոդի հիմնական պահանջը: Այսեղից՝ յեղա-
կացություն պրոլետարիատի և նրա կուսակցության ամ-
բողջ պրակտիկ գործունեյության համար.

«Յեթե զարգացումը անդի յեւնենում ներքին հակա-
սությունների բացահայտման կարգով, այդ հակասություն-
ների բաղայի վրա հակադիր ուժերի ընդհարման կարգով՝
նպատակ ունենալով այդ հակասությունների հաղթահարու-
մը, ապա պարզ և, վոր պրոլետարիատի դասակարգային
պայքարը միանդամայն ընական և անխուսափելի յերե-
վույթ և :

Նշանակում և, կապիտալիստական կարգերի հակասու-
թյունները պետք եւ վո'չ թե կոծկել, այլ բացահայտել ու
կծիկը բաց անել, դասակարգային պայքարը վո'չ թե մա-
րել, այլ այն մինչեւ վերջ հասցնել»⁵:

Հենց դրանով ել բացատրվում և, թե ինչու լենինը
հնարավոր եր համարում մատերիալիստական դիալէկտիկա-
յի սահմանումը տալ վորպես հակադրությունների միաս-
նության ու պայքարի ուսումնաքի, վորպես գիտության, վոր
ուսումնասիրում և հակասություններն առարկաների բուժ-
եյության մեջ, ընդդեմով, վոր այդ սահմանումով ըմբռն-
ված և դիալէկտիկայի կորիզը: Դիալէկտիկան ուսումնաք և
այն մասին, թե ինչպես կարող են նույնական լինել և ինչ-
պես են նույնական լինում (դառնում) հակադրություննե-
րը,—ինչպիսի պայմաններում են նրանք նույնական լինում,
փոխարկվելով մեկը մյուսին,—ինչու մարդու միաքը այդ

¹ Համեկ(բ)կ պատմության համառատ գասընթաց, եջ 148 (Հայե-
բեկ):

Հակագությունները չպետք է վերցնի վորպես մեռած, քարացած, այլ վորպես կենդանի, պայմանական, շարժուն, մեկը մյուսին փոխարկվող¹, որում եր լենինը:

Դիալեկտիկական մատերիալիզմի այն գրույթին, թե ամեն ինչ զարդանում է հակագությունների պայքարի հիման վրա, հիմանալի կոնկրետացում և իլյուստրացիա յի հանդիսանում բանվոր դասակարգի դիկտատուրայի զարգացումը ԽՍՀՄ-ում։ Սոցիալիզմի բազմաթիվ թշնամիները քիչ փորձեր չեն արել՝ ԽՍՀՄ-ի զարգացումը բանվոր դասակարգի դիկտատուրայի ամրապնդման գծից շեղել դեպի նրա թուլացումն ու «մահացումը»։ Ժողովրդի արյունաբուռ թշնամի, Փաշխտական վարձկան Բուխարինը մաքառում եր բանակն ու հեղափոխական կարգի վրա հակող որդաններն անմիջապես վոչնչացնելու համար և այլն։

Ընկեր Ստալինը բայցահայտեց մեր պետության զարգացման դիալեկտիկան։ Ընկեր Ստալինը մեր կուսակցության XVIII Համագումարում ասում եր.

«Մենք գնում ենք ամենի առաջ, դեպի կոմունիզմ։ Մեզ մոտ պետությունը կպահպանվի՝ արդյոք նաև կոմունիզմի ժամանակաւ ոչանում։

Այս՝ չպահպանվի, յեթե մեկվերացիայի չենթարկվի կապիտալիստական շրջապատումը, յեթե չփոչնչանա ուղամական հարձակումների վտանգը զբոից։ Ընդվորում, հասկանալի յե, վոր մեր պետության ձեւերը նորից կիրավեն ներքին և արտաքին իրազրության փոփոխման համեմատ։

Վո՛չ, չի պմհպանվի և կմահանա, յեթե կապիտալիստական շրջապատումը լիկվերացիայի չենթարկվի, յեթե նա փոխարինվի սոցիալիստական շրջապատումով»²։

Սոցիալիզմի կառուցման փորձը ԽՍՀՄ-ում ամբողջությամբ հաստատում է մարքսիզմ-լենինիզմի այս կլասիկ դրույթները։ Մեր յերկրի զարգացումը դեպի կոմունիզմ հենվում է սոցիալիստական պետության և նրա բանակի ամենի ու ամենի աճող հզորության վրա։

1 Լենին, Փիլիսոփայական տեսրակներ, եջ 109։

2 Ստալին, Հաշվետու զեկուցում կուսակցության XVIII համագումարում Համեկ(ր)Կ ԿԿ աշխատանքի մասին, եջ 67—68, 1939 թ. (Հայերեն)։

Մեր կուսակցության դիալեկտիկական մեթոդը բնության և հասարակության միակ գիտական ճանաչողությունն է, վոր անհաշտ և ամեն տեսակ ուժորման դիմքի, ամեն տեսակ մետաֆիլիկայի նկատմամբ։ Նա հեղափոխական պայքարին ի սպաս և զնում ամբողջ համաշխարհային զարդացման փորձը։ Նո կուսակցությանն ու բանվոր դասակարգին վստահության և տալիս, վոր Լենինի—Ստալինի գործը պատմականորեն ճիշտ և և անխախտելի վստահություն և ներշընչում, վոր այն կլենոսագործիլի։

Դիալեկտիկական մատերիալիզմը հանդիսանում է Վո՛չ միայն բնության յերեւոյթների և հասարակության ճանաչողության հետևողական-դիտական և հեղափոխական մեթոդը, այլև բնության յերեւոյթների մարքսիստական-լենինյան բացարությունը, նա միաժամանակ հանդիսանում և մատերիալիստական թեորիա, մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմ։

Դիալեկտիկական մատերիալիզմը մեր կուսակցությանը տալիս է իրականությունը ճանաչելու և փոփոխելու համար զոր իրենական գենք։ Համեկ(ր)Կ նորհելի դիալեկտիկական-մատերիալիստական աշխարհայացքի իր գործունեյության մեջ հենվում եր պատմական զարգացման որենքները ճշգրիտ և համակողմանի կերպով դիտենալու վրա։

Լենինի—Ստալինի կուսակցության աշխարհայացքը մեկնում և որյենկտիվ, մեզանից գուրս գոյություն ունեցող աշխարհի, այն և բնության և հասարակության ճանաչման վրա։ Սարդուն շրջապատող նյութական աշխարհում կուսակցությունը տեսնում է բոլոր իրենաների յերևան զալու և զարդացման վերջնական աղբյուրը։ «Մեր խացության աղբյուրի վերաբերյալ, իմացության հարաբերության (և ընդհանրապես «հոգեկանի») վերաբերյալ» հարցում «դեպի Փիզիկական աշխարհը...»³ զանգում և դիալեկտիկական-մատերիալիստական աշխարհայացքի կարեռագույն, արմատական տարրերությունը իդեալիզմի բոլոր տեսակներից։ Մարքսիստական-լենինյան կուսակցության աշխարհայացքի հետևողական-մատերիալիստական բնույթը արմատից պո-

3 Լենին, Հաս. XIII, եջ 213։

կում-վոչնչացնում և ամեն մի սուրյեկտիվիզմ, սխոլաստիկա, թեորիայի կտրվածություն կյանքից :

Շնորհիվ այն հանդամանքի, վոր մեկնակետը դիալեկտիկական մատերիալիզմի մեջ հանդիսանում է նյութական աշխարհն ինքը, կենինի-Ստալինի կուսակցության աշխարհայցքը հենց դժբանով որյեկտիվ անսպառ ալլրյուր ունի իր անընդհատ հարստացման համար: Դիալեկտիկական մատերիալիզմի հիմնական դրույթները, ձևով տարբերվելով որյեկտիվ աշխարհի որենքներից, իրենց բովանդակությամբ ամբողջովին համընկնում են նրանց հետ, վորովհետև տրամաբանության որենքները վոչ այլ ինչ են, բայց յեթե բնության և հասարակության զարգացման արտացոլումը մարդու գիտակցության մեջ:

Դիալեկտիկական մատերիալիզմի այդպիսի բնույթը նրանով և պայմանավորված, վոր նա իր բովանդակության մեջ ներառում և բնության, հասարակության և մտածողության բազմակողմանի զարգացման հանրագումարը, հարըստությունը: Մատերիալիստական դիալեկտիկան «պետք և յեղակացվի «բնության ու հոգու ամբողջ կյանքի զարգացումից»: Դիալեկտիկական մատերիալիզմը պահանջում է, վորպեսզի ամբողջ մարդկային պրակտիկան մտնի առարկայի «լրիվ «սահմանման» մեջ թե՛ իրեն ճշմարտության չափանիշ և թե՛ իրեն առարկայի կապը այն բանի հետ պրակտիկ կերպով վորոշող, ինչ վոր հարկավոր և մարդուն»¹:

Մարքսիստական-լենինյան կուսակցության աշխարհայցքի ամենազորությունը, ճշտությունը, խոր կենսականությունը բջիսում են հեղափոխական թեորիայի գեղի պրակտիկան ունեցած հարաբերության հարցի ճիշտ գիտական վորոշումից: Շնորհիվ կյանքի հետ ունեցած այդ ներքին և խոր կապի՝ մեր կուսակցության դիտական աշխարհայցքը խոր որյեկտիվ բովանդակություն է ձեռք բերում, բազմակողմանի կերպով ստուգվում է հասարակական մարդու պրակտիկայով, սոցիալիստական շինարարության, համաշխարհային կոմունիստական չարժման և ամբողջ գիտական զարգացման պրակտիկայով:

¹ Կեմին, հատ. XXVI, էջ 135:

Բայց հասարակության պատմության մեջ չկա ոքառակոտ «կյանք» և «պրակտիկա», վորոնք հասարակությունից և մարդուց բարձր կանգնած լինելին: Այդ «կյանքը» միշտ պատմական և սոցիալապես կոնկրետ, նա դոյտություն ունի վորպիս հասարակական դասակարգերի, կուսակցությունների գործունեյություն: Դիալեկտիկական մատերիալիզմն առաջին անգամ գիտության պատմության մեջ բուն իսկ պրակտիկան բացահայտեց կոնկրետ կերպով և բազմակության իրեն:

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները անցյալի վիլխուսովաների և բնախույզների ամենից ավելի լուրջ սահմանափակություններից մեկը հենց նրանում ելին տեսնում, վոր նրանք «բոլորովին արհամարհում ելին մարդու գործունեյության ազդեցության հետազոտությունը նրա մտածադրության վրա: Նրանք գիտեն, — զրում եր Ենգերար, — մի կողմից միայն բնությունը, իսկ մյուս կողմից՝ միայն միաքը: Բայց մարդկային մտածողության ամենայական և առաջին գիրքը հանդիսանում է հենց բնության փոփոխությունը մարդու ձեռքով և վոչ թե միայն բնությունն իրեն այլպիսին, և մարդու բանականությունը զարգանում եր պրոպրցեսուալ այն բանին, թե ինչպես եր նա սովորում փոփել բնությունը»²:

Արդեն Մարքսն ու Ենգելսը գիտականորեն հիմնավորեցին դիալեկտիկական մատերիալիզմի առարկան ու բնույթը, պարզաբանելով, վոր այդ՝ որյեկտիվ աշխարհի և իմացության զարգացման ընդհանուր որենքների գիտությունն է: Մարքսիզմի հիմնագիրները ցույց տվին, վոր որյեկտիվ աշխարհի և իմացության զարգացման ընդհանուր որենքների իմաստը թափանցելու և աշխարհի զարգացման այդ ճանաչված որենքները բանվոր դասակարգի չափերին ծառայեցնելու համար պահանջվեց կոմունիստական կուսակցության ակտիվ միջամտությունը, վորը հաղթահարեց բոլոր գիրքերի կողեղուգիտաները և քննադատորեն, ստեղծագործականորեն ընդհանրացրեց համաշխարհային գիտության բոլոր նվաճումները:

¹ Մարքս և Նիգել, հատ. XIV, էջ 400:

Մարքսն անխոնջ կերպով կրկնում եր, վոր մեր փիլիսօփայթյան առանձնահատկությունը նրա գործունությունն է, ակտիվությունը, նրա ձգտումն ու ընդունակությունը՝ վերակառւցելու, փոխելու աշխարհը: Նա անցյալի բարոր փիլիսոփայական թեորիաներն ու սիստեմները քննադատում եր այն բանի համար, վոր նրանք անդորրուն են, պատիվ, հայեցական: Նա գիտականորեն մշակեց այն հարցը, թե ինչ և նշանակում աշխարհը փոխել: Միմիայն բոլշևիկների կուսակցությունը կարողացավ այդ հարցը թեորիայի վարժուից կանքի մեջ փոխադրել: Նա հեղափոխության փորձի հիման վրա մշակեց այն հարցը, թե ինչպես պետք է փոփլ աշխարհը, ինչպիսի միջոցներով և ինչպիսի ճանապարհով կարող է փիլիսոփայությունը միավորվել այն հզոր պրակտիկ ուժի հետ, վորն ընդունակ է կենուադործելու իրականության այդ փոփոխությունը: Հենց դրանով Լենինի—Ստալինի կուսակցությունը Մարքսի այն Փորձութան, թե փիլիսոփաները մինչև այժմ միայն բացատրում ենին աշխարհը, իսկ ինդիքն այն ե, վոր փոխենք այն,—Փորձութաների թագավորությունից հանեց և իրականություն դարձրեց: Հատկանի մեր կուսակցությունը, ԽՍՀՄ-ի աշխատավորները նրա զեկավարությամբ կարողացան փոխել աշխարհը, հիմնականում կառուցելով սոցիալիստական հասարակություն և մտնելով սոցիալիզմից աստիճանաբար զեպի կոմունիզմն անցնելու ժամանակաշրջանը:

Մարքսն արգեն «Սրբազնն ընտանիքում» նկատել ե, վոր անցյալ փիլիսոփայական սիստեմների սիստեմ յերեմն այն ե յեղել, վոր մարդիկ հաճախ ուզում ենին փոխել իրենց ըլլազատող իրականությունը, բայց զոնում ենին, վոր իրականությունը կարելի յե փոխել միմիայն իդեաների ողնությամբ: Այդպիս ենին վարդում բոլոր ուստոպիական սոցիալիստները, այդպիս ենին վարդում մեծ փիլիսոփաներից շատերը: Մարքսն ապացուցեց, վոր միմիայն իդեաները չեն կարող վոչնչացնել սորկությունը և մարդուն հանել հին հասարակարգի սահմաններից: Իդեաները կարող են դուրս հանել միմիայն հին հասարակարգի իդեաների սահմաններից, իսկ իրական յելք գտնելու համար պետք է պրակտիկ ուժ դորձագրել:

Լենինն ու Ստալինը զարգացրեն Մարքսի այս իդեան: Նրանք ցույց տվին, վոր մարքսիստական, բոլշևիկյան կուսակցության աշխարհայացքի առանձնահատկությունն այն ե, վոր թեորիայի, իդեաների դերը հասարակական կյանքում ճանաչելու հետ մեկտեղ ամենավճռական կերպով ճանաչվում ե մասսաների հեղափոխական եներգիայի, հեղափոխական ստեղծագործության, հեղափոխական նախաձեռնության նշանակությունը:

Ծնունդավարների կոմիտենցիայում արտասահմած ճառում ընկեր Ստալինը մի յերեսի որինակ բերեց, վորը խոսում ե այն մեծագույն պատմական փորձի մասին, վոր ի սպաս ե դրված մեր կուսակցության պայքարին, ի սպաս ե դրված կոմունիստական հասարակության կառուցմանը: Ընկեր Ստալինն այդ ճառում ասում եր, վոր բանակների, ժողովուրդների, պետությունների պատմության մեջ զեպի քեր են յեղել, յերբ բանակները պարտություն են կրել այն պատճառով, վոր չեն իմացել գեպի հաղթություն տանող ճիշտ ճանապարհները: Միմիայն բոլշևիկների կուսակցությունը կարողացավ միացնել յերկու մեծ ուժերը—հեղափոխական թեորիան և մասսաների պրակտիկ գործունեցությունը:

Աշխարհի փոփոխման վերաբերյալ այդ իդեան իր փայլում զարգացումը գտավ ընկեր Ստալինի բոլոր աշխատություններում: Ընկեր Ստալինը ցույց տվեց, վոր մարքսիզմը վո՛չ միայն սոցիալիզմի թեորիան ե, այլ նմանապես և ամբողջական աշխարհայացք, փիլիսոփայական սիստեմ, վորից արամարանորեն բջիջում և Մարքսի ու Ենդեկտի պրոլետարական սոցիալիզմը: Այդ փիլիսոփայական սիստեմը կոչվում ե զիավակտիվական մատերիալիզմ: Ընկեր Ստալինի այս մտքի մեջ ամբողջ ծավալով դրսուրվում ե այն ամենաբարդ հարցի իմաստն ու նշանակությունը, թե փիլիսոփաները մինչև այժմ միայն բացատրում ենին աշխարհը, իսկ ինդիքն այն ե, վոր փոխենք այն: Ընկեր Ստալինը հանճարեղորեն բացահայտեց, վոր դիակեկտիվական մատերիալիզմ կոչված փիլիսոփայական սիստեմը լուսալորում և պրոլետարիատի դիակտատուրայի նվաճման ուղին, վորի պայքաներում դիտական կոմունիզմի իդեաները տիրապետում են

ժողովրդին և մի հզոր ուժ են պառնում, վոր ընդունակ է փոխելու աշխարհը:

Բոլցեկիյան կուսակցության հեղափոխական խղեաները արդեն մինչև 1917 թվի հոկտեմբերը աչքի ընկնող, հզոր ուժ ելին ներկայացնում: Ե՛լ ավելի մեծ համաշխարհային-պատմական նշանակություն ձևոք բերին այդ խղեաները բանվոր գասակարդի դիմուտուրան նվաճելուց հետո մեր յերկրում, յերբ դիմուկական մատերիալիզմը տիրող աշխարհայացք դարձավ յերկրագնդի մեկ վեցերորդ մասում: Դրա հետևանքով՝ հասարակական կյանքի պատմության մեջ առաջին անդամ բոլցեկիների կուսակցությունը միավորեց շատ տասնյակ-միլիոնավոր մարդկանց դործունեցությունը՝ միասնական նպատակի հասնելու համար: Մագեց մի հզոր շարժում, վորի մեջ իրեւ մի ամբողջություն ձուլվեցին ժողովուրդն ու կոմունիզմը:

Դիմուկական մատերիալիզմն իրեւ մարզսիստական-լինինյան կուսակցության աշխարհայացք միակ փիլիսոփայական աշխարհայացքն է հանդիսանում, վորն արդեն որոշնականորեն իրականացնում է կոմունիզմի, դիմության կենսական, խոր միությունը ժողովրդի հետ:

Կուլտուրայի, գիտության, փիլիսոփայության պատմության մեջ դեմքեր չեն յեղել, վոր գիտական աշխարհայացքները, առաջապոր փիլիսոփայական թեորիան ամբողջ ժողովրդի սեփականություն դառնան, տասնյակ-միլիոնավոր մարդկանց համար թեորիական զենք դառնան: Այդ բանը չեր ել կարող լինել մինչև բանվոր դասակարդի դիմուտուրայի յերեան դալը, վորովհետև անցյալի փիլիսոփայական սիստեմները չեյին կարող ամբողջությամբ համապատասխանել ժողովրդի շահերին: Մինչև իսկ անցյալի առաջապահ գործությունը կողմանը դիմուկական իրենությունը դառնալու աշխարհայացքը համապատասխան դիմությունը դառնալ, վորովհետև իդեոլոգիական աղղեցության և իզեոլոգիայի տարածման միջոցները գտնվում եյին տիրող դասակարգերի ձեռքում, վորոնք յերբեք շահագրդում չեյին այն բանում, վորպեսզի ժողովուրդն իմանար հասարակական կյանքի որենքները և դիմուկանորեն ըմբռներ իր խնդիրները: Այս ամենն արմատապես փոխվում

է, յերբ քաղաքական իշխանությունը նվաճում է բանվոր դասակարգը:

Մեր կուսակցությունը, ինչպես և Կոմունիստական ինտերնացիոնալի բոլոր կուսակցությունները, ի հակառակությունը բուրժուական և ռեֆորմիստական կուսակցությունների, շահագրգույած և նրանով, վոր ամբողջ ժողովուրդը տիրապետի արդի գիտական աշխարհայացքը—դիմուկական մատերիալիզմը: Յեվլենինի-Ստալինի կուսակցությունը բոլոր միջոցներն ունի այդ կենսագործելու համար: Այդ մեծ խոնըրի իրագործման հիմքը սոցիալիզմի հաղթությունն և մեր յերկրում, գրա հիմքը՝ Ատալինյան Մահմանադրությունն է:

Կուսակցության XVIII համագումարի առաջադրած խընդիրը—ժողովրդի կոմունիստական դաստիարակությունը, չիբամիլի ամենավեհ ու վորմ խնդիրն է, վոր յերեւեցե իրենց առաջադրել են մարդկի և պետությունը: Արժե ամբողջ ուշադրությամբ խորասուզվել այդ մեծ խնդրի հյության մեջ. միավորել ամբողջ ժողովուրդը մեկ աշխարհայացքի—մարքսիզմ-լենինիզմի—դրսչի տակ, խորհրդային հասարակության միակ աշխարհայացքը դարձնել հասարակական գարգացման որենքների վերաբերյալ դիտական հայացքը:

Անցյալում վոչ մի հասարակություն, վոչ մի դաստիարակ, վոչ մի կուսակցություն այդպիսի հսկայական խնդիր չեր կարող առաջադրել իրեն: Այդպիսի խնդիր չի կարող լինել նաև այժմ արդի կապիտալիստական յերկրների կտավագրող գասակարգերի մոտ: Զե՞ վոր վոչ մի շահագրծող զասակարգ շահագրգույած չե, վորպեսզի դիտությունն ամբողջ ժողովրդի սեփականություն դարձնի, վորպեսզի ժողովրդին ակտով քաղաքական կյանքի ներզրավի, ավելի ևս շահագրգույած չե, վորպեսզի ժողովուրդն ինքն իր ձեռքը վերցնի իր սեփական բախտը: Վերջին հաշվով՝ դրանով ել հենց վորոշիում և շահագրություն դասակարգերի պայքարը աշխատավորների մեջ հասարակության զարգացման վերաբերման դիտական հայացքներ տարածելու դեմ:

Դրությունն արմատապես փոխվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հիտեանքով: Առողջը-

պայման Միության ձեռք բերած հաջողությունները ոճակ կերպով հնարավոր են դարձնում մեր ժողովրդի այնպիսի տրագ և համակողմանի կուլտուրական վերելք, նրա սոցիալական գիտակցության այնպիսի աճում, վորաքսզի նրա գիտական աշխարհայացքն ել միանական դառնա: Մենք արդեն հասել ենք խորհրդային հասարակության բարոյական-քաղաքական միասնությանը: Այժմ պահանջվում է մեր կուսակցության վիթխարի հետազա աշխատանքը աշխատավորների կոմունիստական դաստիարակության վերաբերմամբ, խորհրդային հասարակության իդեալական-քաղաքական մակարդակի բարձրացման վերաբերմամբ:

Լենինի—Ստալինի մեծ կուսակցության XVIII համագումարը խորհրդային ժողովրդի ձեռքը տվեց խորհրդային ժողովրդի նյութական և կուլտուրական մակարդակի հետազա աճման ծրագիրը, ԽՍՀՄ-ի աշխատավորների ել ավելի մեծ բարոյական-քաղաքական և իդեալական համախմբման ծրագիրը բոլմիկյան կուսակցության չուրջը: Կուսակցության կիրառած՝ աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը մարդկության մեծ գիտական զանձարանին—մարդաբանության հաղործակից և դարձնում ամբողջ խորհրդային ժողովուրդը, աշխատավորների բազմաթիվ միլիոններին—կոմունիզմի ակտիվ կառուցողներին:

Լենինյան-ստալինյան ուսմունքը համաշխարհային բանագորական շարժման, ամբողջ գիտական զարդացման փորձը մարդսիստական փիլիսոփայական թեորիայի մեջ ներառելու մասին՝ այդ գիտությունը դարձնում ե, ինչպես առում եր Լենինը, գիտություն նրա պատմական զարդացման ամբողջ ծագալով: Ծնորհիվ մեր կուսակցության փիլիսոփայական աշխարհայացքի բացառիկ հարստության և կենսական ծըշմարտության՝ այդ աշխարհայացքը միակն ե, վոր լիովին ընդդրկում ե ուսումնասիրվող յերեւոյթի եյական ներքին հակասական գծերը: Դիալեկտիկական-մատերիալիստական աշխարհայացքը պահանջում է ուսումնասիրել առարկայի բոլոր կողմերը, նրա բոլոր կապակցություններն ու միջնահաղորդակցումները: «Բազմակողմանիության» այդպիսի պահանջը մեր նախագիտացնում է սխալներից և անզգա-

յացումից»¹, դիալեկտիկական մատերիալիզմը դարձնում է իրականության հեղափոխական փոխակերպության գիտություն:

Հասարակական յերեւոյթների համակողմանի և միաժամանակ կոնկրետ ուսումնասիրության նմուշ և տալիս լենինը, վորը բացահայտում է իմպերիալիզմի զարգացման որինաչփությունները: Ուսումնասիրելով հակայական փառական նյութը, այնպես, ինչպես Մարքսը, յերբ նա ստեղծում եր իր «Կապիտալը», Լենինը մի շարք կլասիկ աշխատություններում գալիս և այն յեղակացության, վոր իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալիզմի զարգացման անհամաշխատության որենքը սրվում է: Լենինը մերկացրեց բուրժուազի լակեյ կառուցիուն, զորը հոչակում եր կազմակերպված կապիտալիզմի — ուլորա-իմպերիալիզմի—ստացիայի գալուստը, վորի ժամանակ կապիտալիզմն իրը տընակալես ամելի ուժեղ ե, քան կես դար առաջ: Հեղափոխության ուժը թուլացնելու համար կառուցին կեղծում եր կապիտալիզմի զարգացման որենքները, դուրս եր քաշում և աղավաղված ձեռվ նկարագրում կապիտալիստական հասարակության զարգացման առանձին տենդենցը, անտեսելով հասարակության կյանքի բոլոր մյուս պայմաններն ու կողմերը, իսկ գուրս քաշված կողմն հրացնում եր իրեւ վճռականը և միակը, Լենինը մինչև վերջը մերկացրեց կառուցիության գործածական սուտ-գիտական «մեթոդոլոգիան»: Լենինը գրում եր, վոր յեթե դատենք արսորակա, պարզեցրած, վոչ-դիմեկտիկորեն և, հետեաբար, սխալ, յեթե «չհենվենց իրականության մեջ տեղի ունեցող զարգացման վրա, այլ նախագես կապերս խօնեն նրանից...», ապա կարելի յե պատկերացնել, թե իրը զարդացումն ընթանում է դեպի մի միակ համաշխարհային տրեստ, վորը կլանում է բոլոր ձեռնարկություններն ու պետությունները: Կանգ առնել միմիայն դրա վերլուծության վրա—նշանակում ե՝ աղաղաղել իրականությունը և արտահայտել խոշոր մոնոպոլիսական բութուազիայի գաղտնի ցանկությունները: Հենց այդ ել անում և կառուցին: Իսկ յեթե կապիտալիզմի զար-

¹ Լենին, Հաս. XXVI, 42 184:

գացման ուղղությունը դիտենք հեղափոխական պրոլետարիատի գիրք, այսինքն՝ միակ դիտական ձևով, որյեկտիվորեն, հետեւղական-մատերիալիստական կերպով, ապա պետք ե ասել, վոր կապիտալիզմի զարգացումն ընթանում ե «այսպիսի հանգամանքներով, այնպիսի տեմպով, այնպիսի հակառակություններով, կոնֆլիկտներով և ցնցումներով, —ընազ վո՞չ միայն անտեսական, այլև քաղաքական, աղքային և այլն, —վոր անպայման ավելի վաղ, քան բայց կհամնի մեկ համաշխարհային տրեսում, մինչեւ աղքային Փինանսական կապիտալների «ուլորա-իմպերիալիստական» համաշխարհային միավորումը, իմպերիալիզմն անխուսափելուն կապայթի, կապիտալիզմն իր հակադրությանը կփոխարկվի»¹: Այդ մեկ որինակն արդեն պայծառ կերպով ցույց ե տալիս, վոր իսկական դիտական հայացքը հասարակական զարգացման վերաբերմամբ մարքսիստական-լենինյան կուսակցության աշխարհայացքն ե, վորը տեսնում ե նորը, զոյացողը, վորին պատկանում ե ապագան, և մյուս կողմից՝ հինը, ժամանակն անցկացրածը, վոչնչացման յենթական: Այդ աշխարհայացքի ամենազորությունն ու հզորությունը նաև այն ե, վոր նա ցույց ե տալիս այլ նորէ, պրոլետեարիվի զարգացման ուղին, նպաստում ե նրա հաղթությանը և մորիկլիզմայի յենթարկում կուսակցության և աշխատավորների ուշադրությունն ու եներգիան՝ հինը, ժամանակն անցկացրածը, ուեակցիոնը վոչնչացնելու համար: Դիալեկտիկական մատերիալիզմը մեղ տալիս ե իսկական պատմական զարգացման խորապես ճիշտ պատկերը, վորի մեջ թեորիականորեն հետեւղական ձևով տրված ե պատմական իրականության արտացոլումը, վոր ապատված ե պատմականություններից ու զարգացման հիմնական առնդցություններից:

Համկ(բ)կ, Կոմինտերնի, նրանց հիմնադիրների և առաջնորդների—լենինի ու Ստալինի թեորիական և պրակտիկ գործունեության մեջ դիալեկտիկական մատերիալիզմը նոր զարաշրջանում, իմպերիալիզմի և պրոլետարական հա-

ջանում, մեր յերկրում սոցիալիզմի անմիջական կառուցման ժամանակաշրջանում՝ գտնում ե իր փայլուն համակողմանի զարգացումը, հիմնավորումը, կոնկրետիզացիան և կիրառումը:

Լենինի հեղափոխական դիալեկտիկան, իբրև Մարքսի ու Յնգելսի ստեղծած դիալեկտիկական մեթոդի հետազարդացում, աճեց ու ամրապնդվեց «II Ինտերնացիոնալի ուսուցառունիզմի դեմ մղվող մարտերում, վորի դեմ պայքար մղելը հանդիսանում եր և հանդիսանում ե կապիտալիզմի դեմ մղվող հաջող կոմիտեացու նախառայիմանը»²: Լենինը Ստալինը ցույց տվեց, վոր լենինը վո՞չ միայն վերածնեց, վերականգնեց, մաքրեց Մարքսի ու Յնգելսի դիալեկտիկական մատերիալիզմը ոպորտունիզմից ու ունիվերսիզմից, «այլ նա մի քայլ ել առաջ գնաց, ավելի ևս զարգացնելով մարքսիզմը...»³

Այն, ինչ վոր տրված ե լենինի մեթոդի մեջ, —ասում եր ընկեր Ստալինը, —հիմնականում արգեն կար Մարքսի ուսումունքի մեջ, վորը, Մարքսի խոսքերով, հանդիսանում եր «իր եյությամբ քննադատական և հեղափոխական ուսումունք»: Հենց այդ քննադատական և հեղափոխական վողով ե տողորված սկզբից մինչեւ վերջը լենինի մեթոդը: Բայց սխալ կլիներ կարծել, թե լենինի մեթոդը Մարքսի տվածի պարզ վերականգնումն ե: Իրոք լենինի մեթոդը վո՞չ միայն վերականգնումն ե, այլև Մարքսի քննադատական և հեղափոխական մեթոդի, նրա մատերիալիստական դիալեկտիկանի կոնկրետիզացիան և հետազարդացումը»³: Վերլուծելով իմպերիալիզմի համաշխարհային զարգացման նոր ետապը, գիտականորեն լուսավորելով պրոլետարիատի պայքարի ուղին հանուն սոցիալիստական հեղափոխության և բանվոր զասակարգի դիկտատուրայի, ստեղծելով ու զարգացնելով մի յերկրում սոցիալիզմ կառուցելու մեջ ուսումնքը, ստեղծելով հայացքների մի բարեկազմ սխակմ ըուլչելիզմի ստրատեգիայի և տակտիկայի հարցերի վերաբեր-

¹ Սլովին, լենինիզմի հարցերը, եջ 2, 10-րդ հրատ.

² Նույն սեղում:

³ Նույն սեղում, եջ 12:

մամբ, մշակելով ուսմունքը պրոլետարիատի կուսակցության մասին, հանրագումարելով՝ ամրող զիտական զարգացումը Մարքսից ու Ենդելսից հետո՝ Լենինն ու Ստալինը համակողմանիրեն զարգացրին ու Հարստացրին մարքսիստական-լենինյան կուսակցության աշխարհայացքը—դիալեկտիկական մատերիալիզմը:

Այսպես, մշակելով բոլշևիզմի սորատեղիան և տակտիկան՝ Լենինն ու Ստալինը զարգացնում են դիալեկտիկական մեթոդի և մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի բոլոր կողմերը։ Նրանք մատնանշում են, վոր կուսակցության սորատեղիկական և տակտիկական խնդիրն ապահովելու համար պահանջում ե թե՛ պատմական պրացեսի ընդհանուր որևէնքների և թե՛ մոմենտի կոնկրետ պայմանների համակողմանի գիտություն։ Պրոլետարիատի պայքարը միմիայն այն դեպքում կարող է հաղթական լինել, որում ե Լենինը, յեթե նրա կուսակցության ծրագիրը «իրական պրացեսի ճշգրիտ ձևակերպումը» լինի։ Հատկապես հենց դիալեկտիկական մատերիալիզմն ե կուսակցությանը հնարավորություն տալիս ձևակերպելու հասարակական դասակարգերի ապագա ճակատամարտերի որինաչափ հետևանքը, նշելու պայքարի սորատեղիկական գիծն ու նորատակը։ Բոլշևիկների մարքսիստական-լենինյան կուսակցությունն իր լողունդներում արտացոլում ե ծավալվող դեպքերի որյեկտիվ պրոցեսն իրենց որինաչափ շարժման մեջ, խստորեն հաշվի առնելով բանվոր դասակարգի ու նրա կուսակցության ակտիվ գործողությունները։ Այս թե ինչու Լենինն ասում եր.

«Զի կարող գոգմատիզմ լինել այնտեղ, վորաեղ գոկտրինայի գերազույն և միակ չափանիշը համարվում ե նրա համապատասխանությունը հասարակական-տնտեսական զարգացման իրական պրոցեսի հետ»¹:

Դիալեկտիկական մատերիալիզմի այս հիմնական պահանջը կատարելու չնորհիվ՝ բանվոր դասակարգի և նրա կուսակցության սորատեղիկական վարքագիծը մատնանշում ե միակ ճիշտ ուղին՝ դրագած նորատակի իրազործելու համար։ Պատմական զարգացման բրական պրոցեսի հետ»¹:

տահականությունների միջից բանվոր դասակարգի կուսակցությունը, հետեւողական-դիտական աշխարհայացքով զինված, տեսնում և պայքարի զեկավարող գծի զարգացման հիմնական տեսնողենցը։ Հենց դրանով ել բացատրվում ե, թե ինչու, Ենդելսի առելով, դեպքերը պրոլետարիատի հեղափոխական կուսակցությանը յերբեք հանկարծակի չեն բերել:

Հաշվի առնելով, վոր պատմությունը «միշտ ավելի հարուստ ե բովանդակությամբ, ավելի բազմազան և, ավելի բաղմակողմանի յի, ավելի կենդանի յի, «ավելի խորամանի և», քան թե յենթագրում են ամենաբավարար կուսակցությունները, ամենից ավելի առաջավոր դասակարգերի ամենաղետական ախանդաբանները»¹, Համեկ(բ)Կ-ն և Կոմինսկինը, խորապես վերլուծելով կոնկրետ իրազորությունը՝ սկզբունքային և ձկուն տակտիկային կառուցում, վոր միշտ համեկունությունը և փոխված իրազորությանը։ Տակտիկայի ձկունությունը պետք է արտացոլի իրականության ձկունությունը և բանվոր դասակարգին վրապես զենք ծառայի այդ իրականությունը փոխելու համար։ Լենինի ու Ստալինի մշակութ հեղափոխական պայքարի տակտիկան ու սորատեղիան ամենապայծառ կերպով ցույց են տալիս դիալեկտիկական մատերիալիզմի ամբողջ նշանակությունը վրապես մայքսիստական-լենինյան կուսակցության աշխարհայացքը։

Դիալեկտիկական մատերիալիզմի հետազազարգացումը, նրա հարուստումը բանվոր դասակարգի բոլոր թշնամիների դեմ մզվազ պայքարի նոր փորձով, արդի գիտական զարգացման վորձով, միջադարյին բանվորական շարժման և ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու փորձով՝ իրազործվում է ընկեր Ստալինի կողմից։ Ամբողջ ամենաբարդ ուղին դեպքի կոմունիզմ, վոր պատմության մեջ անհայտ եր մինչև ԽՍՀՄ-ի փորձը, ընկեր Ստալինը լուսավորում ե հեղափոխական թեսրիայով, կուսակցությանն ու ամբողջ ժողովրդին տալիս ե «վստահություն», կողմնորոշման ուժ և ըրջապատող դեպքերի ներքին կապակցության ըմբռնողու-

¹ Լենին, Հառ. 1, էջ 192։

թյուն...»¹: Հասուկ նշանակություն ունի կոմունիզմի ամբողջ կառուցման համար ԽՍՀՄ-ում ընկեր Ստալինի գեկուցումը Համել(բ)կ ԽՎԻ Համագումարում, ԽՍՀՄ-ի զարգացման հեռանկարների, սոցիալիստական պետության ամրապնդման վերլուծությունը: Զարգացնելով գերեկտիկական մասերի վարչական ընկեր Ստալինը տվեց ԽՍՀՄ-ի գետի կոմունիզմ ընթացող ամբողջ չարժման իմաստուն վերլուծությունը: Ընդունելով, ինչպես նաև Մարքսը, Ենդելոն ու Լենինը, հասարակական զարգացման որյեկտիվ որինաշափությունների իմացության հսկայական գերը, ընկեր Ստալինը կուսակցության մեծ հաղթությունների ուղարձմաններից մեկը համարում և այն բանն իմանալը, թե կուսակցությունն ինչպես և դեպի ուր պետք և տանի գործը: «Կուսակցությունն անպարտելի յե, յերե նա գիտե, թե ուր պետք և տանել գործը, և չի վախենում զժվարություններից»²: Ընկեր Ստալինը տրահանջում և հեղափոխական հեռանկարի խիստ հաշվառում, յերկրի անտեսական և քաղաքական խնդիրները սոցիալիստական շինարարության առանձին հարցերի վրա ամենորյա, «առորյա» աշխատելու հետ ձիչո կերպով զուգորդելու կարողություն: Նա յերկրի զարգացման մեջ կատարվող ամեն մի առաջնաթաց քայլը դիտում և զորպես մի մամենու ԽՍՀՄ-ի ընդհանուր չարժման մեջ զեպի լիակատար կոմունիզմը, յուրաքանչյուր առանձին նվաճում՝ վրապես գեղարի կոմունիզմ ընթացող ընդհանուր զարգացման արտահայտություն, յուրաքանչյուր առանձին հաղթություն՝ վրապես ԽՍՀՄ-ի զարգացման ընդհանուր որենքի դրսերում և բացահայտում, այսինքն՝ կոմունիստական շենարարության, վորեն ուղղություն և տալիս, զեկավարում և կենսագործում և բանվոր դասակարգի գիտառատուրան:

Հետեւով Մարքսին ու Ենդելոնին, վորոնք իրենց ամբողջ մարտական հեղափոխական գործունեյության ընթացքում անողոք պայքար եյին մղում ընդդեմ իդեալիզմի բոլոր տեսակների, ընդգեմ մետաֆիզիկայի (յերիտասարդ-հեղեկաններ՝ Բ. Բառերից, Շտիրներից և ուրիշներից—մին-

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 13, 10-րդ հրատ.:

² Նույն տեղում, էջ 512:

չև Ավենարիուսը) և մեխանիցիզմի (Ֆոխտի, Բյուլիների, Մուշչոստի տիպի վուրդար մատերիալիստներից մինչև սխալաստ-եկեկտիկները, ինչպես Դյուրիննոց և ուրիշները), Լենինն ու Ստալինը, շարունակելով պայքարը իդեալիզմի և մետաֆիզիկայի բոլոր տեսակների գեմ, մինչև վերջը մերկացրին նարոդնիկների, մախիստների, նոր-կանուականների, սորովեյականների, մենչեկիների, կառուցկիականների, կապիտալիզմի արոցկիստական-բուխարինական ռեստավրատորների և ուրիշների փելլոսովայության հարցերի վերաբերյալ ամեն տեսակ գրությունների ռեակցիոն, հակագիտական, սովորական բնույթը:

Ընկեր Ստալինը, ԽՍՀՄ-ի ժողովուրդների առաջնորդը, մինչև վերջը մերկացրեց արոցկիստանների, զինովյեկալանների, բուխարինականների և բուրժուական նացիոնալիստների հակահեղափոխականությունը, զորոնք ԽՍՀՄ-ի գեմ ունեցած իրենց կատալի ատելությամբ ու պայքարով միավորի գարձել եյին լրտեսների, գելլերաստանների, մարդապահների ֆաշիստական ավազակախումբը:

Ընկեր Ստալինի անմիջական զեկավարությամբ կուսակցությունը ջախճախեց մենշևիկող իդեալիզմն ու մեխանիցիզմը, փորոնք փիլիսոփայական Փրոնտում՝ Հանդեռ եյին զալիս վարչիս ուղղակի իդեալոգիական քողարկում արոցկիստական-բուխարինական վիժվածքների, Փաշխատական վիժվածքների սոսոր, լրտեսական գործունեյության համար: Ժողովրդի թշնամիների գեմ մղվող անհաշտ պայքարում ընկեր Ստալինը զարգացրեց մարքսիզմ-լենինիզմը, դիալեկտիկական մատերիալիզմը:

Սոցիալիզմի հաղթությունը ԽՍՀՄ-ում, վոր կազմակերպեց Լենինի-Ստալինի կուսակցությունը, այն կուսակցությունը, վարի փիլիսոփայական աշխարհայացքը դիալեկտիկական-մատերիալիզմն և, հանդիսանում և մարքսիստական-լենինյան թեորիայի մեծագույն հաղթանակը: Ամբողջ համաշխարհային զարգացումը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի զարգացումը՝ փայլուն հաստատումն և դիալեկտիկական մատերիալիզմի-Մարքսի, Ենդելոնի, Լենինի, Ստալինի ստեղծած աշխարհայացքի լիակատար ճշմարտության, խոր դիտականության և գործունության:

Հնկեր Ստալինը կուսակցության XVIII համազումաբռում
արած իր յերևելի գիկաւցման մեջ հանձարեղ խորաթափական-
ցությամբ բացահայտեց աշխատավորների կոմունիստական
դաստիարակության և մեր կադրերի կողմից թերիային
տիրապետելու գործի նշանակությունը՝ կոմունիզմի հաջող
կառուցման համար։

«Հարկավոր և վորպես աքսիոմա ընդունել, —ասում եր
ընկեր Ստալինը, —վոր ինչքան ավելի բարձր և պիտական և
կուսակցական աշխատանքի ուղածդ հյուղի աշխատողների
քաղաքական մակարդակն ու մարդաբանության գի-
տակցականությունը, այնքան ավելի բարձր և ավելի արդյու-
նավետ և բուն աշխատանքը, այնքան ավելի եֆեկտիվ են աշ-
խատանքի արդյունքները և, ընդհակառակը, —վորքան ավել-
ի ցած և աշխատողների քաղաքական մակարդակը և մարք-
սիստական-լենինյան գիտակցականությունը, այնքան ավելի
հավանական են աշխատանքի ճախողումներն ու տապալումնե-
րը, այնքան ավելի հավանական և աշխատողների իրենց
մանրացումն ու վերասերումը գործամոլ-մանրախնդիրների,
այնքան ավելի հավանական և նրանց այլասերումը։ Կարելի
յև վստահությամբ ասել, վոր, յեթե մենք կարողանայինք
աշխատանքի բոլոր հյուղերի մեր կազմերին պատրաստել
իդեոլոգիապես և նրանց քաղաքականակես կոմիտ այն չա-
փով, վոր նրանք կարողանան ազատ կերպով կողմնորոշվել
ներքին և միջազգային իրադրության մեջ, յեթե մենք կա-
րողանայինք նրանց լիովին հասուն մարդուստ-լենինյաններ
դարձնել, վորոնք ընդունակ են առանց լուրջ սխանների լու-
ծելու յերկրի գեկավարման հարցերը, —առա մենք բոլոր
Հիմքերը կունենայինք մեր բոլոր հարցերի իննը տասերորդն
արդեն լուծված համարելու։»

Մեր կուսակցության ուշադրությունը, նրա իմաստուն
վորոշումներն ուղղված են կուսակցության և պիտաւթյան
կադրերի և Խորհրդային յերկրի բոլոր աշխատավարների
թերիական և քաղաքական մակարդակը բարձրացնելու
կողմը։

Բոլոր մարդկային հասարակությունները մինչև քաղա-
քական իշխանությունը բանվոր գասակարդի կողմից գրավ-
վելը պարզանում է յին տարերայնորեն, հակոսական ձեռվ,

բուռն ցնցումների և հակամարտությունների միջով։ Այդ
զարգացմանը հաճախ ուղեկցում եյին հետադարձ քայլեր,
նահանջներ, հասարակության զարգացման պրոգրեսիվ տեն-
գնացների փոխարինումը ուղեկցիոն տենդենցիներով և այլն։

Պրոլետարիատի դիկտատուրայի դարաշրջանը բնորոշ-
վում և հասարակության զարգացման բոլորովին ուրիշ
առանձնահատկություններով։ Այստեղ չկա աշխատավորնե-
րի կույր հնագանդությունը ոտար, արտաքին և նրանցից ան-
կախ ուժերին։ Փողովուրդն, իր ձեռքը վերցնելով իշխանու-
թյունը, ինքն և կառավարում իր վիճակը։ Բայց հենց այդ
հանդամանքն ե, վոր վիթխարի պատասխանատվություն և
զնում աղաս ժողովրդի վրա, վոր ինքնուրույնորեն կառու-
ցում և իր կյանքը, կուսակցական և անկուսակցական բոլ-
շևեկների լայն շերտերից պահանջում և համակողմանիորեն
տիրապետել հասարակության զարգացման վերաբերյալ
որենքների դիմությանը։

Մեր յերկրին ընթանում ե պատմությանը գեռ անհայտ
ուղիով, ընթանում և գեպի կոմունիզմ, վորի պատմական
անխուսափելիությունը գիտականորեն ապացուցել են մարք-
սիզմ-լենինիզմի հիմնադիրները։ Այն, ինչ վոր թեորիանեա
նախագուշակել եյին Մարքսն ու Ենդեկլը, մեր պայման-
ներում դառնում և ռեալ իրականություն ու բազմաժիշտոն
ժողովրդի պրակտիկ կյանքը։ Այս պայմաններում հակայա-
կան չափով աճում և առաջավոր հեղափոխական թեորիայի
գերը։ Նրանից, թե ինչպես են մեր կազմերը տիրապետում
հասարակության վերաբերյալ գիտությանը, թե ինչպես մեր
յերկրի աշխատավորների բազմաժիշտոն մասսաները այդ գի-
տելիքը կիսումարկեն իրենց հարազատ, մոտիկ և մատչելի
դործին, նրանից, թե ինչպես խորհրդային ժողովրդի կամքն
ու փորձը և նրա անսպաս հեղափոխական եներգիան կուղղո-
վեն գեպի այն պլանների իրադրումը, վորոնք գծված են
կուսակցության XVL համազումարի վորոշումներով, —այդ
ամենից կախած կլինի մեր ամբողջ գործի հաջողությունը։

Մեր ժողովրդի ամբողջ ստեղծագործական գործու-
նեյության մեջ, նրա կոմունիստական գիտակցականության
ամեն մեջ, մարդկանց գիտակցության մեջ յեղած կապիտա-
լիզմի մնացուկների հաջող հաղթահարման մեջ վճռական

նշանակություն ունի մեր բոլենիկյան կուսակցությունը։ Հատկապես նա, զեկավարելով կոմունիզմի ամբողջ շնորհարությունը, միավորում և մորիլիզացիայի յի յենթարկում ժաղովրդի բոլոր ստեղծագործական ընդունակությունները՝ կոմունիզմի կառուցման համար։ Հոկայական չափով աճում են կուսակցության առաջ կանդնած խնդիրները, նրա դեքը։

Ենինի—Ստալինի կուսակցությունը յերկիրն ամենաբարդ ուղիղով սոցիալիզմի հասցեց։

Եթե մենք մեզ հարցնեյինք, թե վորտեղ են մեր աչքի ընկնող հաջողությունների պատճառները, վորոնք ձեռք են բերված հակառակ մնասարանների, մարդասպանների, տրոցիկստական-բուխարինական վիճակների, լրաեսների, ոտարերկրյա հետախուզությունների գործակալների բոլոր փորձերի՝ արգելք հանդիսանալու մեր շարժմանը դեպի կոմունիզմ, ապա մենք պետք ե ասեյինք, վոր դրա պատճառը գտնվում է մեր կուսակցության լինինյան-ստալինյան քաղաքականության մեջ, նրա մարտունակության մեջ, նրա շարքերի միասնության մեջ, մեր կուսակցության կկ-ի ստալինյան ղեկավարության մեջ։

Չուր չե, վոր այժմ մեր ժողովրդի բոլոր շերտերի համար և կապիտալիստական յերկրների բոլոր ազնիվ և առաջավոր ժարդեանց համար մեր կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի անունը սինոնիմ է այնպիսի բառերի, ինչպիսիներն են՝ աղատություն, յերջանկություն, պրոզես, կուլտուրա։

Մարքսի ու Ենդելսի դաստիարակած պրոլետարական հեղափոխականների կուսակցությունը, բոլշևիկների մհծ կուսակցությունը, վոր դաստիարակել ու կոմիկ են լինին ու Ստալինը, միշտ հոկայական նշանակություն եր տալիս հասարակության վերաբերյալ դիտությանը, հեղափոխական սրբնքները գիտենալուն։

Վոչ մի բուրժուական և մանր-բուրժուական կուսակցություն, վո՛չ անցյալում, վո՛չ ներկայումս վոչ մի կերպ չեն կարող համեմատվել բոլշևիկների կուսակցության հետ՝ կուսակցության վերաբերմունքի հարցում դեպի գիտությունը, թեորիայի մեջ հասարակական կյանքի որենքների ճիշտ

արտացոլման հարցում։ Այդ բանը բացատրվում է նրանով, վոր միմիայն բոլենիկների կուսակցությունն է, վոր իր պայքարի ծրագրում արտահայտում է բոլոր ժողովուրդների ապագան։ Նրա նախատակները, կոմունիզմ կառուցելու նրա պլանը չեն հակասում հասարակության պատմական զարգացման որյեկտիվ ընթացքին, այլ, ընդհակառակը, բոլում ևն նրանից և աջակցում են այդ զարգացմանը։

Ահա ինչու մեր կուսակցության մեծ իդեաները ժողովրդին միշտ դեպի առաջ են կոչել, դեպի պայքար հասարակական կյանքի ավելի բարձր ձեփի համար, իրենց մեջ պարունակում եյին հուժկու կոչ դեպի հաղթությունը, ընդունակ եյին աշխատավորների բազմամիլիոն մասսաներին համախմբելու և միավորելու՝ պայքարելու համար հանուն նոր հասարակակարդի հաղթության հնի վերաբերմամբ։ Յել ընդհակառակը։ Վորչափով բուրժուական և մանր-բուրժուական կուսակցությունների նպատակներն ու ծրագրային սահմանումները պաշտպանում եյին արդեն կազմավորված բուրժուական հասարակական հարաբերությունները, պահածոյում (կոնսերվirovali) և արդարացնում եյին նրանց, այդ չափով այդ կուսակցությունների նպատակներն անխուսափելիորեն հակասության մեջ եյին ընկնում հասարակական կյանքի մեջ յեղած ամեն մի պրոգրեսիվ բանի հետ, այդ չափով այդ ուսեակցիոն կուսակցությունների և դասակարգերի իդեոլոգիան հարկադրված է բոլոր միջնորդով արդարացնելու կազմավորված, բայց իր ժամանակն արգեն անցկացրած հասարակակարգը։ Այդ պատճառով ել հասկանալի յե դատում այն վաստակ, վոր բուրժուական իշեոլոդները յերբեք չկարողացան ծըմարտացի և համակողմանիորեն բացահայտել հասարակական կյանքի որենքների իմաստը։

Բուրժուական դիտնականներն ամեն կերպ աղավաղում եյին և աղավաղում են՝ պատճական վաստերը, միտունավոր կերպով ընդհանրացնում են տեղեկությունները ժողովուրդների պատմությունից վերցրած քաղաքական դեպքերի մասին, սիալ պատկերացում են ստեղծում հասարակության զարգացման հետանկարների մասին, նրա ապագայի մասին, հանդես են գալիս գիտության և կուլտուրայի այն գործիքների դեմ, վորոնք պայքար են մղում բանվոր դաս-

նշանակություն ունի մեր բոլշևիկյան կուսակցությունը։ Հատկապես նա, զեկավարելով կոմունիզմի ամբողջ շինարարությունը, միավորում և մորթիզացիայի յև յենթարկում ժողովրդի բոլոր ստեղծագործական ընդունակությունները՝ կոմունիզմի կառուցման համար։ Հակայական չափով աճում են կուսակցության առաջ կանոնած խնդիրները, նրա դերը։

Ենինի—Ստալինի կուսակցությունը յերկիրն ամենաբարդ ուղիով սոցիալիզմի հասցրեց։

Յեթև մենք մեղ հարցնեինք, թե վորտեղ են մեր աչքի ընկնող հաջողությունների պատճառները, վորոնք ձեռք են բերված հակառակ վնասարարների, մարդասովանների, արոցկիստական-բուխարինական վիժվածքների, լրտեսների, ոտարերկրյա հետախուզությունների գործակալների բոլոր փորձերի՝ արգելը հանդիսանալու մեր շարժմանը դեպի կոմունիզմ, ապա մենք պետք ե ասեինք, վոր դրա պատճառը գտնվում ե մեր կուսակցության լինինյան-ստալինյան քաղաքականության մեջ, նրա մարտունակության մեջ, նրա շարքերի միանության մեջ, մեր կուսակցության կե-ստալինյան զեկավարության մեջ։

Չուր չե, վոր այժմ մեր ժողովրդի բոլոր չերտերի համար և կապիտալիստական յերկրների բոլոր աղնիվ և առաջավոր մարդկանց համար մեր կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի անունը սինոնիմ ե այնպիսի բառերի, ինչ-պիսիներն են՝ աղատություն, յերջանկություն, պրոգրես, կուտուրա։

Մարքսի ու ենդելսի դաստիարակած սլրուխտարական հեղափոխականների կուսակցությունը, բոլշևիկների մեծ կուսակցությունը, վոր դաստիարակել ու կովել են լենինն ու Ստալինը, միշտ հակայական նշանակություն եր տալիս հասարակության վերաբերյալ գիտությանը, հեղափոխական որենքները գիտենալուն։

Պոչ մի բուրժուական և մանր-բուրժուական կուսակցությունն, վո՛չ անցյալում, վո՛չ ներկայումս վոչ մի կերպ չեն կարող համեմատվել բոլշևիկների կուսակցության հետ՝ կուսակցության վերաբերմունքի հարցում դեպի գիտությունը, թեորիայի մեջ հասարակական կյանքի որենքների ճիշտ

արտացոլման հարցում։ Այդ բանը բացատրվում է նրանով, վոր միմիայն բոլշևիկների կուսակցությունն ե, վոր իր պայքարի ծրագրում արտահայտում ե բոլոր ժողովուրդների ապագան։ Նրա նպատակները, կոմունիզմ կառուցելու նրա պլանը չեն հակասում հասարակության պատմական դարդացման որբեկութիվ ընթացքին, այլ, ընդհակառակը, բղխում են նրանից և աջակցում են այդ գարգացմանը։

Ահա ինչու մեր կուսակցության մեծ իդեաները ժողովրդին միշտ դեպի առաջ են կոչել, դեպի պայքար հասարակական կյանքի ավելի բարձր ձեփ համար, իրենց մեջ պարունակում եյին հուժկու կոչ դեպի հաղթությունը, ընդունակ եյին աշխատավորների բազմամիւնուն մասսաներին համախմբելու և միավորելու՝ պայքարելու համար հանուն նոր հասարակակարգի հաղթության հնի վերաբերմամբ։ Յեկը ընդհակառակը։ Վորչափով բուրժուական և մանր-բուրժուական կուսակցությունների նպատակներն ու ծրագրային սահմանումները պաշտպանում եյին արդեն կազմակորչած բուրժուական հասարակական հարաբերությունները, պահածոյում (կոնսերվիրօվալի) և արդարացնում եյին նրանց, այդ չափով այդ կուսակցությունների նպատակներն անխուսափելիորեն հակասության մեջ եյին ընկնում հասարակական կյանքի մեջ յեղած ամեն մի պլրոգրեսիվ բանի հետ, այդ չափով այդ ուսակցիոն կուսակցությունների և դասակարգերի իդեոլոգիան հարկադրված և բոլոր միջոցներով արդարացնելու կազմակորչած, բայց իր ժամանակն արդեն անցկացրած հասարակակարգը։ Այդ պատճառով ել հասկանալի յե զառնում այն փաստը, վոր բուրժուական կյենուղները յերբեք չկարողացան ջմարտացի և համակողմանիորեն բացահայտել հասարակական կյանքի որենքների իմաստը։

Բուրժուական դիմականներն ամեն կերպ աղավաղում եյին և աղավաղում են՝ պատմական փաստերը, միտումնավոր կերպով ընդհանրացնում են տեղեկությունները ժողովուրդների պատմությունից վերցրած քաղաքական դեպի-րի մասին, սխալ պատկերացում են ստեղծում հասարակության զարգացման հեռանկարների մասին, նրա ապագայի մասին, հանդես են գալիս գիտության և կուլտուրայի այն դորձիչների դեմ, վորոնք պայքար են մղում բանվոր դաս-

կարգի գործի համար, վորոնք իրենց բոլոր իդեաները, ցանկությունները, քաղաքական նպատակներն ու կազմակերպություններն ուղղում են տիրապետող, շահագործող դասակարգերի գեմ։ Բուրժուական հասարակագիտությունը զարգարել և ըստ եյության գիտություն լինելուց չնորհիվ այն հանգամանքի, վոր նաև աղավաղված, սիալ կերպով և բացառում պատմական պրոցեսը։

Միևնույն բանը կարելի յեւ ասել նաև արդի սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների այսպես կոչված հասարակական «գիտության» մասին։ Բավական և մատնանշել թերութայի և պրակատիկ գործունեյության, իդեաների և ժողովրդի կրանքի, ծրագրային նպատակների և պայքարի պրակտիկ մթջոցների ու ձևերի այն խորազույն խզումը, վոր բնորոշ և ամեն մի սոցիալ-դեմոկրատական կուսակցության գործունեյության համար, վորպեսզի համոզվինք այն բանում, վոր հասարակության վերաբերյալ այդ հայացքներն ել չեյին կարող իրոք գիտական և բեղմնագոր լինել։

Ընկեր Ստալինն իր «Անինիվմի հիմունքների մասին» հանճարեղ կլասիկ աշխատության մեջ բացահայտեց սոցիալ-դեմոկրատական իդեոլոգիայի հիմնական արատը—թեորիան իսկումը պրակտիկայից և իրրև այդ խզման հետեւանք—սոցիալ-դեմոկրատ «տեսաբանների» համար լիակատար անհնարինությունը՝ ճանաչել հասարակական կյանքի որենքնը և այդ որենքներն ի սպաս զնել պրոլետարիատի հեղափոխական գործություններին։

Ընկեր Ստալինը մատնանշում և, վոր թեորիայի և պրակտիկայի խորը խզման հետևանքով՝ Անտերնացիոնալի սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցություններում տեղ ունեն «ամբողջական հեղափոխական թեորիայի փոխարեն—հակասական թեորիական դրույթներ ու թեորիայի բեկորներ, վորոնք անջատված եյին մասսաների կենդանի հեղափոխական պայքարից և հնամաշ գործաների եյին վերածվել։ Զեք համար, իհարկե, հիշում եյին Մարքսի թեորիան, բայց այն նպատակով, վորպեսզի նրա միջից դուրս վանեն կենդանի հեղափոխական վոդին։

Հեղափոխական քաղաքականության փոխարեն—թուլա-

մորթ Փիլիստերություն և ժուժկալ պոլիտիկանություն, պառամենտական դիվանադիտություն և պառամենտական կոմբինատիվներ։ Զեք համար, իհարկե, ընդունվում եյին «հեղափոխական» վորոշումներ, սակայն մահացի տակ դնելու համար։

Կուսակցությանն իր սեփական սխալների վրա գտատիաբակելու և ճիշտ հեղափոխական տակտիկա սովորեցնելու փոխարեն—խնամքով զանցառում ցավոտ հարցերի, նրանց քորակումն ու սվազումը։ Զեք համար, իհարկե, չեյին հրաժարվում ցավոտ հարցերի մասին խոսելուց, բայց նրա համար, վորպեսզի գործը վերջացնեն վորևէ «կառւչուկային» բանաձևով։

Ահա թե ինչպես եր Ա ինտերնացիոնալի կերպարանքը, նրա աշխատանքի մեթոդը, նրա զինանոցը»¹։

Ավելի ևս գարսացնելով մարքսիստական գիտությունը հասարակության մասին, բոլցերկյան կուսակցության մասին, լինին ու Ստալինը ջախճախիչ քննադատության յնթարկեցին Ա ինտերնացիոնալի թեորիական դպրմաները։ Պահանջվում եր, ինչպես ասում եր ընկեր Ստալինը, վերականգնել խախտված միասնությունը թեորիայի և պրակտիկայի միջև, լիկվիդացիայի յենթարկել նրանց միջև յեղած խզումը և այդ հողի վրա իսկական պրոլետարական կուսակցություն ստեղծել, զինված ամենաաջակոր, հետեղողական-դիտական հեղափոխական թեորիայով։

Ընկեր Ստալինը բազմիցս մատնանշել և, թե ինչպիսի ահազին վնաս կարող ե հասցնել բանվորական շարժման համար թեորիայի անջատումը պրակտիկայից, հասարակական կյանքի որենքները դիտենալլ հեղափոխական պայքարին ի սովոր զնելու անկորուզությունը։

1926 թվին Կոմիտերնի Գործկոմի VII ընդլայնված պլենարին արած զեկուցման մեջ ընկեր Ստալինը հաղորդեց մի շվեդական հեղափոխական սինդիկալիստի պատմածը։

«Գործը տեղի յեւ ունեցել 1906 թվին, մեր կուսակցության Ստոկհոլմի համազումարի ժամանակ։ Այդ շվեդական

¹ Ստալին, Լենինիդի հարցերը, հջ 18 (Հայերեն), 1907 թ.։

ընկերն իր պատմվածքում բավական ծիծաղելի կերպով եր պատկերում սոցիալ-դեմոկրատների՝ Մարքսից ու Ենդելից ցիտատներ բերելու յեղանակը, իսկ մենք, համագումարի պատգամավորներս, լսելով նրան, Հռհռում ելինք ուշաթափելու աստիճան։ Ահա այդ վերսիայի բովանդակությունը։ Պործը կատարվում է Դրիմում նախատրմի և հետեակազմը ապատամբության ժամանակ։ Գալիս են նավատորմի և հետեակազմորի ներկայացուցիչները և առում են սոցիալ-դեմոկրատներին։ Դուք վերջին տարիներս մեղ կոչ ելիք անում ապատամբիլ ցարիզմի դեմ, մենք համոզվեցինք, վոր ձեր կոչն արդարացի յի, մենք, նախատիներս և հետեակազմորը, համաձայնության յեկանք ապատամբելու և այժմ դիմում ենք խորհրդին։ Սոցիալ-դեմոկրատներն իրարանցման մեջ ընկան և պատասխանեցին, վոր նրանք չեն կարող ապատամբության հարցը վճռել առանց հատուկ կոնֆերենցիալիցիան կամացը ինը, վոր հապաղել չի կարելի, վոր գործն արդեն պատրաստ ե, և յեթե նրանք ուղղակի պատասխան չառանան սոցիալ-դեմոկրատներից, իսկ սոցիալ-դեմոկրատները չանձն չառնեն ապատամբությունը դեկազմարել, ապա գործը կարող և խորտակվել։ Նախատիներն ու դիմուները գնացին՝ սպասելով դիրեկտիվների, իսկ սոցիալ-դեմոկրատները կոնֆերենցիան հրավիրեցին՝ հարցը քննարկելու համար։ Վերցրին «Կապիտալի» առաջին հատորը, վերցրին «Կապիտալի» յիշերորդ հատորը, վերցրին, վերջապես, «Կապիտալի» յիշերորդ հատորը։ Յուղումներ են վնասում Դրիմի, Սեւաստոպոլի վերաբերյալ, Դրիմի ապատամբության վերաբերյալ։ Բայց վո՛չ մի, տառացիորեն վո՛չ մի ցուցում չեն գտնում «Կապիտալի» յիշեք հատորներում վո՛չ Սեւաստոպոլի մասին, վո՛չ Դրիմի մասին, վո՛չ նախատիների ու դիմուների ապատամբության մասին (ծիծալ)։ Թերթում են Մարքսի ու Ենդելի յերկերը, ցուցումներ են վնասում, —մինույն ե, վոչ մի ցուցում դուրս չեկալ (ծիծալ)։ Ի՞նչ պետք եր անել։ Իսկ նախատիներն արգեն, յեկել են, պատասխանի յեն ուղասում։ Յեվ ի՞նչ։ Սոցիալ-դեմոկրատներն ստիպված յեղան խոստվանելու, վոր իրերի այլպիսի դրության դեպքում նրանց ուժերից վեր և վորնե ցուցում տալ նախատիներին և դիմ-

վորներին։ «Այսպես խորտակվեց նախատորմի և հետեակազմը ապատամբությունը», —վերջացրեց իր պատմվածքը շերտական ընկերը։ (Ծիծալ)։

Միանգամայն հասկանալի յի, վոր հեղափոխության որենքները գիտենալը այդ ձեռով պրակտիկ հեղափոխական գործունեյության հետ «միացնելը» յերբեք չեր կարող հաղթության, սոցիալիստական մեծ նվաճումների հասցնել։ Միմիայն Մարքսն ու Ենդելի ըլք, մեր հաղթական բոլչեկլյան կուսակցությունն ե, վոր իր նշանակությամբ մեծ պատմական փորձ են ստեղծել միջանց հետ միացնելու հասարակական կյանքի վերաբերյալ, հեղափոխության որհնչերի և կոմունիստական շինարարության վերաբերյալ գիտական հայացքները և աշխատավորների մասսայական հեղափոխական շարժումը, վոր ուղղված և կապիտալիստական սորչության դեմ, սոցիալիստական նվաճումների ողափին պայքարելու համար։

Մարքսն ու Ենդելի յերեկի նմուշներ են թողել այն բանի, թե հեղափոխական կուսակցությունն ինչպես պետք է պայքարի հասարակության մասին խկական գիտական գիտելիքներ ձեռք բերելու համար ե, վոր ամենազգլիստվորն ե, ինչպես պետք է այդ գիտությունն միացնել մասսայական բանվորական հեղափոխական շարժման հետ։

Մի որինակ։ 1846 թվի մարտի 30-ին Մարքսն իր բնակարանում մի խորհրդակցություն հրավիրեց, վորպեսզի վճռեն գերմանական ժողովրդի բոլոր հեղափոխական ուժերը միավորելու հարցը՝ ուսակցիայի և կամայականության դեմ պայքար մղելու համար, վորպեսզի գործողությունների ըստ կարելույն ընդհանուր ձև վորոշն բանվորական շարժման դեկազմարների միջև։ Այդ խորհրդակցությանը, բացի Մարքսից ու Ենդելիցից, ներկա ելին՝ վայտինդը, վոր հերձվածողական, ուստափիական կոմունիզմ եր քարոզում, կոմունիստներին հարող եղանակ Փոն Վեստֆալենը։ ԱՄՆ-ի բանվորական շարժման գործիչ, ԱՄՆ-ում մարքսիզմի առաջին պրոպագանդիստ Վայդեմայերը, ուսւալիքը իրերալ ժուռնալու Պ. Վ. Աննենկովը և ուրիշները։ Աննենկովն իր «Քրական հիշողություններում» գրում ե, թե Մարքսը հարց գրեց այն մասին, վոր ժամանակն և վերջ տալու որդեստա-

վորների «հերձածողական կոմունիզմին», վոր սլահանջվում է գիտական կոմունիզմ քարողել: Վայտինդը—հերձածողական կոմունիզմի ներկայացույցից—մկնեց այն միտքը զարգացնել, վոր իր պրոլետարիտատի համար նշանակություն չտանի, թե նա թեորիական ասպարիզում վորքան ենախապատճառավայրած, վոր նրա համար մեծ նշանակություն ունի բանվորների մազաղիներ, կաֆեներ, առևտրական ձեռնարկություններ կազմակերպելը և այլն: Վայտինդը, համանորեն, դեռ ելի կառուեր, «յեթե Մարքսը, զայրացիությունը հոգեցը՝, ընդհատեր նրան և իր առարկությունները չոկուր: Նրա սարկաստիկական ճառի եյությունն այն եր, թե զրգուել բնակչությանը, չտալով նրան վոչ մի ամուր, մտածված հիմունք գործունեցության համար, կնշանակի պարզապես խարել նրան: «Ֆանտաստիկական հույսեր հրահրելը, վորի մասին խոսվեց հենց այժմ, —նկատում եր այնուհետեւ Մարքսը,—տանում ե միայն զետի կործանում և վոչ թե զետի տասապողների փրկություն... Դիմել աշխատողին առանց խստորեն զիտական իդեայի և զրական ուսմունքի՝ հալասարազոր և դատարկ և սնապնիզ քարոզչության, վորի ժամանակ, մի կողմէց, յևնթաղրվում և վոգենչված մարզարե, իսկ, մյուս կողմէց—թույլարվում են միայն եշեր, վորոնք բերանները բաց արած լուսմ են նրանց:

Եւր Վայտինդն սկսեց պնդել իր Փիլիսոփեական, ուսուպիտիական, ուեակցիոն պլանները, ժխտելով հեղափոխական թեորիայի նշանակությունը բանվոր դասակարգի կողմէց հաղթություն նվաճելու համար, վերջնականապես մոլեգնած Մարքսը բուռնցքով այնպես ուժգին խիեց սեղանին, վոր սեղանի վրա լամպը զնդզնդաց և որորվեց, և վերթուավ տեղից՝ բացականչելով. «Դեռ վոչ մի ժամանակ տղիտությունը վոչ վոքի չի ոգնել»²:

Այս փաստը, ինչպես նաև ընդհանրապես Մարքսի ամբողջ գործունեցությունը, բնորոշում ե նրա պայքարը բանվոր դասակարգի պատմական դերի մասին յեղած հակադե-

¹ Պ. Ա. Աննենկով, Գրական հիշողություններ, էջ 482, լ. 1928:

² Խոյն աելում, էջ 483:

տական պատկերացումների դեմ: Մարքսը կողմնակից եր հեղափոխական թեորիայի և պրակտիկայի խորին միասնության միջազգային բանվորական շարժման մէջ:

Մարքսի հենց այս յերեսի իդեաներն եյին, վոր դարձրեց ու հարստացրեց Լենինն իր բազմաթիվ աշխատություններում և հատկապես «Ի՞նչ անել» գրքում:

Լենինի հանճարեղ ուսմունքը հեղափոխական թեորիան մասսայական բանվորական շարժման հետ միացնելու մասին իր հետաղ զարգացումը գտավ ընկեր Ստալինի աշխատություններում: Լենինի մեծ զինակիցը, մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինը բոլցելիկյան կուսակցությանը սովորեցնում և Լենինի նման զիտությունը միացնել գործողության հետ, թեորիան՝ պրակտիկայի հետ, սովորեցնում ե բարդ հասարակական դեպքերի մեջ կողմնորոշվելու կարողությունը միացնել հաղթության լենինյան յեղանակով կաղմակերպելու կարողության հետ: Ընկեր Ստալինը, զարդարվելով մարքսիստական-լենինյան ուսմունքը հասարակության մասին, բացահայտեց ժողովրդի մեծ ստեղծագործական, շինարար դերը, յերբ գործունեյությունն իրականացվում և հեղափոխության որևէնքների դիտության, հասարակության զարգացման որենքների հիման վրա: Բացարիկ նշանակություն վերաբերելով հեղափոխական թեորիային, պրոլետարական հեղափոխության զարգացման որենքները գիտենալուն, ընկեր Ստալինը վիթխարի նշանակություն և տալիս հեղափոխական ժողովրդի կազմակերպված, ամենահզոր ստեղծագործական դորժունեյությանը:

Ընկեր Ստալինը սպազմությում և, վոր ժողովուրդն իր գործունեյության մեջ անմահ և, վոր սպամական պրոցեսի խկական ստեղծողը հանդիսանում են բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան, վոր միմիայն այստեղ են հնարավոր մեծ հաղթություններ և քաջակորով նվաճումներ, վորակեղ ամենախոր ներքին ձեռվ միացած են գիտությունն ու ժողովուրդը, կոմունիզմն ու աշխատավոր մասսաների գործունեյությունը: Բարձրագույն ձեռքբերումն ու այս հայցքի ճշմարտության ամենամեծ հաստատությունը հանդիսանում է զիտության և ժողովրդի գործունեյության

յերենելի միացումը կորհրդային յերկրում, ժողովրդի և կոմունիզմի միացումը:

Այժմ արդեն մեր յերկրի ամեն մի աշխատավորի համար յեղակացությունը միանգամայն վորոշակի յեւ և պարզ յեթե էենինի—Ստալինի մեծ կուսակցությունը խստորեն գիտական ձեռով չհայտնագործեր կոմունիստական հասարակության կառուցման կառուցման ուղղիները, որենքները, յեթե բոլշևիկյան կուսակցությունն իր վճիռներում չզծաղրեր սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման կոնկրետ միջոցները, ձեերը և պատմական ժամկետները, և յեթե յերեք հեղափոխությունների փառքով պատկված կուսակցությունը, վոր Խորհրդային յերկրի ժողովրդին հասցրեց յերջանիկ, ուրախ կյանքի, չկարողանար այդ բոլոր իրեաները ժողովրդին հասցնել, ժողովրդին համախմբել իր շուրջը, ժողովրդին տանել իր հետևելից, —ապա չեյին կարող լինել այն մեծ հաղթություններն ու նվաճումները, վորոնցով ոգտվում են մեր յերկրի աշխատավորները:

Բոլշևիկյան կուսակցության այս անվիճելի նվաճումները հանդիսանում են լենինյան-ստալինյան ուսմունքի ամենախոր և համակողմանի հաստատումը՝ հեղափոխության որենքները, կոմունիզմի շնարարության որենքները գիտենալը ժողովրդական մասսաների հուժկու ստեղծագործական դործունեցության հետ միացնելու մասին:

Այս ամենը կուսակցության յուրաքանչյուր անդամի և անկուսակցական բոլշևիկի վրա պարտականություն եղնում՝ անընդհատ իւսումնասիրել մեր կուսակցության մեծ պատմական փորձը, նրա ուսմունքը պլողետարական հեղափոխության որենքների մասին, կարողանալ զեկավարվել այդ ուսմունքով՝ կուսակցության վորոշումներն իրականացնելու համար իր մղած պայքարում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե Ե Ր Ա Ճ Ո ւ Թ յ ո ւ ն	3
I. Հեղեկի գիտակության «ուսցիոնալ հատիկի» մասին	9
II. Լուգվիդ Ֆունկցիան կիմնական հատիկի» մասին	32
III. Դիալեկտիկական մատերիալիզմը մարքսիստական-լենինյան կուսակցության աշխարհայոցն և	53

Թարգմանեց Յե. Տիմասյան
Խմբագիր Դ., Վարդապետյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիդեշյան
Կոնսըռլ սրբագրիչ Լ. Արուվյան

Գլավլիտի լիազոր № Ն-2882, հրատ. № 715.
Պատվեր № 158, տիտագ 10,000
Թղթի չափսը $84 \times 110^{1/32}$ (32.550 տպ. նիշ. 1 տպ. մամուռ.
6 տպ. մամուռ, 3 թեքթ թուղթ.
Հանձնվել ե արտադրության 11/VIII 1939 թ.
Ստորագրվել ե տպագրելու 26/IX 1939 թ.
Գինը 1 ո.

Պետհրատ-Քաղաքական գրականության հրատարակչության
տպա չան, Եկրևան, Ալահվերդյան № 65

509

11

28399

ԳԻՒԾ 1 թ.

Г. АЛЕКСАНДРОВ
ФИЛОСОФСКИЕ ПРЕДШЕСТВЕННИКИ
МАРКСИЗМА

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939